

ԱՐԴԻՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 11 1891

ՆՈՅԵՄԲԵՐ

1891 № 11

Ե Ր Թ Ո Ւ Դ Տ Տ Ա Ր Ի

Կ Բ Խ

1 ԳՈՐԾԻՆ, ՎՈՅՎՈԴ	1277	Ատալեա-պրինցը:
2 ՊՈՒԵԱՆՑ, Ա.	1287	Աստալէւախ առիթով,
3 ՆԱՄԱԼԵԱՆ, Ա.	1289	Փատրիկեանի նամակները:
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յ.	1304	*** (Բանաստեղծութիւն):
5 ՊԱՅԶՈ.	1305	Ճանապարհուրդ. վիշտութիւններ:
6 ԲԱՅՐՈՒՑ, ԼԵՈՆԵՆՑ.	1315	*** (Բանաստեղծութիւն):
7 ՄԱՐՔՈՒՄԵ, Մ.	1316	Հեղինէ (վիպ):
8 ՄԵԼԻՔ-ՇՈՀԱԶՈՐԵԱՆՑ, Ս.	1341	Վիթխարի ընկուզենի:
9 Ի-ՌԱ, Ի.	1350	Յուանսիխական երիտասարդութիւնը:
10 ԿԻՒԼԳԵՆԵԱՆ, Գ.	1364	Ազշերոնը և Բաքուի նաւթը, (վիրջ):
11 Ա. Ա.	1372	Նաւթ. գործի մաս. տեղեկութիւններ:
12 ՄԱՆՈՒՔՈՐԵԱՆ, Մ.	1377	Զեյցերիխական պետութիւնը, (վիրջ):
13 ՊԱԶՈՐԵԱՆՑ, Մ.	1390	«Աղիչի պատմութիւնը» Վուկաս:
14 Ն.	1398	«Երացոց» 1892 թ. Նողարիսնի:
15 ԼՈՒՄԻԲ.	1400	Ամուալ քրոնիկ.—Սովոր Ռուսաստանում: — Վիւզական խնդիրներ: — Հայանատիկների առեւտորը և արտահանման արդելքը: — Աղնաւականների բանկը: — Թատրոն:
16 ԵՍԵՄԵԱՆ.	1412	Օրէ ցօր:
17 ԽՄԲ.	1418	Խմբագրութիւն կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Դ. ԱՇՏԻԵԽԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Տպոգրաֆія М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1891



ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 11 1891

Ն Ա Յ Ե Ս Բ Ե Ր

1891 № 11

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԱՕՏԻՇԵԱՆՑԻ
1891

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Ноября 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41-

IV ՏԱՐԻ ՄՈՒՐՃԱՌ ԱՎԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱՏՈԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի Ւ

1892

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ է

ՄՈՒՐՃԱՌ ամսագիրը կը հրատարակեի 1892 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախոկին տարիներում:

ՄՈՒՐՃԱՌ կը հրատարակեի ամեն ամիս 8—10 թերթ մլ.ծովթեամբ, առելին կախւած կը լինի բաժանորդների թւից:

ՄՈՒՐՃԱՌ ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1892 թւականին կը բազկանայ թէ ինքնուրոյն վէտերից ու վէպիկներից և թէ թարգմանականներից: Առաջին անգամ այդ տարւանից «Մուրճ»-ում տեղ կը գտնեն գրամաներ և թարգմանական մլ.ծ վէպեր: Առաջին զրաման «Մուրճ» ում ի նկատի է առնւածու: Լեռն Մանուէլեանի «Տիգրանուշին», իսկ առաջին մլ.ծ թարգմանական վէպը կը լինի Սենկեւիչ: Առանց դաւանանքիւն: Այսպիսով, իւր վիպական բաժնում «Մուրճ»-ը գալ տարի կը տայ 1) Մի ինքնուրոյն մլ.ծ վէպ կամ զրամա, 2) Մի քանի ինքնուրոյն փոքրիկ վէպեր կամ պատմածածքներ, 3) Մի մլ.ծ թարգմանական ռուման և 4) մի քանի մանր թարգմանական պատմածքներ նշանաւոր հեղինակների:

«ՄՈՒՐՃԱ-ի ցայտմեայ մշտական բաժինները կը մնան նուև գալ տարի, այն է 1) Յօդւածներ կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ), 2) Յօդւածներ հասարակական բնիմացիկ կարևոր խնդիրների մասին (Ներքին Տեսաթիւն, Ամսւայ Քրոնիկ), 3) Յօդւածներ քաղաքական անդքերի և լնդհանուր զրութեան մասին (Քաղաքական տեսութիւն), 4) Գրական լնդպարձակ քննադատութիւններ, 5) Յօդւածներ լնդժայիկ զրականութեան վերաբերեալ (Գրախօսութիւն), 6) Յօդւածներ զիտութեան այլ և այլ ճիւղերից (Գիտական բաժին), 7) Խոմաններ, վէպիկներ, պատմեածքներ, 8) Բանաստեղծութիւններ 9) Ֆէլյուսն:

«ՄՈՒՐՃԱ-ում ցայտմ ոչ մշտական եղած բաժինները, այն է, ա) Գաւառական քրոնիկ, բ) Խոմաններ, գ) Արտասահմաննեան քրոնիկ կ'աշխատենք աւելի կանոնաւոր գարձնել:

Յախանում ենք նուև, որ գալ տարի մենք մեծ ջանք պիտի զործ զնենք՝ «Մուրճա-ը առնեն ամփս զուրս բերել ճիշդ միենոյն օրը»:

«ՄՈՒՐՃԱ-ի տարեկան բաժանորդագինն է 10 սուբլի, որ կարելի է վճարել 5 ս. ստորագրելիս և 5 ս. մինչ 1-ն յուլիսի Ուսուցիչները և ուսուանողները վճարում են զիջումով, այն է տարեկան 8 սուբլի, որ թող է տրում վճարել՝ ստորագրելիս 3 ս., մարտին 3 ս. և յունիսին 2 սուբլի:

Սկզբնական հասցէների վտվորութեան համար վճարում է 28 կոպէկ պատոի մարկաներով:

ԲԱԺԱՆՈՐԴԻ զրւելու համար զիմել կամ խմբագրաստոնը (Պաֆլու).
Въ редакцио журиала МУРЧТ), կամ մեր զործակալներին, որոնց անւանացուցակը տպւած է «Մուրճա-ի կազմի թղթի վերջին երեսին:

ATTALEA—PRINCEPS

ՎԱԵՎՈԼՈԴԻ ԳԱՐՇԻՆԻ

Մի մեծ քաղաքում մի բուսական ազգի կար և այդ այգու մէջ — մի ահազին օրանժերէա, շինած ամբողջովին երկաթից և ապակիներից: Նատ գեղեցիկ էր նա. կանգուն, ոլորուն սիւները բռնածպահում էին ամբողջ շինութիւնը, որոնց վրայ ամբացրած թեթև քանդակակերտ կամարները, հիւսւելով՝ միմեանց հետ երկաթի շրջանակների կառարեալ ցանցով, զարդարւած էին ապակիներով: Մանաւանդ գեղեցիկ էր օրանժերէան, երբ արեգակը մայր էր մանում ու լուսաւորում նրան խր վերջին կարմիր գոյներով: Նա այդ ժամանակ ասէք ամբողջութեամբ այրում էր. արեկի շառագունած շողքերը խաղում և խառնուում էին միմեանց հետ, կարծէք, դա լինէր մի մեծ՝ խիստ մանր յղկած, թանկաղին քարի մէջ:

Հաստ բայց թափանցիկ ապակիների միջից երեւում էին բանտարկւած բոյսերը: Զը նայած օրանժերէաի մեծութեանը — նա նրանց համար խիստ նեղ և արձակ էր: Արմատները ակամաչից հիւսւում էին միմեանց հետ ու խլում իրարից խոնաւութիւնը և անունդը: Ծառերի ճիւղերը խառնուում էին արմատենիների ահազին տերեւների հետ, կռացնում ու կոտրատում նրանց, և, իրանք, ըստ հերթին, դէմ ընկնելով երկաթի շրջանակներին, նոյնպէս կռանում և կոտրատում: Այգեալանները միշտ կոտրում էին նրանց ոստերը, կապում էին լարերով տերեւները, որպէս զի նրանց չը կարողանան աճել ազատ դէպի ամեն կողմ,—բայց դա շատ քիչ էր օգնում: Բոյսերի համար, երեւում էր, հարկաւոր էր լայնարձակ տարածութիւն, հաջրենի երկիր և ազատութիւն: Նրանք տաք երկրների զաւակներ էին,

քնքոյց շքեղաշուք արարածներ. նրանք մտաբերում էին իրանց հայրենիքը և սրոնեղում: Խնչքան և թափանցիկ չէ ապակեաչ ծածկոյթը, բայց նա, դարձեալ ի հարկէ, ջինջ երկինքը չէ: Երբեմն, ձմեռն, երբ ապակիները սառչում էին, —տիրում էր սարսափելի միմութիւն օրանժերէայում: Քամին ոռնում էր, զարնւում շրջանակներին և գողգողացնում նրանց: Ամբողջ կամարը պատում էր մանր, քնքուշիկ ձիւնի կեղեռվ: Բոյսերը կանգնած՝ լսում էին քամու ոռնալլը և մտաբերում մի այլ, տարբեր քամի, տափակ և խոնաւային, որը նրանց կեանք և առողջութիւն էր տւել: Եւ նրանք ցանկանում էին կրկին զգալ այդ քամու շնչառու ոգին, ցանկանում էին, որ նա շարժէր իրանց ձիւղերը, խաղար իրանց տերեւների հետ: Բայց օրանժերէայում օդը անշարժ էր. միմիայն ժամանակից-ժամանակ ձմեռւան մրրիկն էր, որ կոտրում էր ապակին և ներս մտցնում եղեամով լիքը ցուրտ հոսանքը կամարի տակ. և այդ ժամանակ ամենուրեք, ուր մտնում էր այդ հոսանքը, տերեւները գունաթափում էին, կուչ գալիս և թառամում:

Բայց ապակիները շատ շուտ էին զցւում: Բուսաբանական այգու կառավարողը մի չափազանց գիտուն տեսուչ էր և նա ոչինչ անկարգութիւն չէր թոյլատրում օրանժերէայի մէջ, չը նայած որ իւր օրերի մեծ մասը նա գործադրում էր խոշորացոցի վրայ իւր առանձին խուցում: որը շինւած էր այն զլսաւոր օրանժերէայի մէջ:

Բոյսերի մէջ, բոլորից բարձր և բոլորից գեղեցիկ, մի արմաւենի կար: Խուցում նասող տեսուչը անւանում էր նրան լատինական լեզւով Attalea. բայց այդ անունը նորա իսկական անունը չէր. նրան հնարել էին բուսաբանները: Նորա իսկական անունը բուսաբաններին յայտնի չէր և հենց գորա համար էլ նա գրւած չէր սպիտակ տախտակի վրայ սև մուրով ու կպցրած ծառի բունին: Մի անգամ այդ բուսաբանական ազգին եկաւ մի նորեկ այն տաք երկրից, որտեղից-որ էր այդ արմաւենին և, երբ որ նա նրան տեսաւ, իսկայն ժպտաց, որովհետեւ արմաւենին ցիշեցրեց նրան իւր ծննդավայրը:

—Աս... ասաց նա, ես ճանաչում եմ այս ծառը: Եւ նա առեց այդ ծառի անունը:

—Ներեցի՞ք, —աղաղակից իւր խուցից տեսուչը, որն այդ ժամանակ ուշադրութեամբ կարառում էր ածելով մի ինչ-որ ձիւղ, —

դուք սիալում էք: Այնպիսի ծառ, ինչպէսին դուք բարեհաճեցիք
անուանել—չը կաց: Սա Attalea-Princeps-ն է¹⁾), Բրազիլիայից բերած:

—Ի... ի հարկէ, —ասաց բրազիլիացին, —ես կատարելապէս հա-
ւասում եմ ձեզ, որ բուսաբանները նրան Աստալէա են անուանում.
բայց և այնպէս, նա ունի իւր իսկական անունը:

—Նորա իսկական անունը նա է, ինչ որ տալիս է գիտութիւնը—
սառնութեամբ պատասխանեց բուսաբանը ու փակեց իւր խուցի
դուռը, որպէս զի նրան չը խանգարեն մարդիկ, որոնք չեն հասկա-
նում մինչև անգամ, որ նորա առաջ՝ ինչ-որ ասեց մի անգամ գի-
տութեան մարդը, պիտի լոել և ընդունել:

Իսկ բրազիլիացին երկար կանգնած՝ նայում՝ էր ծառին և աւելի
և աւելի ախրամտում Յիշեց նա իւր հայրենիքը, հայրենիքի արե-
գակը և երկինքը, նորա շքեղ անտառները, նորա հրաշալի հրա-
ւաշին գիշերները: Մատաքերեց նա նոյնպէս, որ ինքն ոչ մի տեղ բաղ-
դաւոր չի եղել, բացի իւր հայրենի երկրից, —իսկ նա ամբողջ աշ-
խարհը պտտել էր: Նա ձեռը կպցը եց արմաւենուն, կասես, մնաք
բարե էր ասում նրան և հեռացաւ այգուց. իսկ միւս օրը նա շո-
գենաւով արդէն գնում էր տուն:

Իսկ արմաւենին մնաց: Նորա համար օրերն էլ աւելի ծանրա-
ցան, թէև մինչեւ այդ օրը նրանք շատ էլ թիթէ չեն: Նա բոլո-
րովին մենակ էր, ամբողջ հինգ սաժէնով նա բարձր էր բոլոր մնա-
ցած ծառերից, և այդ բոլոր մնացած ծառերը նրան չեն սիրում,
նախանձում էին և գուռզ էին համարում: Այդ հասակը նրան միայն
ցաւ էր պատճառում. բացի նրանից, որ նրանք բոլորը միասին էին,
իսկ ինքը—մենակ, նաև ամենից լաւ էր յիշում իւր հայրենի արե-
գակը և ամենից շատ էր վշտանում նորա մասին, որովհետեւ ամե-
նից աւելի մօտ էր այն բանին, որը փոխարինում էր նրան—գար-
շելի ապակեաչ ծածկոյթին: Նորա միջով նրան երեւում էր երբեմնա-

¹⁾ «Ենչպէս-որ մեղանից իւրաքանչիւրին մեր և մեր հօր անունն են
տալիս—յիշում եմ, ինչպէս սրամտեց մի անգամ իւր զասախօսութեան
ժամանակ մեր բատանիկաի պրաֆեսոր Խլ. Բօրօղին, —այնպէս էլ զիտնա-
կանները բոլուրին և կենդանիներին երկու երկու անուն են տալիս»:

պէս մի ինչոր կապոյտ բան. դա երկինքն էր, թէև օտար և գուռնատ, բայց և այնպէս էլի երկինք: Եւ ամեն անդամ, երբ բոյսերը սկսում էին զրուցել միմեանց հետ, Attalea-ն միշտ և միշտ լուռ էր և տխուր, և մոռածում էր միացն նորա մասին, թէ ա'լս ինչքան լաւ կը լինէր դուրս գալ ու կանգնել հէնց մինչև անդամ այդ գուռնատ երկնքի տակ:

— Ասացէք, ինզրեմ, մեզ շուտով պիտի ջրեն, — հարցրեց սագոտու արմաւենին, որը թացութեանը շատ էր կարօտում: Ես, ճշմարիտ որ, պիտի այսօր չօրանամ:

— Ինձ զարմացնում են ձեր խօսքերը, զրացիկս, — ասեց փորը գուրս լնկած կակտուսը: Մի՛թէ, ճշմարիտ, քիչ է ջրի այն ահագին քանակութիւնը, որ ամեն օր ածում են ձեզ վրայ: Խնդրում եմ նայեցէք ինձ վրայ. ինձ ամեն օր շատ քիչ ջուր են տալիս, — բայց և այնպէս, ես միշտ թարմ եմ և ջրալի:

— Մենք սովոր չենք այդքան շափից-դուրս ժլատ կեանքի, — պատասխանեց սագոտու արմաւենին: Մենք չենք կարող աճել այնպիսի չոր և անպէտք հողի վրայ, ինչպէս մի որ և է կակտուս: Մենք չենք սովոր ապրել ինչպէս և իցէ: Եւ բացի այդ բոլորից՝ ես այն էլ պիտի ասեմ, որ չեմ խնդրում ձեզ նկատողութիւններ անել:

Սի ասելով սագոտու արմաւենին վիրաւորւեց ու սուս կացաւ:

— Իսկ ինչ որ վերաբերւում է ինձ, — մէջ մոտաւ դարչենին, — ես դրեթէ բաւական եմ իմ զրութիւնից: Ճշմարիտ է, այսուեղ մի քիչ տխուր է, բայց գոնէ ես հաւասար եմ, որ ինձ այսուեղ ոչ-ոք չի կեղեքի:

— Դէ՛հ, խօ՛մ ձեզ բոլորիդ էլ չեն կեղեքի — ասաց ժառանման ձարխոտը¹⁾: Ի հարկէ շատերին կարող է արքացութիւն երևալ և այս բանդը նոյն թշւառ կացութիւնից յետոյ, որը նրանք կրել են ազատութեան մէջ:

Այսուեղ դարչենին մոռանալով, որ ինքն ինչպէս շատ անդամ կեղեքւել է, վշասցաւ ու սկսեց վիճել: Մի քանի բոյսեր նրա կողմն անցան, մի քանին — ձարխոտի, և սկսեց ջերմ ցիշոցարանութիւնը: Եթէ նրանք կարողանային շարժւել տեղերիցը — անսպատճառ կը կուէին:

1) Պայորտնիք.

— Ի՞նչու էք զիմում, — ասաց Attalea-ն: Մի՞թէ այդպիսով կարծում էք օգնած կը լինէք դուք ձեզ. զայրացմամբ և շարանալով դուք բազմապատկում էք միայն ձեր անբաղդութիւնը: Լաւն այն է, թողէք ձեր վիճը և մտածեցէք գործի մասին: Ականջ դրէք ինձ, անեցէք բարձր և դէպի ամեն կողմ: տարածեցէ՛ք ոստեր, հրեցէք շրջանակներին և ապակիներին. օրանժերէան կոորդինոր կը դառնայ, մենք դուրս կը գանք ազատութիւն: Եթէ միայն մի ճիւղ դէմ ընկնի ապակիին, նրան, իհարկէ, կը կորեն. բա՛ց ի՞նչ կանեն հարիւր ուժեղ և համարձակ բուների հետ: Հարկաւոր է միայն համերաշն գործել և յաղթութիւնը մեր կողմը կը լինի:

Սկզբից արմաւենուն ոչ-ոք չը հակառակեց. բոլորն էլ լոել էին և չը գիտէին ի՞նչ ասէին: Վերջապէս սագօտու արման ենին վճռւեց խօսել:

— Դրանք բոլորն էլ յիմարութիւններ են, — յայտարարեց նա:

— Յիմարութիւններ են, յիմարութիւններ, — ասացին ծառերը և սկսեցին միասին, խմբովին բացատրել Attalea-ին, որ նա սարսափելի մեծ անմտութիւն է առաջարկում: Անիրազործելի ցն՛ք, — գոռացին նրանք. ցն՛ք, ա՞նհաւանականութիւն: Առաջինը՝ շրջանակները շատ պինդ են և մենք նրանց երբէք չենք կոորի և, երկրորդ, եթէ կոորէինք էլ, ախր որ ի՞նչ յետոյ: Կը զան մարդիկ դանակներով և կացիններով, կը կոտորեն ճիւղերը, կը շմնեն շրջանակները և բոլորը կրկին կը լինի իւր առաջւայ կարգը: Միայն նա կը լինի, որ մեզանից ամբողջ ճիւղեր կը կորատեն...

— Դուք էք յիմանում, ինչպէս կուզէք, — ասաց Attalea-ն: Ես միայն գիտեմ հիմա, թէ ինչ կանեմ: Ես ձեզ այլ ևս չեմ խօսացնի. ապրեցէք, ինչպէս ուզում էք. մըումըուացէք միմևանց վլայ, կուեցէք ջրի համար և մնացէք յաւիտեան այդ ապակեայ կալպակի տակ: Ես մենակ էլ կը ճարեմ իմ ճանապարհաւ: Ես ո զում եմ տեսնել երկինքը և արեգակը ո՛չ այս վանդակների և ապակիների միջոցով: — և ես կը տեսնեմ:

Եւ արմաւենին խրոխտութեամբ նայեց իւր բարձր կանաչ գագաթից իւր լնկերների վրայ, որոնք կանգնած էին նրա ստորոտում և կազմում էին ամբողջ անտառ: Նրանցից ոշոք չը համարձակւեց այլ ևս ոչինչ ասել, միայն սագօտու արմաւենին կամացուկ նկատեց իւր հարկան ցիկալախին.

— և ա՛ւ, կը տեսնենք. կը տեսնենք ինչպէս կը կարեն քո գլուխը, որպէսզի դու շատ չը մեծամուես, խրո՛խտ:

Միւսներն թէև լրել էին, բայց այնու ամենայնիւ էլի բարկառում էին Attalea-ի վրայ նորա խրոխտ խօսքերից: Միայն փոքրիկ խոտն էր, որ չէր բարկանում նորա վրայ և վիրաւորւում նորա խօսքերից: Դա ամենաթշշառ. և կարելի է ասել արհամարական խոտն էր օրանժերէայի բոլոր բոյսերի մէջ. փխրուն, դալկացած, սողուն, թարշամած և հասոլիկ տերեւներով: Նորա մէջ նշանաւոր ոչինչ չը կար և գործ էր ածւում օրանժերէայում լոկ մերկ գետինը ծածկելու համար: Նա փաթաթւել էր մեծ արմաւենու ստորոտով, ականջ էր զնում նրան և նրան թւում էր, թէ Attalea-ն արդար է: Նրան յայտնի չէր հարաւային բնութիւնը, բայց նա այնպէս սիրում էր օդը և ազատութիւնը: Օրանժերէան նորա համար նոյնպէս բանդ էր: «Եթէ ես, չնչին թարշամած խոտիկս, այսպէս տանջւում եմ առանց իմ մոխրագոյն երկնքի, առանց իմ գունատ արեգակի և ցուրտ անձրեի, հապա ի՞նչ պիտի կրէ բանտարկութեան մէջ ացդ գեղեցիկ և խրոխտ ծառը»:

Այսպէս մտածում էր նա, քնքութեամբ փաթաթւում արմաւենու շուրջը և զգւում նորան: «Սիր ի՞նչու ես մեծ ծառ չեմ: Ես կը լսէի նորա խորհրդին, մենք միասին կաճէինք և միասին դուրս կը գայինք ազատութիւն: Այն ժամանակ միւսներն էլ կը տեսնէին, որ Attalea-ն արդար է:

Բայց նա մեծ ծառ չէր, այլ միայն և եթ փոքրիկ և թարշամած խոտիկս: Նա զեռ ևս կարող էր փաթաթւել Attalea-ի բունով, շշնջալ նրան իւր սէրն և ցանկալ նրան աշողութիւն նորա ձնոնարկութիւնների մէջ:

— Ի հարկէ, մեզ մօտ երբէք այնպէս տաք չէ, երկինքը այնպէս պարզ և անձրւները այնքան ճոխ չեն, ինչպէս ձեր կողմիրում, բայց և այնպէս, մեզ մօտ էլ կան և երկինք, և արեգակ, և հողմ: Մեզ մօտ չը կան այնպիսի շքեղ բոյսեր, ինչպէս դուք և ձեր ընկերներդ էք, ացդպիսի ահազին տերեւներով և սքանչելի ծաղիկներով, բայց, այնու ամենայնիւ, մեզ մօտ էլ են բանում շատ լաւ ծառեր՝ եղեին, սօճի, թխտինի: Ես մի փոքրիկ խոտ եմ և երբէք չեմ հասնի ազատութեան, բայց, ախր, դուք այդչափ մեծ և հուժկու-

էք։ Զեր բունը ամուր է և ձեզ քիչ է մնացել հասնելու ապակեաց ծածկոյթին։ Դուք կը փշրէք նրան և դուրս կը գաք աստւածային աշխարհ։ Այն ժամանակը դուք կը պատմէք ինձ, արգեօ՞ք այնտեղ բոլորն էլ այժմն նոյնքան գեղեցիկ են, ինչպէս որ էին։ Ես կը բաւականանամ և զրանով։

—Ախր ի՞նչու, փոքրիկ խոռ, դու չես ուզում՝ զուրս գալ ինձ հետ միասին։ Իմ բունը հաստ է և պինդ. յենւիր նորա վրայ և սողիր նրանով։ Քեզ տանելն ինձ համար ոչինչ չարժէ։

—Ե՛հ, չ՛. —Ե՛ս ուր. նայեցէ՞ք, ի՞նչպէս թարշամած և տկար եմ ես. ես չեմ կարողանում բարձրացնել իմ մի ճիւղս անգամ։ Չէ՛, ես ձեզ ընկեր չեմ։ Աձեցէ՞ք, բաղդաւոր եղէ՞ք։ Միայն, ինոգորում եմ, երբ դուրս եկաք ազատութիւն, մտարերեցէ՞ք երբեմնապէս ձեր փոքրիկ բարեկամին։

Այդ ժամանակ արմաւենին սկսեց աւելի և աւելի մեծանալ։ Օրանժերէաի այցելուները սկզբում զարմանում էին նորա ահազին հասակով, իսկ նա ամսից-ամիս աւելի և աւելի էր բարձրանում։ Բուսաբանական այգու տեսուչը այդպիսի սրբնթաց աճումը վերագրում էր իւր լաւ հոգատարութեանը և հպարտանում էր իւր գիտութիւնով, որով նա շինել էր ջերմասենեակը և առաջ էր տանում իւր գործը։

—Այո՛, նայեցէ՞ք Attalea-princeps-ին, —ասում էր նա։ Այսպիսի գեղահասակ օրինակներ նրազիլիայումն անգամ շատ սակաւ են պատահում։ Մենք գործ զրինք մեր բոլոր հմտութիւնը, որպէս զի բոյսերը ջերմասենեակում աճեն նոյնպէս ազատ, ինչպէս և ազատութեան մէջ, և, ինձ թւում է, թէ մենք հասել ենք այդ կողմից արդէն նշանաւոր առաջադիմութեան։

Այս ասելով, նա ինքնաբաւականութեամբ մի քանի անգամ խփեց իւր ձեռնափայտով արմաւենուն և հարւածները զանգակածայն թնդացին ջերմասենեակի մէջ։

Արմաւենու տերեւները սարսրուեցին այդ հարւածներից։ Աւա՛զ, եթէ նա իմանար հառաչելլը, զայրոյթի ինչպիսի գոռոց պիտի լսէր տեսուչը։

—Նա երևակայում է, իբր թէ ես բանում եմ նորա բաւականութեան համար, —մտածեց Attalea-ն։ Թո՛ղ երևակացէ։

Եւ նա սկսեց աճել, գործադրելով իւր բոլոր հիւթերը միակ ձգւմու վրայ, զրկելով նրանցից իւր արմատները և տերևները: Երբեմն նրան թւում էր, որ կամարից հեռաւորութիւնը չի փոքրանում: Այդ ժամանակ նա լարում էր իւր բոլոր ոյժերը: Երջանակները աւելի և աւելի մօտենում էին նրան և ահա՛, վերջապէս, երիտասարդ տերեւը կպչում է սառած ասպակին և երկաթին:

— Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, — ասացին բոյսերը: տեսէ՛ք ի՞նչուղ է գնացել: Զը լինի թէ վճռւի:

— Ի՞նչ անենք, որ աճել է: Ի՞նչ մի չը տեսնւած բան է: Ահա՛, եթէ նա կարողանար հաստանալ ինձագէս, — դա դեռ ևս հասկանալի կը լինէր, — ասաց հասողիկ տակառաձեւ բունով ցիկազան: Ախր ո՞ւր է մեկնուում: Բայրն մի է. ոչինչ չի կարողանալու անել: Երջանակները ամուր են և ասպակիները հաստ:

Մի ամիս ևս անցաւ: Attalea-ն բարձրանում էր: Վերջապէս, նա ահա պինդ սեղմեց շրջանակներին: Բանելու այլ ևս տեղ չը կար: Այդ ժամանակ բունը սկսեց ծուել. սաղարթախիտ գազաթը ճիլւեց. շրջանակների ցուրտ փայտերը հպւեցան ջահիլ քնքոյշ տերեներին, կոտրտեցին և այլանդակեցին նրանց, բայց ծառը յամառ էր, չէր խնայում տերեներին և չը նայելով ոչնչի, ճնշում էր վանդակներին, և, ահա՛, վանդակները սկսել էին անձնասուր լինել: թէև շինւած էին ամենասամուր երկաթից:

Փոքրիկ խոտը հետեւում էր այդ մաքառման և սրտաճմլւում էր ալեկոծութիւնից:

— Ասացէ՛ք ի՞նձ, միթէ ձեզ ցաւ չէ տալիս: Եթէ ըջանակները այդքան ամուր են, լա՛ւ չէր լինի եթէ կենացիք, — հարցրեց նա արմաւենուց:

— Ցաւ չէ տալիս: Ի՞նչ կը նշանակէ ցաւ տալ, երբ ես ուղղում եմ դուրս գալ ազատութիւն: Միթէ դու չէիր, որ խրախուսում էիր ինձ, — նկատեց արմաւենին:

— Այո՛, ես խրախուսում էի, բայց չը դիտէք որ դա այդպէս պժւար է: Խեղճս էք գալիս: Դուք ա՛յդպէս շարչարւում էք:

— Լոի՛ր, թշւա՛ռ բոյս: Ինձ մի՛ խնացիլ: Ես կը մ.ոնեմ, կամ կազառւեմ:

Եւ հէնց այդ բոպէին լսեց մի սուր, զանդակաձայն ճռառոց:

կոտրւեց երկաթի հաստ շերտը։ Թափւեցին և զօղանջեցին ապակիի կոտրտանքները։ Նրանցից մէկը կալաւ տեսչի գտակին, որն այդ բռակէին դուրս էր գալիս օրանժերէացից։

—Սա' ինչ է, —հեծկտաց նա, վեր թռչելով և տեսնելով օդի մէջ թռչող ապակիի կոտրները։ Նա դուրս վազեց նորա օրանժերէացից և նայեց ծածկոցին։ Ապակեայ կամարի միջով խրոխտութեամբ ցցւած էր արմաւենու ձգւած կանաչ գագաթը։

—Միմիան, —մասձեց արմաւենին ինքն-իրան։ Եւ միթէ սա է բոլորը, ինչի համար չարչարւել և տառապել եմ այսքան ժամանակ։ Եւ միթէ միան օրան համնելն էր ինձ այրող փափագը։

Խորին աշուն էր, երբ Attalea-ն դուրս ցցւած կանգնած էր փշրւած ծածկոցի միջով։ Մաղում էր թեթև ձիւնախառն անձրեւը. քամին քշում էր ցած ամողերի մոխրագոյն գահակները։ Նրան թռում էր, որ նրանք գրկում են իրան։ Ծառերը արդէն մերկացել էին և մի-մի այլանդակ մեռեալներ գարձել. միմիան սօճիի և մաշ-րերի վրայ էին մնացել մութ կանաչագոյն ասղնատերեւները։ Մառերը դառնալից նայում էին արմաւենուն։ «Կը սառչես, —կարծես ասում էին նրան, —դու չը գիտես թէ, ինչ բան է սառնամանիքը։ Դու չես կարող դիմանալ. ի՞նչու դուրս եկար քո ջերմասենեակից։

Եւ Attalea-ն իմացաւ, որ նրա համար ամեն բան վերջացած է։ Նա սառչում էր։ Կրկին վերադարնա՞լ ծածկոցի տակ։ Բայց նա այլ ևս անկարող է այդ անել։ Նա պիտի կանգներ ցրտահար հող-մում, զգար նորա խոտութիւնները, ձիւնի սրակառուր շփումները, նայէր կեզտուս երկնքին, աղքատ բնութեանը, բուսաբանական այգու ետևի աղբուս սրահին, մեծ տաղտկալից քաղաքին, որը նշմարւում էր քշաթղափ մէջ, և սպասէր մինչև մարդիկ այնուեղ՝ ջերմասենեակում, չեն վճռի թէ ինչպէս վարւեն նորա հետ։

Տեսուչը հրամայեց սղոցել ծառը։ «Կարելի էր նորա վրայ մի առանձին կալվակ կառուցանել—ասաց նա, —բայց դա միթէ կարող է երկար տեսել։ Նա կրկին կը բանի և բոլորը կը կոտրատի։ Բացի գորանից, ել դա շատ թանգ կը նատի։ Սղոցել նրան։»

Թոկերով կապեցին արմաւենուն, որպէսզի նա լնկնելուց՝ չը փշրի ջերմասենեակի պատերը և ցածից, առի և արմատից, սղոցեցին նրան։ Փոքրիկ խոտը, որ փաթաթւել էր ծառի բունով, չուզեց

անջասւել իւր բարեկամից և նոյնպէս սղոցի տակ ընկաւ։ Երբոր արմաւենուն դուրս քաշեցին ջերմասենեակից, կտրած կոճղի վրայ տապալում էին սղոցով տրորած, պատառուած ճիւղերը և տերեները։

—Պոկել այս անպէտք բանը և դուրս զցել, —ասաց տեսուչը։ Նա արդէն դեղնել է, և սղոցն շատ է փչացրել։ Սյստեղ մի ուրիշ նոր բան պէտք է տնկել։

Պարտիզաններից մէկը բահի հմուտ մի հարւածով դուրս բերեց խոտի մի ամբողջ խոխաւ։ Նա զցեց նրան զամբիւղի մէջ, դուրս տարաւ և թափեց ետևի սրահում ուղիղ մեռած արմաւենու վրայ, որն ընկած էր ցեխի մէջ և արդէն կիսաթաղւած ճիւնով։

ԱՍՏԱԼԵԱՅԻ ԱՌԻԹՈՎ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Պ. Ա. Խ. Ե Ա Ն Ց Ի

Որովհետեւ այս գրւածքը, իւր լուս տեսնելով, կասկած և տարածաչ-
նութիւն առաջ բերեց ոռու ընթերցող դասի մէջ իւր մէջ ամփոփող զա-
ղափարի վերաբերմամբ,—վասնորու ես ասելորդ չեմ համարում մի բա-
ցատրական պատասխան տալ այդ իմ թարգմանութեան վերաբերմամբ:
Ռուսաց ընթերցողներից մի քանիսը—երբ Attalea-princeps ը հրատա-
րակւեց—այն կարծիքին էին, որ Վասնելով Գարշին իւր այդ գրւածքով
մտադրում է մի ապտակ հասցնել ինտելինգենցիաի առաջնակարգ զա-
սին, որի համար նա, ի հարկէ, հնթարկում էր, ալսպէս ասայ, անպատ-
ման «զինուրական դատի»։ միւս մասը—ես խօսում եմ ոռու ընթերցողի
լաւ և բարեմիտս դասի մասին—աշխատում էր մի կոմպրոմիսական բա-
ցատրութիւն որոնել այդ գրւածքի տարածադնութիւն ծննդող կոորդ մա-
սին, աչքի առաջ ունենալով անկատկած Գարշինի ամբողջ գրականական
չարգը և պատիւը։ Ակաբիշեսկին, օրինակ, ասում է. Ատառալէաի լուսա-
հատական բացականչութիւնը կատարելապէս բնական—այս խօսքերի մէջ
ես կարդում եմ, ինչպէս արտաքաջանեցի, կոմպրոմիսն—և հասկանալի է,
եթէ ի նկատի ունենանք այն տխուր և լուսակտուր մթնոլորդը, ուր հան-
դէս են գալիս մեր այդ առաջնակարգ մարդիկ իրանց դործունէութեան
միջոցին։

Գրւածքի այն կոորը, ուր Ատառալէան լուսահատական գուցոց է ար-
ձակում—այն աստիճան շշկլայրել էր շատերին, որ մինչեւ անգամ ուժանք,
ձեռնարկելով նորա թարգմանութեանը—օրինակ Աղբիւրը—հարկաւոր
էր համարել նրան դուրս գցել ամբաղջովին։ Ինչպէս չը լինի այդ կոորի
բացատրութիւնը,—բայց, ես կարծում եմ, մի անգամ արդէն ձեռնարկե-
լով նորա թարգմանութեանը—պէտք է թարգմանել նրան ամրող ջուրին,
իւր բոլոր հարազատաւթեան և ամբողջաւթեան մէջ։ (Ճինց այս տեսա-

կէաից ես ընդունում եմ, որ Ատտալէաի հազկական թարգմանութիւնը չը կաէ։ Դա պահանջում է ոչ թէ գրւածքի անհատական անձեռնմխելութիւնը, այլ և Գարշինի ամբողջ անունը և գրականական լարգը ընթերցող դասի մէջ։ Ադրբէս վարեւլ—կտորներ դէն ցցել գրւածքի միջից—կարելի է միմիան երկրորդական և երրորդական գրողների հետ, երբ նուն իրանք գրողները, շատ անգամ չը զիտեն, թէ ինչ են գրել և ինչի համար են գրել աց բոլորը, Բայց այդպէս վաւ ւել Գարշինի հետ—անկարելի է, դատապարտելի է։

Ես թարգմանեցի այս գրւածքը նորա համար, որ նա պատկանում է մի աճնպիսի վերին աստիճանի լարգելի և պատւական գրողի, ինչպէսին է Վանվորտ Գարշին, որի իւրաքանչյւր գրւածքը—ինչպիսի մեծ թերութիւններ և չը բովանդակէ նա մասնաւորապէս աճնուամենաւինի արժանի է մեր ընթերցողի կողմից ամենալուրջ ուշագրաւթեան և կրիտիկալի։ Երկրորդ, նա չօշափում է իւր ամբողջութեան մէջ մի աճնպիսի նուրբ և քնքուշ առարկաւ, ինչպէսին է ոռւսաց ինտելիգենցիաի առաջնակարգ դասի խընդիրը,—որ նորա մասին կարծիքը նոյնպէս առաջնակարգ գրողի կողմից, ինչ աստիճանի նա և սխալ չը լինի մեր կարծիքով իւր տենդենցիաի մէջ,—դարձեալ պիտի մեզ համար վերին աստիճանի հետաքրքրական լինի. և, վերջապէս, երորորդ, ես ձեռնարկեցի այս գրւածքի թարգմանութեան նորա համար, որ նա—Attalea princeps-ը—իմ կարծիքով, Գարշինի ամենասիրուն, ամենապատկերական, կենդանի և, եթէ կուզէք, գեղարւեստական-ալէգօրիական գրւածքներից մէկն է,—որի ընթերցանութիւնը մեր հաջ ընթերցողի համար բնաւ չի կարելի անպէտք դատել։

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

ԻՄ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

Սէրելէ քո'յ թ

Վազուց է ցանկանում էի այցելել Գետաքեզի պղնձահանքը։
Նորա մասին շատ էի լսել և կարդացել։ Ուստի՝ արհեստագէտ Մու-
շեղեանի առաջարկութիւնը—գնալ պղնձահանքը և նորա շրջակացքը
տեսնելու—ես ընդունեցի մի առանձին ուրախութիւնով։

Երկաթուղու կառքում ես հետաքրքրւեցի խօսակցութիւններով
և դորանով խլեցի իմ հանգստանալու ժամերը։ Եւ թէև յետոյ ես
հետեւցի Մուշեղեանի օրինակին, սակայն իմ հանգստանալը շատ
չը տևեց։ Նուազով մեզ զարթեցրին։ Կայարան հասանք դարձեալ
գիշերը, բայց արշալոյսը արդէն սկսում էր և առաւօտը մօտ էր։

Իջանք թէ չէ սկսեցինք ուղեորւելու միջոցների մասին հարց
ու փորձ անել։ Մեզ հետ միասին իջաւ կառքից և մի պարոն, որ
տեսնելով մեզ՝ մօսիկացաւ, ծանօթացաւ և ոչ միայն զիւրացրեց
մեզ համար բոլոր մանր մունր հոգսերը, այլ և ինքը միացաւ մեզ։
Դա բժիշկ Բարսեղեանն էր, որ դործեր ունէր նոյնպէս պղնձահանքի
մօտերքը և որին շատ լաւ ծանօթ էր բոլոր շրջակացքը։

Նա բացարեց, որ կարող ենք ուղեորւել և սացլով, և ձի հե-
ծած։ Նա խորհուրդ տւեց վերջին տեսակ ճանապարհորդութիւնը
և խնդրեց, որ մենք թոյլ տանիք նորամն, որ նա նախազծի մեր
գնալու ուղին։ Նա այնպէս կարգադրեց, որ մենք մեր ամբողջ ճա-
նապարհորդութեան միջոցին կարողացանք տեսնել գիւղեր, և հայ,

և թուրք, և գուխօբօրի, և գերմանացիների և աջնուհետև նորից նստեցինք երկաթուղու կառքը:

Եւ այդպէս էլ արինք:

Մեր աւաշնորդուղեցոյց բժիշկը պատմում էր անդադար, պատմում էր աշխատով, զրաւիչ ձևով: Բժիշկ Բարսեղեանը ոչ միայն նկարագրում էր շրջակացքը, այլ և աշխատում էր զանազան կարծիքներ յայտնել զանազան երևոյթների մասին: Մուշեղեանը, որ ուշադիր լսում էր նորա պատմածները, չէր ընդունում շատ կէտերում նորա յայտնած կարծիքները, բայց հարևանցի նկատողութիւններ էր միայն անում և չէր մոնում մեծ վիճաբանութեան մէջ:

Ահա բարձրանում ենք տափարակից և մանում ենք լեռների և ձորերի աշխարհը: Մեր թողած տափարակը սփռւում է մեր աշքերի առաջ, իսկ նորանից յետոյ հորիզոնը պարապւում է ուրիշ՝ աւելի մեծ՝ լեռնակոյտով: Լեռնային օդը թարմացնում է մեզ: Հրաշ' լի օդ: Մեր խօսակցութիւնները ընդհատում են. մենք լուս խորասուզւում ենք զանազան մատծութիւնների մէջ:

Բայց յոդնածութիւնը իրանը անում է: Զընայելով մեր մի երկու անգամ հանգստանալուն... մենք սկսեցինք զգալ մեր ճանապարհորդութեան ծանրութիւնը. և անշափ ուրախացանք, երբ հեռից տեսանք պղնձահանքի շինութիւնները, որոնք այնքան զանազանուում են մեր գաւառների սովորական շինութիւններից:

Իմ առանձին յօդւածից գու կը տեղեկանաս այստեղի պղնձահանքի մասին: Բայց մի բան, որ չեմ կարող այսուեղ չը լիշել, այդ այն տպաւորութիւնն է, որ անում են մարդու վերայ ամբողջ պղնձահանքը և նորա կառավարիչները: Կանոնաւոր գործը, մասնագիտական զարգացումը, լաւ կշռած և առհմանած կազմակերպութիւնը – ինձ վերայ մի ուրախ և մի և նոյն ժամանակ ձնշող ազդեցութիւն ունեցան: Այդ մտածւած և հաստատ դործի, այդ հաշւած և կանոնաւոր գործածւող խելքի առաջ՝ ես մոռացայ այն սարսափելի աւազակներին, որոնց մասին պատմում էր ճանապարհին բժիշկը: Այդ վայրենի քաջագործութիւնները դարձան իմ աչքում աննպատակ երեխացական խաղեր՝ զուրկ ներքին ոյժից, զուրկ ապագայից:

Պղնձահանքի կառավարիչը հարևանցի կերպով մեզ ժանօթացնում էր պղինձ սուանալու երեք եղանակների հետ. բայցարում էր

իրանց արած փորձերի շարժաւիթները և հետևանքները. համեմատում՝ էր իրանց անտառի փայտը և Բագուի նաւթը, իբրև վառելիքի նիւթեր, հաշում՝ էր իրանց շինած կարճ երկաթուղու տւածդիւրութիւնը... Մենք զգում՝ էինք, որ հնադարեան սարահարթը եկած այդ նոր հիւրերը՝ բոլորովին ուրիշ գործ են գործում, որ մարդկացին խելքը այդտեղ նւածումների ետեից է լնկած և որ նորան օգնական է հանդիսանում այն գիտութիւնը, որը չէ վախենում մեր լեռների աւազակներից և դեերից:

Պինձահանքից ուղղւեցինք դուխօբորների գիւղը, ուր մի փոքր հանգատանալուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը:

Հողը նոր էր զարթնում իւր ձմեռւայ քնից. այս ու այն խորշերում երեւում էին մատաղ կանաչի առաջին բողբոջները: Օդը զով էր և ամրացնող:

Ահա հեռւից երեաց Զ... հայ գիւղը: Բժիշկը խորհուրդ տւեց այդտեղ կարդին հանգատանալու: Մենք համաձայն եցինք:

Գիւղում իջանք բժշկի ցոյց տւած տանը: Մեզ լնդունեցին պատրաստականութիւն յայտնելով, բայց այնքան տակն ու վերայ եղան, որ ես ինձ գմւար դրութեան մէջ զգացի:

Բաւական մէծ սենեակում մեզ համար մաքուր գորգեր փուեցին, բարձեր դրին բոլորիս համար և հրաւիրեցին հանգատանալու: Յետոյ և թէյ բերին:

Բժիշկը իրեւ ծանօթ հարց ու փորձեր արաւ տանտերից գիւղի և մի քանի ծանօթ գիւղացիների մասին: Մի քանի ժամանակից յետոյ եկան երեք գիւղացիներ բժշկին տեսնելու. նա հրաւիրեց նոցա նասելու: Գիւղացիները մեզ ողջունելուց յետոյ՝ նատուեցին:

—Ի՞նպէ՞ս գիւղը անցկացրաւ այս ձմեռը, հարցրեց բժիշկը:

—Փառք Աստուծու, միջակ. խոտի կողմից մէծ պակասութիւն ունէինք, բայց մի կերպ ձմեռը լուսացրինք:

—Իսկ հացներդ, ուրեմն, լաւ է՞ր:

—Լաւ էր. բայց առաջւանը չէ:

—Գիտէք, ի՞նչ. դարձաւ դէպի մեզ բժիշկը, գիւղացիները այսպէս են, բերանները չի զօրում, որ ասեն թէ լաւ էր, չէ. պէտք է վերջումն էլ մի բան կցեն, մի գանգատ աւելացնեն:

—Դէհ, ինչպէ՞ս անենք, պարոններս, հողը քանի գնում է

մարդահաշիս փոքրանում է, հասկն էլ տարի տարւայ վերայ թող
է բոնում. ապա չի՝ պահասում, ապա մեր մէջքը չի՝ թուլացնում
— Ուսումնարանը ինչպէս է:

— Կայ էլի: Վարժապետին իմաց ենք տւել գայ ձեր տեսու-
թեանը: Լաւ մարդ է, բայց շատ է իրասածի:

— Խնչպէս:

Այդ միջոցին դիւղացիներից մէկը բօթեց խօսողին և նա խօսքը
փոխեց:

— Երեխայքը նորան սիրում են, մեզ էլ այդ է հարկաւոր. ինքն
էլ խելքը գլխին մարդ է:

— Իռո՞ջիկը աւելացրի՞ք:

— Զէ, որտեղից աւելցնէինք, դժւար տարիներ են: Ասում էք
թէ մենք հա զանգատաւոր ենք, ի՞նչ անենք՝ ոյժներս չի պատում:
Ուսումնարանի հիմիկւայ ծախսած փողն էլ հեշտ չի կիտւում: Նու-
տով էլի պէտք է հոգաբարձուների ժողով անենք:

Բժիշկը՝ յանկարծ իբր թէ սմժափւած՝ դարձաւ մեզ և ասաց.

— Այո՛, բարեկամնե՛ր, ես մրուացայ ձեզ ներկայացնել կարգին.
այս մեր գիւղացին դպրոցի հոգաբարձուն է. աս բացի մաճը բռնելը
և ուրիշ բան էլ շատ գիտէ: Լաւ չէ՞: Հողագործ և հոգաբարձու:

Ես հետաքրքիր եղայ իմանալու թէ գիւղից ինչպէս են ու-
տումնարանի համար փող ժողովում, ի՞նչ կարգով:

— Մի կերպ անում ենք էլի: 'Ի հարկէ աղքատներից, չքաւոր-
ներից փող չենք պահանջում: Նոցա երեխայքը ձրի են ուսում առ-
նում: Խօսակցութիւններ շատ եղան իւր ժամանակին. բայց հիմա
հանգարատութիւնն է: 'Ի հարկէ մի քանիսներին շատ է զօռ համանում:
բայց ինչ արած, էլ է, ժողովուրդ է: Ասուած բաններս յաջող
տանի, հունձներս առատ լինի, մենք երկնքի թռչունին էլ կուտ
կը տանք:

— Այո՛, տնտեսական ապահովութիւնը — հիմքն է ամեն մի յա-
րատու յառաջադիմութեան, ասաց խորը զգացած Սուշեղեանը: Ժո-
ղովուրդը այդ լաւ է հասկանում: Տւէ՛ք նորան հող, կարողութիւն
և նա կիրագործի ամեն տեսակ երազներ:

— Այդ՝ ինպրի միայն մի մասն է: Եւ այժմ մեր ժողովրդի հա-
մար այդ չէ գլխաւորը, նկատեց բժիշկը:

— Միշտ զլսաւորն է լինելու։ Մեր գպրոցներն էլ պէտք է ձգտեն աշակերտին զրահաւորելու այնպիսի գիտութիւններով, որոնք օդնում են ժողովրդի նիւթական հարստութեան։

— Դուք, պարոն Մուշեղեան, խառնում էք մի քանի բան միասին։ Դուք խօսք բաց արիք տնտեսական ապահովութեան մասին, իսկ այժմ շշափում էք ուսում տալու ուղղութեան խնդիրը։ Դոքա տարբեր առարկաներ են։ Ես առաջինին չը տւի առ այժմ մեծ նշանակութիւն, երկրորդը ընդունում եմ։ իսկ այդ բոլորը դեռ թողած՝ ասում եմ, որ մեզ հարկաւոր է այժմ առհասարակ բարոյական, գաղափարական առաջադիմութիւն։

— Դոքա բառեր են, պարզ խօսեցէք, աւելի աշխարհաբառ, ժպտալով ասաց Մուշեղեանը։

— Այժմ մեր կեանքը ներկայացնում է ինքը մի նիւթ, որը ո՛չ ազքառ է և ոչ փոտած։ այլ միայն զուրկ է հոգուց, զուրկ է խելացի նպաստակների ծառայելուց։

Դիւզացիները աեսնելով, որ խօսակցութիւնը բոլորովին փոխւեց, մեկ մեկ դուրս եկան՝ դուցէ կարծելով, որ մենք կոմենում ենք մենակ միալու։

Ինձ հետաքրքրում էր Մուշեղեանի և բժշկի մէջ բացւած վէճը։ Ուստի՝ ցանկանալով խօսակցութիւնները աւելի կանոնաւոր դարձնելու, ես ասացի։

— Պարոննե՛ր. խնդիրը լաւ խնդիր է և ինչպէս ես կարծում եմ, մենք բոլորս էլ պէտք է որ շատ հետու չը լինենք միմեանցից խնդրի ներքին իմաստի վերաբերմամբ։ այժմ նորան ձեւակերպելու, նորան յայտնի գոյն տալու, նորան բնաորոշելու մէջն է լինելու տարբերութիւնը։

— Ի՞նչ անեմ, գանգատւեց Մուշեղեանը, ես պարզ աշխարհաբառ եմ խօսում։ իսկ մեր պարոն բժիշկը զրաբառ։ Ես ասում եմ թէ ժողովուրդը պէտք է ուտի, խմի, երեխաներ մ.ծացնի, երեխաներին գործնական՝ հաց բերող ուսում տայ, նորան ապահովի աղնիւ աշխատանքով, որպէս զի ժողովուրդը չը մտածի ծուռ և անազնիւ միջոցների վերայ, որպէս զի խելացի հիմք կազմի կանոնաւոր զարգացումի համար, իսկ...

— Իսկ ես, տաքացած վրայ բերեց բժիշկը, ասում եմ, որ այդ

բոլորին համեմու և ուրիշ հասարակական նպատակներ իրագործելու համար կարեոր է նախապարաստական գործունեութիւն:

—Այսի՞նքն:

—Գաղափարական շարժում, բարոյական սուրբ ոգևորութիւն, վեհի, համազգայինի, համամարդկայինի պաշտում: Ի՞նչն է մեզ երեքիս միմեանց հետ կապում՝ եթէ ո՛չ այն մի լուսաւորութիւնը, այն մի գաղափարը, որին յարգող և ծառայողներն ենք:

—Խօսենք իրականից, սկսեց աւելի լուրջ կերպով Մուշեղեանը, այս դիւզի վերաբերմամբ ինչ կարող էք ասել: Խնչութեանք, որ առաջադիմի: Անե՞նք այն, ինչ որ ես եմ առաջարկում՝ իսկապէս գործնական, իրագործելի բաներ, թէ նորան թովենք, շմեցնենք ձեր եղանակով:

—Նու այդ, և այն. բայց դուք չէք ցանկանում ըմբռնել իմ տեսակետու: Երբ որ սկսւում է մի ազգի մէջ գաղափարական շարժում, նա ինքը ուժեղ կերպով օգնում է իւր առաջադիմութեան և նա պահանջում է այն, ինչ որ դուք այժմ նորան պատւաստում էք, նորան կպցնում էք: Այդ գաղափարական շարժումը ինքը դեր ունի կատարելու:

—Եթէ, պարոն բժիշկ, խնդիրը ացգակս ընդհանրացնում էք, այն ժամանակ ես կասեմ, որ համամարդկային գաղափարական շարժումները հետեւանք են եղել տնտեսական հանգամանքների:

—Մասամբ միայն: Ճիշդ է տնտեսական կեանքը խառն է եղել շատ գաղափարական շարժումներում: բայց դա չափազանցքած ընդհանրացնում է և յամենայն դէպս մեր երկում կան առանձնայառ կութիւններ...

—Դուք եթէ մանրամասն քննէք, խօսքը կորեց Մուշեղեանը, կը տեսնէք, որ մեծ շարժումներում—տնտեսական խնդիրը առաջին տեղն է բւնել: Մինչեւ անգամ ստրկութիւն ոչնչացնողները, զորոնակ Ամերիկացում, զեկավարում էին տնտեսական հաշիւներով և ոչ թէ գաղափարական ոգևորութիւնով:

—Այդ կարծիքը ես գիտեմ, հանդարտ նկատեց բժիշկը. բայց այդ կարծիքը հարկաւոր է ո՛չ այժմ, այս խօսակցութիւնների ժամանակ, այլ երբ մենք քննում կը լինենք ժողովրդի տնտեսական գարգացումի խնդիրը: Ես խօսում եմ ժողովրդի ընդհանուր գարգացումի մասին:

—Պարոն բժիշկ։ զուք՝ փոխանակ վիճելու բառ իմաստի՝ դիմում
էք կողմնակի միջոցների, փոքր ինչ վիրաւորւած նկատեց Մուշեղեանը։

—Ներեցէ՛ք, ամենեան կողմնակի միջոց չէ. ես ցանկացայ դորանով
աւելի կորական շեշտել իմ և ձեր հայեացքների տարբերութիւնը։
Լաւ. ես կը վիճեմ։ Դուք ի՞նչ ինդիբներ էք ինձ առաջարկում։

—Բացատրեցէ՛ք, ինչու էր ֆրանսիական ազգը շարժւում ան-
ցեալ դարերի վերջերը, ինչո՞ւ էր ստրկութիւնը վերանում այս դա-
րում. ասացէ՛ք, ինչ տեսակ է շարժւողի տնտեսական վիճակը. և եթէ
չը փոխւէր տնտեսական վիճակը, սկսած շարժումը կը վերջանա՞ր
կամ վերջանում է։ Քրիստոնէութիւնը, որ այնպէս շուտով տարած-
ւեց, չը մացնում արդեօք տնտեսական նոր հայեացքներ։ Ժողովր-
դական շարժումը առանց տնտեսական հիմունքի—մի մեծ հիւան-
դութեան արտայալութիւն է։

Բժիշկը հանգիստ լսում էր Մուշեղեանի ասածները. նա կարծես
դեռ սպասում էր շարունակութեան։ Մուշեղեանին պատասխանելով
նա ասաց.

—Գաղափարները այն պատճառով ուժեղ և հաստատ էին, որ
նոքա վճռում էին և տնտեսական իննդիբներ. բայց ո՞չ թէ նոքա
իրանք միայն ծնունդ էին, միայն հետեանք էին տնտեսական հան-
գամանքների։ Նթէ Եւրոպացում երրորդ դասակարգը այժմ իշխող է
և նորան տանում են, այդ բացատրւում է ո՞չ միայն նորա տնտեսա-
կան ոյժով, այլ և այն բանով, որ այդ երրորդ դասակարգը զաղա-
փարներ չէ բացասում, այլ իւր զրօշակների վերաց զաղափարներ է
նշանակել։ Գուցէ զաղափարներից օգուտ քաղողները յանախ ճար-
պիկներն են լինում։ Դէ՛, միշտ լինում են հաստրակական փոփոխու-
թիւններից օգուտ ողներ։ Դուք օրինակ էք բերում՝ քրիստոնէութիւնը։
Բայց միթէ՞ հէնց դա չէր այն ուժեղ գաղափարը, որ լնկնեց հա-
մահաւասար բոլոր դասակարգերը. և ռամլին, և նախարարին, և
Տրդատին, որ հրաժարւեց նոյն իսկ իւր գահից։ Գաղափարը չէ՞ր,
որ մղեց հինգերորդ դարի փափկառուն կանանց արհամարհելու
կեանքի վայելչութիւնները, այսինքն՝ ուրիշ լեզով՝ տնտեսական
հանգամանքները։ Գաղափարը չէ՞ր, որ ստիպում է մեր նորաբոյս երի-
տասարդներին՝ մոռաւոր աշխատանքի հետ կապւած ծանրութիւն-
ները գերազանել ուրիշ աւելի շահաւէտ գործերին։

— Այդ ի հարկէ։ Այդ ոչ ով չէ էլ բացասում։

— Բաւական չէ սպարոններ, նորան չը բացասել։ մենք պէտք է նորան այժմ աւելի, քան երբ և իցէ, աշքի առաջ ունենանք։ Գաղափարը, ուժեղ, համատարած գաղափարը՝ նա մի չը զրւած դաշնագիր է, որ միլիօնաւոր ժողովուրդ ուղղում է մի լնդհանուր մ.ծ գործի։

— Բայց իմ դրած հարցերին չը պատասխանեցիք, նկատեց Մուշեանը։

— Որովհետեւ ևս այժմ նորան երկրորդական եմ համարում և բոլորովին առանձին խնդիր։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, միթէ՞ դուք չը լսեցիք գիւղացուց, որ նա ասում է մենք ուսումնարան չենք կարողանում պահել, որովհետեւ հողը պակասում է, ուժասպառ է գառնում։

— Ես կը պատասխանեմ ձեզ մի հարց տալով։ Խնդրեմ ասացէք, ինչո՞ւ հարեւան թիւրք գիւղերը, որ աւելի բազմահող են, գպրոց չունին։ ինչո՞ւ զուխօբորները երեկ մեզ աշխատում էին համոզել, որ իրանց գաւանածից դուրս կրթութիւնը վնասակար է և այդ պատճառով գովրոց բանալու խնդրին շատ են գիմագրել։ Միթէ բազմահողութիւնը, միթէ՞ անտեսական լաւ վիճակը՝ բացի կանոնաւոր աճումից՝ մինչև այժմ մի որ և է բան է աւել մեզ նոր հայագեղի գաւառում, Նիրակում, Արարանում և միթէ՞ այժմ, որ գիւղացիները սկսել են գնահատել ուսումը, նոքա աւելի հարստացել են, ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Նոքա մինչև անդամ աղքատացել են և մի քանի անդերում անքան, որ իսկապէս առաջադիմութեան համար վտանգած են։

— Ինչո՞ւ են վտանգւած, երեի այն պատճառով, որ չեն կարող ուսումնարան պահել, որ տնտեսապէս անկարող են։

— Այո՛, պարոն Մուշեղեա՞ն, հազար անդամ այո՛. բայց ևս ասում եմ թէ այդ գիւղերում ուսումի, գաղափարի խնդիրը քնած է, և պնդում եմ, որ նորա, այսինքն այդ գաղափարի, ծնողը՝ անտեսական վիճակը չէ. սա նորան նպաստող, նորան իրագործող միջոցն է և մասամբ էլ նորա հետևանքը։

— Տնտեսական խնդիրը ամենամեծ, ամենաէական խնդիրն է մ.ր ժողովրդի համար և ձեր ասածները յանգում են վերջ ի վերջոց այդ

կէտի վերայ: Բոլոր աշխարհների հոգսը այդ է, շատ պատերազմների և դիւանագիտական ընդհարութների հիմքը կամ աստառը—տնտեսական է: Սա անհերքելի է. իսկ ձեր ասածները—միայն գեղեցիկ խօսքեր են, իրագործելու համար անըմբոնելի:

Ես ևս միջամտեցի և վէճը սկսաւ շատ աղմկալի դառնար Վէճի ժամանակ մի երկու անգամ տանտէրի գլուխը երևաց դրան միջից. բայց խօսակցութեան խանգարող չեղաւ:

—Պարոն Մուշեղեան, ասացի ես, դուք կատարեալ իրաւունք ունեք պնդել ձեր ասածների վերայ, բայց բժշկի ասածների մէջ կան իսկապէս էական կէտեր, որ պէտք է լրջօրէն քննել: Ես նամանաւանդ գնահատում եմ այդ ասածները, որովհետև նա ինքը մ.ր կեանքը շատ ճանաչում է, մ.ր ժողովրդի հետ շատ է շփւել:

—Ուրեմն, պարոն Պատորիկեան, ես այստեղ երկու հակառակորդ եմ ունեցել. ես կարծում էի, որ դուք իմ տեսակէտը լուսաւորէք: Միթէ՞ դուք չը գիտէք, որ ինքը ուսումը, մ.ր դարի լուսաւորութիւնը ինքը՝ ունի իւր սեպհական որոշ ազդեցութիւնը, որի մասին եթէ շատ էլ չը խօսենք, այնուամենայնիւ նա իւր անելիքը կ'անի: Ես լաւ գիտեմ, որ ուսումը կը տայ այն բոլորը, ինչի մասին այնքան ոգևորւած խօսում էր բժիշկը, ես այժմ ասում եմ ժողովրդին ապահովացրէք, ժողովրդի մէջքը պնդացրէք: Խնչպէս դատողութիւններ ուզում՝ էք յայտնեցէք զանազան խնդիրների մասին, բայց նախ և աւաջ ժողովրդին հաց տւէք, հաց: Թող՝ մի հինգ տարի, տասը տարի նա ուշ զարգանայ, բայց նա կուշտ լինի, իւր ձեռքի աշխատանքով բաւական, խղճմտանքը չը վատնգւած: Սա իմ հայեացքի առաջին կէտն էր. այժմ մի երկու խօսք էլ երկրորդ կէտի վերաբերմամբ: Ես ասացի ժողովրդի համար հարկաւոր են նորան նիւթապէս հարստացնելուն նպաստող դպրոցներ: Այս, հէնց այդպէս պէտք է սկսենք գործը, որ նախ և առաջ աչքից թողած չը լինենք երբէք ժողովրդի նիւթական բարեկեցութիւնը և յետոյ հանգիստ կերպով անձնատուր լինենք զանազան գնառողութիւնների:

—Ես ձեղ ասացի, նկատեց բժիշկը, որ հարկ ան զիւղերը շատ հողեր ունեն, բայց և այնպէս նոքա աւելի տգէտ են, աւելի խաւար և մինչեւ անգամ աւելի աղքատ:

—Բայց գոնէ սոցա աղքատութիւնը և խողութիւնը—հողի

պակասութիւնիցը չէ. եթէ նոքա էգուց սկսն աւելի ժրաջան լինել, —իսկոյն կը հարստանան, կը գանեն գործելու, աշխատելու միջոց։

—Սպասեցէք, պարոն Մուշեղեան, ես ձեզ մի երկու օրինակ բերեմ; որ իմ միտքը աւելի ևս պարզ լինի ձեզ համար։ Նորերս ես փող էի ժողովում սովեալների համար։ ես տեսնում էի, որ մի քանի մարդիկ առատաձեռն են, միւսները ժլատ։ սկսեցի համեմատել այդ նւիրատուներին և տեսայ, որ այս ինչ քաղաքի կամ գաւառի հայերը աւելի առատաձեռն են, քան մի ուրիշ տեղինք։ Հայ թատրոն յաճախորդների, լրազիր ստացողների, աղքատներին օգնողների, զանազան նւէր տւողների դասաւորելուց՝ ես հետաքրքրական եղրակացութիւնների հասայ. ես շատ լաւ նկատեցի և համոզւեցի, որ այդ յատկութիւնները կապւած չեն անմիջապէս հարստութեան հետ. այլ ուրիշ ազդեցութիւնների հետևանք են և ըստ մեծի մասին գաղափարական խմորից մակարդւած։ Օրինակների թիւը կարող եմ շարունակել։

—Այդքանն էլ բաւական է. հասկանում եմ ձեր միտքը։ Առատաձեռնութիւնը դեռ շատ ուրիշ պատճառներ ունի և զանազան գոյններով է երևում, որովհետև առատ ձեռքը տալիս է և լաւ բանին և վատ բանին առատ կերպով։ իսկ ժլատը —միշտ ժլատ է։

—Այդ է, որ չէ է։ Տեսնում էք մէկը պատրաստ է ձեզ հիւրասիրել ճաշով, ինչոցքներով, կառքով ման ածելով. բայց իսկոյն փախչում է ձեզնից, եթէ նորան առաջարկում էք մի տան քսան կուրէկանոց գիրք գնել։

—Վերջապէս, ձեր միտքը այն է թէ հարուստ լինելը դեռ չէ նշանակում և խելօք, ազգասէր, մարդասէր լինել։ Այո՛, ես էլ ձեզ հետ համաձայն եմ։ Ես կարծում եմ, որ այդ դասակարգում նամանաւանդ շատ յաճախ են պատահում խկական խոզեր, կոպիտ և անգութ արարածներ։ Լա՛ւ, միթէ՞ մենք ամենքս դոցա դէմ չենք, միթէ՞ գրականութիւնը, դպրոցը, հասարակութեան զարգացած մասը դոցա սիրում է, դոցա պաշտում է։ Միթէ՞ մեր ժողովուրդը, որի զարգացումի խնդիրը քննում ենք, նա կը տանի այդպէսներին։

—Այո՛, կը տանի, եթէ ժողովրդին մենք ասենք՝ թէ նորա համար ամենազլիսաւորը նորա տնտեսական ապահովութիւնն է։

—Ո՛չ, սիրելիս, ընդհանուր ժողովրդական բարեկեցութիւնը

ուրիշ բան է, մի առանձին մարդու հարսոութիւնը ուրիշ։ Անտեղ՝ ժողովրդի հարսոութեան խնդրով՝ ազատութեան, լնդհանրութեան գաղափար է շարժւում։ այսուեղ՝ սորկութեան, կռապաշտութեան։

— Ե՛հ, բաւական է, յոգնած ասաց բժիշկը։ Ապրեցէք մի երկու տարի էլ մեր հասարակութեան մէջ և յետոյ նորից մի օր կը վիճենք։ Տան տէրերը մեզ սպասում են։

Բժիշկը դուրս եկաւ և վերադարձաւ տանտէրի և գիւղական ուսուցչի հետ Տանտէրը խնդրեց, որ թոյլ տանք սեղանը զցելու։ Մենք ի հարկէ զէմ չէինք։

Ուսուցիչը մի լուռ մարդ էր. կամ զոնէ մեզ հետ զրոյցի ժամանակ շատ լուռ էր իրան պահում։ Նա գանգատում էր իւր գիւղական կեանքից, գիւղացիներից։

— Ես են գիւղացիները եսական, ասում էր նա, շատ են նեղ և սահմանափակ, շարունակում են նահապետական սովորութիւններով գնալ անշարժութեան մէջ։ ոչինչ նոր բան չեն ուզում ընդունել։

— Ի՞նչ էք դուք նոցա առաջարկել նոր, ոչ նահապետական, որ նոքա չեն ընդունել՝ յուզւած հարցրեց բժիշկը։

— Առհասարակ եմ՝ ասում, պատասխանեց ուսուցիչը։

— Դէհ, գիւղացիներ են, խաւար են, միջամտեց տանտէրը։ կամաց-կամաց առաջ կը գնան։ յանկարծ չի լինում։

Բժիշկին կանչեցին. նա դուրս եկաւ և մի տասն րոպէից յետոյ վերադարձաւ. մեր ծանօթ գիւղացիների հետ նստեցինք սեղանի մօտ 8 հոգի։ Հացկերոյթի ժամանակ բժիշկը, որ փոքր ինչ ձանձրացել էր նախորդ վէճից, նորից զւարթացաւ, աշխուժով սկսեց խօսել, կատակներ անել։ Գիւղացիները նորան շատ սիրում են և յարգում. իսկ մեզ վերայ խորժ էին նայում՝ իբրև օտարների վերայ։ Բժշկի և գիւղացիների մէջ նկատող այդ փոխադարձ սէրը ինձ վերայ մեծ տպաւորութիւն արաւ։ Երեխ այդ տեսակ էր աղղել և Մուշեղեանի վերայ, որովհետեւ սա ոգեւորւած՝ առաջարկեց բժշկի կենացը խմել։

Գիւղացիները բաւական ձեապահ մարդիկ են. նոքա շատ խիստ նայում են, որ իրանց հասկացած քաղաքավարական կանոններից դուրս չը գան։ Տանտէրը, որ աւելի շփւած էր գանազան շըշաններում, իրան աւելի ազատ էր պահում։

Թողինք գիւղը և ճանապարհ ընկանք գեպ երկաթուղին։ Ահա ծածկւեց լեռան ետև գիւղը և մեք սկսում ենք իջնել զառիվայրով։ Հեռւից երեսում է տափարակը։ Ահա մի քանի ժամանակից յետոյ և գերմանական գաղթականների գիւղը։

—Տեսէ՛ք, բացականչեց բժիշկը, քանի անդամ ասել եմ մեր գիւղացիներին, որ դոցանից օրինակ վերցնեն և տները շինեն կարգին, հողից վերև Գիտէ՛ք ինչ, պարոն Մուշեղեան, այդ տեսակ յամառութիւնը տնտեսական պատճառից չէ, աղքատութիւնից չէ, այլ սովորութիւնից, աւանդութիւնից։ Որչափ և աղքատ լինի գերմանացին՝ նա իւր տունը կը շինի իւր կերպ—հողից վերև, կանոնաւոր և լուսաւոր։

—Պարոն բժիշկ, ժպատաց Մուշեղեանը, բայց դա կարծեմ և զաղափարական պատճառներից ել չէ։ Ես տներ փոխելու, տներ շինելու գործը թողնում եմ կեանքին, դպրոցին, վերջապէս վարչութեան, որ կարող է նոյնապէս նոպաստել յարմար և կանոնաւոր տներ կառուցանելու։

Որպէս զի վէճը չը շարունակւի, խօսակիցները լուեցին։ Մի քանի ժամանակից յետոյ ես խօսք բացարի ժողովրդական առողջապահութեան մասին։ Բժիշկը շատ հետաքրքրական փասոնը պատմեց իւր զիտողութիւններից, յետոյ նա օրինակներ բերեց թէ ինչպէս զիւղացիները մի քանի դէպերում խանգարում են իրանց առողջութիւնը՝ մինչդեռ կարող կը լինէին հեշտութիւնով մլասների առաջն առնել։ Բայց յանկարծ մոտաբերելով իւր վէճը՝ նա աւելցրեց։

—Եւ զիտէ՛ք՝ այդ մլասների առաջն կարելի է առնել առանց տնտեսական փոփոխութիւնների։

—Աղքատ ժողովուրդը, խօսքը կարեց Մուշեղեանը, աւելի շատ կ'ենթարկւի հիւանդութիւնների, աւելի շուտ կը խանգարի իւր առողջութիւնը։

—Իսկ եթէ աղքատ չէ։

—Կարող է ապահովել և մի բժշկի, եթէ սա բաղդի բերմունքով ցանկանալ գիւղում մնալ և պարսպել իւր մասնագիտութիւնով։

Ճանապարհին անցուդարձ անողների թիւը շատ քիչ էր։ Մեր ուշը գրաւեց փառահեղ միրուքով մի թուրք կրօնաւոր, որ գնումը էր ձի հեծած երկու կրօնակիցների առաջնորդութիւնով։ Կրօնաւորը

իրան շատ հպարտ էր պահած և մեր մօտով անցնելիս մի թեթև ողջունեց։ Մուշեղեանը իւր ձին քշեց, մօտիկացաւ բժշկին և ժըպտալով ասաց.

— Ի՞նչ կասէք, պարոն բժիշկ, այս կրօնաւորի գաղափարներին։ սա էլ կարող է մեծ շարժումներ սկսել, եթէ ուզենայ օրն էգուց. բայց ի՞նչ տեսակ շարժումներ։

— Ոչ ուրախալի շարժումներ։ Սակայն դուք իմ հիմնական միտքը չէք հերքում, այլ աւելի ևս ամրացնում էք։ Գաղափարը այստեղ մեծ շարժումներ կ'արդիւնաբերի. բայց ինքը գաղափարը անհամարելի է, ուստի և նորանից սպասելիք հետեւանքները—ոչ ցանկալի։ Ես ասում եմ վարւենք գիտակցաբար. տարածենք և ժողովրդականացնենք այն գաղափարները, որոնք մաքուր են և որոնց արդիւնքը անկասկած բարերար է յառաջադիմութեան համար։

— Դուք միայն զարթեցրէք դպրոցի միջոցով ժողովրդին և նա ինքը շարժումի առաջին իսկ քայլերից կը գտնի գաղափարներ, կը դնի կեանքի հիմունքում սկզբունքներ։

— Դորա մասին, պարոն Մուշեղեան, պէտք է մենք աշխատենք ինքներս, իբրև այդ ժողովրդից աւելի շուտ զարթնածներս։

— Զափազանց դիւթելը, զրդուելը—կը սայ ժողովրդի զարգացումին—արհեստականութիւն և կը ստեղծի ապագայում կեղծ յարաբերութիւններ։

Գերմանական գիւղում մենք փոքր ինչ կանդ առինք։ Խանութ-պանին պատիրեցինք, որ թէյ պատրաստի. իսկ ինքներս բժշկի առաջնորդութիւնով գնացինք գերմանացիների մօտ։ Նատերը սոցանից ծանօթ էին բժշկի հետ և ուրախ էին նորա գալուստին։

Մտանք մի գերմանացու տուն, ուր բժիշկը պէտք է մի հիւանդ տեսնէր։ Տունը շինւած էր կանոնաւոր, բայց ոչ գեղեցիկ. սենեակը մութն էր և տիսուր տպաւորութիւն էր աղջում մարդու վերայ։

Մուշեղեանի հետ ևս մնացի սենեակում, իսկ բժիշկը անցաւ տան միւս մասը հիւանդին տեսնելու։

— Տեսնում էք, այս գերմանացիներին, ասաց ինձ Մուշեղեանը,

որչա՛փ հաւատարիմ են մնացել իրանց ժառանգածին. սոքա տեղա-

փոխել են այսուեղ զերմանական գիւղը նորա բնաօրոշ յատկանիշներով:

—Զը գիտէ՞ք արդեօք ճիշդ է լսածս թէ սոքա առանձին բա-
րերար ազդեցութիւն չեն ունեցած մեր տեղական գիւղացիների
վերաց, հարցրի ես:

—Գուցէ: Ազգերի միմեանց մէջ մեծ շփում՝ չը կայ այս երկրում,
ամեն մէկը իւր ժառանգածին, իրան աւանդածին է հետևում:

Ներս մտաւ զերմանական տան տղամարդերից մէկը, ողջունեց
և կանգնեց:

—Ինչպէ՞ս էք անցկացնում՝ ձեր օրերը, գոհ է՞ք, հետաքրքիր
եղայ ես իմանալու:

—Այժմ, փառք Աստծու, գոհ ենք. բայց առաջները, նոր գաղ-
թած ժամանակներս՝ շատ նեղութիւն, չարչարանք էինք կրում հա-
րեաններից:

—Ի՞նչ տեսակ նեղութիւնների մասին էք խօսում:

—Ամեն տեսակի: Գողանում էին մեր տաւարը, մեր թռչունները,
կերցնում էին մեր արտերը: Մենք չէինք իմանում թէ ինչ անենք:
Գանգատում էինք: Եւ թէև մեզ պաշատան էին լինում, բայց յետոյ
տեսանք, որ մեր գանգատները անվերջ են, իսկ մեր հարեանները
իրանց ուղեցածը անում են անպատիժ: Մենք վճռեցինք կարճաց-
նել գանգատները և ուրիշ կերպ վարւել մեր այդ պատելի հարեան-
ների հետ:

—Այսի՞նքն:

—Վճռեցինք, որ մենք ինքներս մեր հաշիւները, մեր դա-
տաստանը տեսնենք:

—Ինչպէ՞ս:

—Սկսեցինք նոցա ամենախիստ կերպով հալածել—աւելի ծայ-
րահեղ օրէնքով, քան թէ «ակն ընդ անկան»: Մէկ երկու, երեք...
չէ, տեսան, որ մենք կատակ չենք անում, երբէք չենք զիջում, ո՞չ
մի թեթև յանցանք չենք ներում, յետ կանգնեցին, թողին մեզ
հանգիստ և հետացան:

—Եւ այժմ դուք նոցանից չէ՞ք պահանում:

—Ոչ այլ ես: Այժմ՝ հանգիստ են և ոստիկանութիւնը և դա-
տարանը:

Բժիշկը գործը վերջացրել էր, մեզ կանչեց գնալու մի գերմանացու տուն, որի պառաւները ծնւել են դեռ Գերմանիացում և յիշում են իրանց հայրենիքը:

Պառաւ տատին տեսանք իրանց դռան առաջը կանգնած թոռնիկի հետ:

Բժիշկը մօտեցաւ, ողջունեց և խօսացրեց նորան: Պառաւը շատ պարզասիրու կին էր: Պատմեց իրանց աղքատ կեանքը, որ ունեցել են Կովկաս գալուց յետոյ առաջին տարիները. պատմեց, որ այժմ ուղղւել են և սկսում են հարստութիւն յետ գցել:

Գերմանական գիւղից շտապեցինք երկաթուղու կայարանը: Այդտեղ հասանք գնացքը անցնելուց շատ վաղ: Մանր մունր խօսակցութիւններով ժամանակ անցկացրինք մինչև գնացքի գալը: Բժիշկը քիչ մնաց, որ դարձեալ սկսի մեծ խօսակցութիւն հայի, թուրքի, գերմանացու, ուուս աղանդաւորների առանձնայառկութիւնների և նոցա կենցաղակերտի մասին. բացց չը շարունակեց: Բանն այն է, որ ո՛չ բժիշկն է բացասում Մուշեղեանի պնդածը և ո՛չ սա բժշկինը. այլ մի յայտնի բուռէի նկատմամբ վիճում են, աւելի շեշտելով ժողովրդի զարգացումի այս կամ այն կողմը:

Եթեք օրւայ մէջ ի՞նչքան բան տեսայ, ի՞նչքան տպաւորութիւններ ստացայ: Նամակս գրելուց քանի անգամ կանգ եմ առել և խորասուզւել զանազան խնդիրների մէջ. իսկ բնութիւնը, թարմացնող օ՛դը...

Յդրուիլիւն. Քո Ա. Պ.

* * *

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Ե՛լ աստղեր, աստղեր,
Երկնքի աչքեր,
Որ ալգակես ցրւած
Նողում էք վառւած,
Գիտէք թէ ինչեր
Կամ ինչ գիշերներ
Յիշեցնում էք ինձ:
Ապշեցնում էք ինձ,—
Նողշողում էիք դուք,
Երբ ես գեռ մանուկ,
Աշխոյժ ու կայտառ,
Զեզ նման պայծառ
Թըթուում էի
Եւ ցաւ չունէի.
Նողում էք և արդ,
Երբ երիտասարդ,
Անհուն յոյսերով,
Խանդավառ սիրով
Եւ միշտ ուշառու
Նայում եմ հեռու.
Կը շողաք նաև
Նիրիմիս վերև...

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ Ե Տ Օ Ւ

Առիթ ունենալով մի փոքրիկ ճանապարհորդութիւն անելու Պարսկաստանի մի մասում, Սալմաստում, կարեղ եմ համարում հայ և թուրք տարրերի, նրանց սովորութիւնների, նիստ ու կացի մասին տեղեկութիւններ հաղորդել յարգելի ընթերցողներին:

Հոկտեմբերի 15-ի առաւօտը գեղեցիկ է: Պաշտառ արեգակը շողշողում է երկնակամարի վերակ ժամը լինին լու ընկերոջ հետ թողի Նրեանի կեղտուա, զգելի փողոցները, միննոն ժամանակ և հարուստ փարթամ բնութիւնը:

Մեր առաջ ձգւում է դէպի երկինք փառահեղ Մասիսը: Ամբողջ ժամերով նալում եմ հակաչ, նախնական Արարատին, որը Նրեանի դաշտի ամենագեղեցիկ տեսարանն է կազմուա:

Ամբողջ օրը գնում ենք ամենավաստ և թողոտ ճանապարհով:

Խճուղին բոլորսպին անպէտք, կամուրջները քայլքուած, թողն էլ 2 վերշոկ հաստութեամբ է, կարծես Նրեանի փողոցների շարունակութիւնը լինի հանապարհի երկու կողմերում խիտ առ խիտ ափուած են հայ և պարսիկ գիւղերը իրանց բամբակի և բրնձի արտերով: Ժամը վեցն է, կառապանն լաբուում է, որ լաւ չէ առաջ գնալ, որովհեան մօտակալ Սարդարադ թուրք գիւղը լիքն է գողերով, վատանգաւոր է: Պէտք է ասել, որ մեզ հետ կար մի թուրք ուսուցիչ ուուսաց տարրական դպրոցի և մի փոքրիկ տղակ:

Վեր եկանք մի թուրք իջևան: Փոքրիկ, նեղ և կեղտոտ բնակարանում ամեն բան կարելի է գտնել: Երկու առանձին-առանձին «սաղբներ» էր կապած, մէկը մեծ, մաքուր պատրաստած, միւսը անմաքուր: Թուրքերը ուսուցչի ողջունից և արտասանութիւնից ճանաչելով, որ իրանցից է, լսկոչն հրաւիրեցին մեծ սաղբը: Փոքր սաղբը, ինչպէս երևում է, «մուռատառ» հակերի համար է: Երկու ընկերներս իրար երես նակեցին և հասկանալով բանի գօրութիւնը, տեղաւորւեցինք մեզ վայել ու աչքից ընկած

սաղրի վրալ: Իրաւ է, շատ անդամ էի լսել պարսիկների դէպի հաւերն ունեցած արհամարհանքը, բայց գործնականը դեռ չէի տեսել: Խջեանի տէրն հրամալում է ծառալին գնալ մարաքից բերել հաւերի ջուր խմելու ամանը: Երկու բոպէից լետով մեր մօտ դրած է մի կեղտոս, ջարդւած ու ծռմռած թիթեղեակ ջրի աման: Ես մօտեցալ ջրի կժին, որ ջուր վերցնեմ և լւացւեմ, սաստիկ թողոտւած էի: Ընկերս փորձւած է, ինձ զգուշացնում է: ալդ միջոցին անբաւական դէմքով օգնութեան հաստ պարսիկ: Ան- գիտակցաբար սխալւած էի, կժին չը պէտք է կաչէի: Ես լուռ ու մունջ և զարմացմամբ դիտում եմ ալդ վալրենի և տարօրինակ խարութիւնը: Փոք- րիկ, եօթը տարեկան պարսիկ երեխան միամտաբար մեր ամանից ջուր է խմում: Թուրքը բղաւում է նորա վերաչ և ասում:

«Ալդ ամանը հավինն է, մուռտառ է, ուրեմն ինքդ էլ մուռտառւեցիր: Երեխան երկար մեղ նալից, կարմրեց ու աչքերը ցած թողեց: Երկի մտածում է: «Ճ որ ալսօր սաստիկ շոքին ազդ բարի մարդիկ- ներից դեղձ ու ձմերուկ առաջ և պապակած բերանս զովացրի»: Թէկը պատրաստ է:

Բաժակները սրբում են, զնում կեղտոցա մատուցաբանի վրալ և առաջ բերում: Ուսուցիչը լուռ է և, ինչպէս երեսում է, տեսնելով մեր անլարմար գրութիւնը, վրգովկած է:

—Օ՛ֆ, ինչ ուզում են թող ասեն ալս չները, ես ձեզ հետ պէտք է թէչ խմել և ընթրիք անեմ, ասաց ու թռաւ մեր սապրը: (Այս երիտասարդը Երեանում ուսում առնելով, բաւականին հաւերէն գիտէր): Թուրքերը խէթ- իէթ են նաևսում: Թէկից լսող հայ դրինք և սեխը կտրնցինք: Պարսիկներն էլ չը համբերեցին, նրանց վընդիլնթոցը զառնում է լավանի բողոք, լան- դիմանութիւն: Սկսեց իջնանի տէրը՝

—Ամօ՛թ քեզ, հսկար ամօթ, դու էլ խօմ ալս վոքրիկ երեխան չես, որ անդխակցաբար հալի ամանից խմեց: Դու անպատում ես մուռուլման- ների կրօնը, դարեսոր սովորութիւնները: Միթէ կարելի է հալի հետ սեղան նստել, նորա հացը կարել, պահ, պահ, պահ...»: —Ուսուցիչը բորբոքւում է:

—Նատ լաւ եմ անում, ձեր գործը չէ: Դուք, որ հալին մուռտառ էք համարում, հիմաչ, հէնց հիմաչ եթէ սրանք մի ժամ ակստեղից բացակաչ լինեն, կը գողանաք սրանց հացն էլ, շորերն էլ և անուշ կանէք և ալդ ձեր կարծիքով մուռտառ չէ: Մի լաւ նախեցէք սրանց ձեռքերին, ոտնե- րին, շորերին, հաղար անդամ ձեղանից մաքուր են, թուրքերը պապանձ- ւեցին, էլ ծպտուն չը հանեցին: Ուսուցիչը դառնում է մեղ քաղաքավա- րութեամբ՝

—Պարոններ, ներողութիւն, սրանք հին քարացած սերնդից են, նոր սերունդը այնքան էլ խտրութիւն չի դնում, բարբարոս չէ,

Առաւօտեան արշալուսը նոր ճըղճընոտել է:

Մենք ճանապարհ ընկանք: 60 վերաս եկիլ ենք, 90 էլ ունինք մինչև

Նախիջնան։ Մեր ետեղը, բարակ մշուշի մէջ կանգնած է վեհ Մասիսը իւր սպիտակ կատարող։ Դեռ առաւտեան աղջամուղջը չի քաշւել, դեռ շրջակակ սարերը խաւարի մէջ են, բայց ահա արեղակի առաջին ճառագայթները իւրում են Արարատի կատարին։ Փոքր Մասիսը, որ աւելի կանոնաւոր կոնածի է, նոր է մկնում իրան պարզ ցուց տալ։

Արարատեան զաշար քաջնի գնում նեղանում, ճնշում է լեռների մէջ։ Բարակ, պաղ քամին որւսըւում և մեր երեսին է քաւում։ Արաքսի ջրերն հեռւից երեւում են։ Արգէն հասել ենք Շարուրի դուռը։ Բարձր սինի վերաց կպցրած է մի կոլորածե թիթեղ և վրան զրած՝ „Ռարու-Ջարալաց-էկին յթզմ“։ Մեր առաջ բացւեց մի նոր հորիզոն, Շարուրի բամբակի ու բրնձի արաւերով ծածկւած զեղեցիկ զաշտու։ Ճամբ տաւին հաշ նորացէն ենք։ Մեծ գիւղ է, հակերը քիչ, ոստիկանաւուն, հետ ազրատուն և ոռւսաց տարրական զպրոց կաչ։ Ուսուցիչը չնորհակալութեամբ բաժանւեց մեղանից։ Հանապարհի երկու կողմերում կանաչք ու երեխաներ սփոււած երգելով բամբակի են հաւաքում, տեղտեղ բրինձ են կալսում։ Անցկացանք Արփաչաչ գիւղը, որի ջուրը շատ նւազ էր, որովհետեւ տասնեակ տեղերով ջրանցքներ են ատրել դէպի արտերլ։ Ալս գետը շատ օգտաւէտ է, մինչեւ Արփաը թափելը շարուցիք բանեցնում են։ Բերքերը մեծ մասամբ հաջ մանր վաճառականներն են արտահանում դէպի երեխան։ Սրանց մեծ մասը զանազան զիւղերում ճոթի խանութներ է պահում և, ոլէտք է նկատել, լաւ պլոկում քիւրդ ու թուրք ագէտ ժողովրդին։ Դրանք նախիջնանցիներ են, շատ ճարպիկ են։ Կրեկուեան Նախիջնան հասանք, խոկ միւս օրը ջուլֆ, Մայր-Արաքսի ափը, ուր կաչ մաքսատուն, հեռադրատուն, պոստի կաւարան և երեք-չորս շինութիւն էլ ծառաւողների համար։ Յարմար առիթ զանելով, ընկերոջն թողի ջուլֆ, խոկ ինքս միանակ ճանապարհ ընկաչ Ագուլիս։ Հանուելով Աղա զիւղը, որուշեցի փոստի ճանապարհը թողնել և աւելի կարծ ճանապարհով զնալ։

Ժամի երեքն էր, տրեմի պէտք էր շտապել։ Կէօ ժամ է ինձ համար ձի են որոնում։ ալդ միջոցին մի ջորեսպան պատահեց, ալլ ևս առանց սպասելու ջորի եմ նստում և գնում։ Ճանապարհը քանի գնում բարձրա նում է։ Մեր առաջ հիւսիսից հարաւ ձգւում է մի լեռնաշղթաւ։ մտանք մի ձոր, ջորեսպանն ինձ շտապեցնում է, արեկակն արդէն մալր մտնելու վրա է, արդպիսի ժամանակ դուրս մնալը լաւ չէ։ Նա շարունակ չորս կողմն է նացում ու առաջ վազում։

Զորը վերջանալուն մօտ է, ես հարցնում եմ,

— Դեռ շնորհկալ։

— Ալս, դեռ կէօ ժամ ուղիղ կը գնանք, ապա երկու վերսափ չափ ցած կը ծուենք, Հէնց ալդ բոպէին իմ առաջ բացւեց սիրուն, զեղեցիկ Ագուլիսը։ Փառահեղ, հրաշալի տեսարան։ Ես անշարժ նալում էի և չէի կշտանում։ Ուզիղ իմ սոների տակից սկսւում է մի խոր ձոր, ալդ ձորը

իսր ծոցում կազմում է մի հովտիկ, հենց ալդ հովտի վրաէ դրւած է շվեց-
ցարական Վերին Ագուլիսը: Ամբողջ գիւղը խեղդւած է ազգիների ոչչ:
Նուտով գտաէ բարեկամներիս, որոնք սիրավիր ընդունելութ իւն ցոց տւին
ինձ: Միւս օրն առաւտեան վաղ եմ վերկենում արեգակի առաջին
դւարթ ճուազայթներով տեսնել գեղեցիկ Ագուլիսը: Համեստ վահելուչ
տներ եւրոպական ձևով շինւած: Ամեն տուն ունի բակ և ծաղկոց,
շատերը նաև աչդի: Կրկարկանի և պատշգամբաւոր տներ ևս շատ կանւ
Փողոցները նեղլիկ են, բայց մաքուր: Շուկան, երկու կողմից տնկւած
բանաստեղծական, կոլոլ ծառերով, անպէս մաքուր, անպէս խնամքով է
պահուում, որ Նրեանը կ'ամաչէր զրա առաջ: Ճշմարիտն ասած, ես ամա-
չում եմ Ագուլիսին գիւղ անւանել: Ամեն կողմ մի նոր բան, մի նոր տե-
սարան, ամեն կողմից բուրում է թարմութիւն, մաքրութիւն և գեղեցկու-
թիւն: Գնում եմ վանքը, մաքր եկեղեցին: Դա մի փասանեզ շինութիւն է:
Ներսից վերին աստիճանի մաքուր, լուսաւոր և ընդարձակի: Առաստաղի
կամարները ծածկւած են գեղեցիկ ծաղկանկարներով, զմբէթը ներսի կող-
մից պատած է կապուտ Փոնով, իսկ Փոնի վրաւ նկարւած ուկեղան աստ-
ղեր: Ազդ պատկերը ներկայացնում է երկինքը, ագուլեցու վառ երեակալու-
թիան ծնունդ: Այս վանքն աւելի լաւ տպաւորութիւն է թողնում, քան
մռազը ո: Կշմիածինը: Ագուլիսն ունի 10 եկեղեցի, որոնց ից չորսի մէջ է
ժամերգութիւն լինում: Աանքի գաւթում անքան ծառերի մէջ իս-
կոյն աչքի է ընկնում մի սաղարթախիտ կոլոլ ծառ, դա անմահ Շափփին:
Է տնկել զրա համար էլ տեղացիք կոչում են Շափփու չիշտատակ: Դիւղը
կառավարում է ժողովրդից ընտրւած գիւղապետով: Գողութիւն, սպա-
նութիւն, անկարգութիւն Ագուլիսում հաղագիւտ բաներ են: Ամեն-
մի վէճ աշխատում են իրանց մէջ վերջացնել խողալութեամբ: Կով-
կասի աղդ կորած, մոլորւած խուլ անկիւնում մարդիկ կարծես անուղ-
ղակի կերպով ինքնավարութեան քաղցր պատղերը վաճելում են... Փա-
փազում եմ տեսնուշ գոլոցցները, որոնք գաւառներում մի սուանձին չար-
գանք են վաճելու: Խմ բազդից աղդ օրը փորձնական դաս կար հաւոց
լեզւից: Նիւթը «Վերմանացան» գեղեցիկ ոսանաւորն է: Աւրախալի է
տեսնել, թէ ինչպէս ուսուցիչը մանկագրութէն ոսանաւորի մէջ եղած
հարցերն առաջարկում է աշակերտներին և իւր օգնութեամբ ու նրանց
ընդհանուր ոչորի լուծում: Դասի ժամանակ բայցոր աշակերտները գործում
են: Հարցերը մօսաւորապէս հետեւեալներն են—գիւղացին ինչ է սուանում
իւր պարապունքից, թէ բան է երկրագործութիւնը, մշակութեան սխ-
անմը, գիւղացու արտերի միասուելը զանազան պատահարներից, նրա աղ-
քասանալու գլխաւոր պատճառները, նրա հարստահարողները, անասնա-
պահութիւն, շերամապահութիւն և ազն. Դասի առաջին կէսը լաւ է գնում,
բայց ուսուցիչը ողնորւելով սկսում է հարցերը շատացնել, կուտակելու-
մէկից շուտով միւսն անցնել, թոխչքներ գործել: Անպէս որ վերջին հար-

ցերը լաւ չը բացատրեցան, ոմանք էլ սխալ: Ազգպիսի անտեսական զեղցիկ հարցերի հետ շատ զգուշ պէտք է վարւել, մի դասում հաղիւ կարելի է երկուուր վերցնել: Ուսուցիչը ոգևորւելով՝ աչքից թողնում է նոյն պէս պարապմունքը: Չը նակելով դառի վերջին կիսի անաջողութեանը, դարձեալ ալր դասը իւր նոր ուղղութեամբ, մեր արտերին մօտիկ հարցերով, լաւ տպաւորութիւն է թողնում:

Մեր զպրոցներում ազգպիսի ուղղութիւն է հարկաւոր: Երեխան պէտք է ճանաչէ իրան շրջապատող կեանքը, մարդկավիճ գեղեցիկ և վասկութիւնները, նա պիսի առլորի ասարբական ճշմարտութիւններ, վերջապէս նա պէտք է ճանաչէ կեանքի անպատկառ «կողակներին», անխիղճ, անպատկառ հարստանարտղերին, որոնք, «Եւրմանացանի» ասածին պէս՝ գիւղացու արիւնն են ծծում, պարտքի տակ խեղդում և որոնց ձեռքը պիտի ընկնի մի օր անմեղ երեխան ու իւր նման շատերը...

Ուսուցչի զասատւութեան մէջ զվասաւոր աչքի ընկնող բանն էր պարապմունքի ուղղութիւնը, նա (ուսուցիչը) եթէ աշխատի վշւած սխալներից ազատել, շատ արդիւնաբեր կը լինի իւր թափած քրափնքը: Մի բան աչքի է ընկնում: Խմբի ամեն մի անդամը ծգուում է ուսանել և ուսուցանել, լարւած հետեւում է պարապմունքին, նկատողութիւնները փոխանակ պաշտօնական, խայթող կերպարանքի, ընկերական պատկեր են կրում:

Ակուլիսի զպրոցները իրանց բոլոր չարմարութիւնների հետ ունին և մի մեծ անզարմարտութիւն—տղաբայ զպրոցը զոթական, անպէտք ու անզարմար չինութիւն է: Այդ օրը, ժամը երեքին մնաս բարեւ ասելով սիրուն Ազուլիսին և իմ թանկապին բարեկամներիս, վերադառնում եմ Զուլֆի Կարանտինի վերատեսչի խելացի կարգադրութեան հիման վրալ ես ստիպւած եմ երկու օր ու կէս էլ մնալ ուսական ափի վրալ: Ժամը մէկն է, ամենքս լսում ենք հրացանն աւազներ և դուրս թռչում: Մի սոսկալի պատկեր նկարւեց մեր առաջ: Մօտ եօթը պարսիկներ մերկացած սկելով ու լող տարով կարում են Արաքսը, կողակը նկատելով ադ, պահականոցից գատարիկում է ու դասարիկում բերդեանկան, մենք սարսափահար և անթարթ նախում ենք: Զարմանալի լանդզնութիւն, օրը ցերեկով կարանտինի և պահականոցի միջով, որոնք իրարու շատ մօտ են, պարսիկները գետը կտրում անցնում են: Դեռ ուսական ափի վրա նկատում եմ, որ կեանքը քանի զնում էժանանում է: Պարապութիւնից ձանձրանալով՝ վճռեցի գնալ հին Զուղացի աւերակները տեսնել, որ մեզնից չորս վերստաչչափ նեռու է: Նախ մտանք Զուղաց զիւղը, որը նոր է, հազիւ 60 տարու լինի:

Բաւականին մեծ և մաքուր զիւղ է, ունի դպրոց: Մշակում են ցորեն և բամբակ. իրանց մէջ կան մանր վաճառականներ, որոնք բամբակը մաս-մաս առնելով իրանց համոզիւղացիներից, արտահանում են Երեխան. Գիւղում բաւականին թւով նոր ձեր շինւած սենեակներ կան և աները մեծ մասամբ հալտթով են: Աւրախալի է, որ զիւղացիները փոխանակ

րամբաստճքի ու չարախօսութեան, խօսում, վիճում են աւելի կարեռը բաների մասին... Երբ լսում են, թէ մենք կամենում ենք տեսնել հին Զուդապի աւերակները, մի առանձին ոգեորութեամբ պատմում են հոչակաւոր խօշա Խաչիլի՝ մեծագործութիւնների մասին, որն ապրում էր Շահ.Արքասի ժամանակ և լաւոնի էր.իբրև հասարակական գործող մարդ, աչքի ընկնող բարեզործ: Յիրաւի, Խօշա-Խաչիլի կեանքը բերնէ.բերան պատմելով, մի զեղեցիկ աւանդութիւն է կաղմում մատաղ սերնդի համար: Աւերակները համարեա ամբողջովին թաղւած են հողակուտերի ու քարամիների տակ: Միան տեղաւոր պատերի կամ պարիսպների հետքերն են երևում: Աւերակների կիսում հանդիպում ենք մի քարւանսարաւի, որի պատերը զեռ կանգուն են երեսում: զա ժամանակին կանոնաւոր շնութիւն է եղել: Ներսի սպատերին կպահ են տասնեակ խրճիթների աւերակներ: Մեր առաջնորդը բացատրեց թէ, Զուզաէի աւերւելուց լետով, երբ ակմենան ջուզեցիք սկսեցին զանովան տեղերից զադին աջատեղ, սկզբում ապաստանեցան ալս աւերակների մէջ: Ազդ պարոնի հալոն էլ իւր մանկութիւնը այն խրճիթներուն է անցկացրել: Քարւանսարաւի զէմ և զէմը, Արաքսի միւս ափում կանգնած է մի ուրիշ աւելի փառաւորը, որի կարմիր քարով շինւած պատերն անջնաս են և կարծես մի քանի տարւայ շնութիւն է: Մոռացակ լիշել, որ աւերւած զարբասի մէջ մի մեծ, քարէ սիւն կայ, որի հիմքը միշտ քերաւ է Արաքսը: Դա Կոչւում է Շահ.Արքասի թաղու նրբ Շահ.Արքաս առաջին անդամ մտել է Զուզաէ, նրան պատելու համար շինած են եղել ազդ թաղտը, որի վրաէ և ընդունել են պաստաւոր հիւրին:

Պարզ, որոց երեսում է բազնխալի շնքը, բայց ամենից անվնաս ու կանգուն մնացել է զերեզմանաստունը՝ որը բաղկացած է երեք մեծ խումբերից: Ներեզմանաքարերի շատութիւնը ցոյց է աալիս, որ Զուզան խրժանակին մեծ քաղաք է եղել: Մարդ հեռւուց տեսնելով ազդ ուղղա հաւաքանի վրաէ գերեզմանաստուն է:

Ամեն մի զերեզմանի վրաէ ձգած է երկու կամ և և և կէս արշին երկարութեամբ անագին քար, իսկ նրա արևելեան կողմից 2 արշինից մինչև մէկ սաժէն բարձրութեամբ ուղղահաւեաց, քարն կամած՝ կանգնած է մի կոթող, անսպէս որ զերեզմանաստունը ներկայացնում է կոթողների երեք մեծ խմբեր:

Կոթողների այն երեսի վրաէ, որ նալում է զերեզմանին, քանդակւած են անապիսի հրաշալի ծաղկանկարներ, քանդակներ, որ մարդ և հիանում և ապշում է, թէ ինչպէս զարեր առաջ դեղարւեստն ալզքան զարգացած է եղել: Նոյն իսկ ամեն մի կոթող առանձին ձեռվ, ճաշակով է քանդակւած: Անիւում էլ չկան ալդպիսի հրաշալիքներ: Փոխարքան իւր ձանապարհորդաւթեան ժամանակ տեսնելով ազդ զերեզմանաստունը միանգաման հիանում է և հասարակութիւնից երեք քանդակւած քարեր խնդրում:

Տեսակ Խոջա-Խաչիկի և ամուսնու հայակապ չիրիմները, որոնց կիսա-

գմբէթները քակբազման մէջ են: Դատապարտելի է ջուղեցիների անտարբերութիւնը: Անմահ խաչիկի գերեզմանով պարծենալն առեմ, թէ ազդանոգութիւնը: Մեղանից մի քիչ վերև, հսկաչ ձորի մէջ երեսում է Խոջանաչիկի շինած մեծ ջրանցքի հեաքը, որի երկարութիւնը մօտ հինգ վերսաէ: Երեկոյեան դէմ ետ եմ զառնում, ընկղմէելով տիտոր մտածութեան մէջ: Այս, Խաչիկը անթիւ խոշոր գործեր է արել հասարակութեան ընդհանրութեան համար: Եթէ այդ խելացի, անձնուրաց գործողը մեր օրերում լինէր, մեր պինդ երես, եսասէր, ժանկոս կոտէիներ սիրող: Հարուսաները պիտի սաստիկ ամաչին... Միւս օրն արդէն անցել էի Մալր-Արաքսը և պարսից ափումն էի: Խնչակս մենք, նոցնպէս և շատ շատերը մեծ նեղութիւն քաշեցին: Արդէն կամացականութեան աշխարհումն ենք: Պարսկաստանում անցագիրները կապալով են տալիս: Վերցնողը պէտք է և տւած փողը հանէ և աշխատանք անէ, որքան շատ պլոկէ, աճնքան լաւ է: Կարգ կաչ, որ անցագիրը ցոլց տալու ժամանակ խւրաքանչիւր մարդ 20 կոտէկ ընծառ տաք: Քսան կոտէկը երբեմն հասնում է մինչեւ 1, 2, 3, 5, 10 բուրլու, նաևէլով, թէ անձնաւորութիւնը որքան ընդունակ է հարստահարւելու: Պարսից հպատակից, ամեն անզամ անցնելլու, անցագիրը ձեռքից առնում էն, ախնպէս որ առանց անցագիրի ուր սիրտ ուզէ, կարող ես զնալ: Անցագրի հակողները աշնպիսի ազմուկ, ճղճըզոց են հանում, որ Ասուած հեռու տանի: Սպառնալիքներ անցնողին, նրան կասկածաւոր են համարում, սարսափելի անքարուական հաչճեանքներ թափում: Եթէ մարդը խեղճ է, մէկ հարւածին հինգը չի հասցնում, մէկ խոսքի դէմ տասը չի ասում, նրա բանը պրծաւ, մինչեւ իսկ բանդ են կոխում և եթէ հնդից մինչեւ տասը բուրլի շառնեն, բաց չեն թողնի: Ո՞ւր է զատ, ո՞վ է զատաւորը, պաշտպանը, խելքդ զլուխող հաւաքիր, զատն ու արդարութիւնը բուռնցքի մէջ է, խփիր, ծեծիր պաշտօնեափին, միրզալին, զլուխը կոտրիր, միան թէ կարողանաս 10—20 բուրլի ձգել զրանց բերանը:

Ես այս շաղորը տեսնում և ասում եմ, չը լինի Աֆրիկակումն ենք: Հազիւ միրզաները ձեռքից պրծած, ձիապաններն արդէն իրար գլուխ են կոտրում մեղ համար: Վէկը վերցրել էր մեր մաֆրաչը, միւսը խուրջինը, երլարզը վերարկուն և երեք տեղից մեղ քաշքըչում էն, որ սրա կամ նրա ձին վարձինք: Գէպքից օգուտ քաղելով՝ ուզում էի Նախավիկաչ վանքը տեսնել, որը մեզանից 12 վերատ հեռու է, Արաքսի ափին: Հաչից վնտոչ ձանապարհ ընկաւ: Զուղաչ զիւղի դէմ ու զէմը իմ առաջ բացւեց Արաքսի խոր ձորը, որի երկու կողմից վիթխարի սեպածի ժամանում էն դէպի երկինք: Հարունակ լսում եմ կաթաների կրկըչոցը, նրանք երբեմն ահագին խումբերով լանկարծ թռչում են մեր առաջից: Երեք հաս վագրի տղեամներ արագ բարձրանում են զէպի ժամաները: Նրանք իրանց անմատչելի բնակարանից իջել էին Արաքսից ջուր խմելու, մենք նրանց խանդարեցինք: Ճանապարհը, որին մի ահռելի ժաւում էր, բա-

Ժանւեց երկուսիւ Ընտրում ևնք երկրորդը, որը մի բարակ շաւիղ է և տառում է դեպի վանք, Յըեացին մի խումբ ծաւեր, ահա և Նախավկան իւր գեղեցիկ դիրքով: Բայց զա աւելի ամբողջի է նման, քան վանքիւ Նա ընկած է խոր ձորի մէջ, մի փոքրիկ հարթութեան վրաւ Վաճառքը դեղեցիկ չէնք ունի, միան կաթողիկէն ցածր է: Չորս կողմի ահազին, հասու պարսպը 2—5 սաժէն բարձրութիւն ունի: Վաճառքին կից կաէ և մի ուրիշ շինութիւն, որն ունի 20 ի չափ սենեակներ: Խնչակն երեւում է, հնումը զա ունեցել է մի ամբողջ միաբանութիւն, իսկ հիմու ամաւի դրութեան մէջ է: Միան երկք ամիս է, որ այդակ վանահար նշանակուած է մի երիտասարդ վարդակներ, Վահան անռւնով: Արդէն սկսել է վանքի տնտեսական մասը հողատարութեամբ բարելսունել, մի քանի կով ու առջառներ է ձեռք բերել, փոքրիկ անտառը, որի ծառերը իւր նախարդի օրու կտրասոել, փչացրել են, կարգաւորում է: Տարէնը մի անդամ մեծ ուխտագնացութիւն է լինում այդ վանքը, ուր գալիս են մինչև անդամ պարսիկ խաներ, որոնք երբեմն իրանց ջերմեռանդութեամբ հանդերձ աւելորդ չեն համարում վանքի թէի բաժակները զսպանալ:

Գերապատիւ Վահան վարդակետի նախորդը թող, ագահ մարդ է եղել, անապէս որ իւր դուրս վունտելու ժամանակ վանքն ամառութեան է հասցրել: Այս տեղեկութիւններն ինձ հաղորդեց ժողովուրդը:

Միւս օրը վանքը թողի, լաւ տպաւորութեան տակ:

Երկու ձի վարձեցինք խրաֆանչւրը մինչև Սէլդաւար գիւղը 7½, կռանով (կռանը մօտ 30 կոպէկ է): Զիաները թամբ չունին, այլ ահազին, անձոռնի փալաններ են: Երեկողեան դէմ մուս բարոսի արինք Մակր-Արագսին և ճանապարհ ընկանք: Դիու երկք վերստ էինք զնացել, երբ թուրքն ակնարկեց, թէ վարձը ոչ թէ 7½, կռան է, այլ աւելի:

Արդէն բաւականին ընտելացել էի զրանց բնաւորութեանը: Բարկանում եմ, ձիու զլուկը ևս չուս տալիս և ասում:

—Դու անպիտան ես, ստախոս, ես ուզում եմ ուրիշ ձի վարձել, Ընկերս նոյնարէս զարձաւ: Նա մի փոքր դիմադրութիւնից չետու կակղեց և խոստովանում է, որ ինքն անամօթաբար սուս է խօսացել: Երեկողեան իջնանեցինք Սույա պարսիկ դիւղը, մեր ձիապանի տանը: Բնակարանը բաղկացած է միան մի բաժանմունքից, պատերը սովորականից աւելի բարձր են: Տան երեսին ամեն բան թափթթված է: Մի կողմում հացն է անխնակ վեր լցրած, նորա կողքին կեղանա թիակներն ու բանը, մի անկիւնում աթար է դարսած, դրանց առաջը ձիու փալանն է, ան կողմում պարսկական անձոռնի ստամաններ... Մնացած մասը, ուր թոնիրն էր, իրանք էին բանել, մենք էլ մեր շղերով տեղաւորեցանք թոնիրի միւս կողմում: Թէ սունը, թէ իրանք սաստիկ կեղանա են, խեղճ, վատ հագնւած: Ամեն կողմից զարշահոսութիւն է բուրում, չունչ քաշել անհնարին է: Ամեն ներս մոնող զողի ագահ աչքերով նախում է մեր հագուստներին, չորերին:

Մեր նաշխառն խուրցինը, որի մի աչքը կողպած է, ամենքի սիրտը պղպառում է: Կարծում են, թէ գանձ ենք տանում: Մօտենում են ազդ գալթակղութեան քարին, ձեռքով շիռում, ամբողջ րոպէներով աչքերն անամօթաբար ուսեռում նորա վրաչ, ապա մի քանի հարցեր տալիս, կտորած սրտով հեռանում են: Ամեն մէկն իւր մէջ մեղ թալանի մի քաղցր պատառ էր համարում: Գրանց կարծիքով՝ ով Ռուսաստանից է վերադառնում, նա անհամար փող ունի: Սըսըւալով ներս են մտնում երկու կիճ, մինը տան մեծն է, միւսը ջահիլ հարսը: Վերջինը մեղ նկատելով ծածկում է երեսը և մի անկիւն քաշում: Յաւալի, սրտաշարժ է տեսնել ազդ թըշւառ, արհամարտած արարածներին: Աշնանալին սառը քամին գուրսն արդզէն սուլում է, դրանք բորիկ են, մինչեւ ծնկները բաց, սրունքներն արմից այլուած: Մարմինները ձածկւած են անձունի ցնցոտիներով, վիրակից զըցում են մի կեղտոտ ծածկոց: Տան բոլոր ծանր աշխատանքները քաշել, ամուսնուն օգնել, լինել նրան հլու, հնազանդ, չը խօսել, օտարի երեսն անգամ նաէնը իրաւունք չ'ունինալ և ալս բոլորից լետով, երբ նորա գեղեցկութիւնը խամրի, լիրը ամուսինը կարող է նրան շպրանչլ վտղոց և նորը, թարմն ու զեղեցիկն ընտրել: Արհամարհւած կինը մարդկալին էակ լինելովն հանդերձ կենդանի չէ, ինչ է: Վրդովւած եմ, ազդ յաւալի տես սարանը ինձ ճնշում է: Պարկում եմ, աշխատելով ստիպմամբ քնել, ազդ տխուր տեսարանն ինձնից հեռացնել:

Երկու ժամ հազիւ եմ քնել, վեր եմ թռչում, զլուխս սաստիկ յաւում է, չունչ չեմ կարողանում առնել. իսկովն շտապում եմ դուրս, հաւեաթը, և երեք ժամ անընդհատ ման գալիս: Արշալուսը բացւելուն պէս ճանապարհ ենք ընկնում: Պաղ քամին փշում է, լաւ փաթաթւում ենք: Ճանապարհը մի քիչ լետով բաժանում է երկուսի, մէկը ձորով է գնում, որ շատ վտանգաւոր է, աւազակների բուն, միւսը սարահարթով, համեմատաբար աւելի տափահով: Թուրքը մտմրտուքի մէջ էր, վերջապէս ընտրում է երկրորդը: Արեն արդէն դիպել է, գնում ենք վատ մշակած արտերի միջով, թուրքերինն է: Ճանապարհը քանի գնում վատանում է, անտանելի դառնում: Այս կողմերում սալ չեն բանեցնում, ալ ձի, ջորի և էշ: Զիապանն ուրախուրախ դարձաւ մեղ՝

—Հը՛, դարդ միք անի, չէք թալանւի, տեսէք ձեր խաթերը գնում եմ երկար, վատ, բայց ապահով ճանապարհով, ի հարկէ մի քանի կուան սուելի կը բաշխէք, դուք հարուստ էք:

Սկսում է երգել և ապա ընդհատելով մի ծանր մխ քաշում և նորից դառնում մեղ:

—Ա՛յս, կարսնտինում պատահած աշն զեղեցիկ, նոր կարգւած հարսն ինչքան դուրեկան էր, բոլով բուսաթով. մւս զառնալիս պիտի երթամ նրան փախցնեմ, ինչ կը լինի, թող լինի:

—Չէ որ դու կին ունիս, հարցնում ենք մենք:

—Ե՞ն, բան չունիս, խարաբ է եղել, էն «գեօզալ», թարշանն ունենալուց վետոյ զրան վոնտելին հեշտ է. ախ ևս նորա կեանքին մեռնեմ, ուզենամ հինը նորի առաջ «զարաւալ» կը շինեմ (բան անող կին). Ահա ձեզ պարսիկ զիւզացու կարծ և կտրուկ խոսքերը կնոջ մասին... Գնացածներս տեղը անջուր լինելով, անմարդաբնակ է, Աջ ու ձախ տարածւած են բլրաւին ահագին խումբեր, որոնց միջից բացւում է մի ընգարծակ զաշտալալուր:

Մեղ հանդիպում են երկու հետքու ճանապարհորդներ:

Բարեւ տալուց վետոյ նրանց առաջին խօսքն եղաւ:

—Իսէր Աստուծոյ միք զնա, ձեղ կը թալանին: Լուսաղէմին քիչ միաց մեղ սպանէին, հինգ վեց անգամ հրացան արձակեցին մեղ վրայ և մօտենալով բզաւում էին՝

—«Ո՞նչ ունիք չունիք, թափեցէք: Ճարներս կտրած, ձաղն տվինք:

—Եկէք տարեք: Վրայ են զալիս և տեսնում, որ աղքատ մարդիկ ենք, մի քանի հարւած տէին, մօտներիս ութը կուանը (կուանը սուսական 30 կոպէին է) խլեցին և հայնովելով հեռացան, ափսոսալով իրանց փամփուշներին:

Իրաւ որ բաւականին վտանգաւոր է, կամենում ենք մօտակաչ զիւզից մարտինի հրացանով մի մարդ վարձել, այն պայմանով, որ հրացանը մեղ մօտ լինի, ազապէս վտանգաւոր է: Գիւղում մարդ չը գտնեց, մի փոքր տատանելուց վետոյ, շարունակում ենք ճանապարհը, ունենալով մէկ բէ. տղւէր և երկու սուր, որոնք բերդեանկալի մօտ ոչինչ են: Քանի որ վտանգ կար, թուրքն էլ ուղում էր, որ մարդ վարձէինք, բայց երբ աւազակների չը հանդիպեցինք և ճանապարհն աւելի ապահով դարձաւ, դա մկանց լեզուն երկարացնել.

—Մարգ ինչո՞ւ էք վարձում, ես ձեղ անվնաս տեղ կը հասցնեմ, ես սաղ վինեմ ձեղ համար, Ես, ոչ ոք ձեր մատին դիպչել չի կարող. այն փողը որ մարդուն պիտի տաք, ինձ տւէք: Մինք միայն լուռ զարմանում ենք նորա լրտութեան վրայ: Ճանապարհին շարունակ զալիք վտանգները կրկնապատկում է, աշխատելով միշտ մեղ երկիւղի մէջ պահել և հինց ազգ ժամանակ իրան ներկալացնում է մեր պահապան հրեշտակը, մեր պաշտպանը ու կրկնում:

—Ինձ փող տւէք, փող,

Նա ինքն առաջին թալանողը կը լինէր մեզ, եթէ երեք չափանի մարդիկների ներկացութեամբ չը վարձէինք նրան: Նալում, նալում է մեղ, ծուխոր պնչներիցը դուրս գալիս, բայց ձեռքումը մար չը կայ: Մի խօսքով, ալսուել կեանքը չափից դուրս էժան է: Սպանելը, թալանելը բոլորին սովորական բան է: Աչս կատարեալ անիշտան, վագրենի, աւազականոց երկրի մէջ միմիրակ զատաւորը բերդեանկան կամ մարտինին է: Մտել ենք Միլլիուզ զաշտը, մեր ճանապարհը ձգւում է սորա արևելեան եղրով, բլուրների շղթափի տակով: Այս ահագին հեռաւորութեան վրայից Մասիսը մի անգամ ևս ցոյց տւեց իւր սպիտակ զագալթը, կարծես կամենում էր վերջին հրաժեշտը տալ:

Դաշտուր, որ նեղ ու երկար դիրքով հիւսիսից հարաւ է ձգւում, չուր չ'ունենալով, բոլորովին անմշակ, անսէր է, միայն եղերքներում զիւղեր կան:

* * *

(Բ Ա Ց Ր Ը Ն Ի Ց)

Թարգմանութիւն Լենենցի

Որպէս երբեմըն անցորդի ուշքը
Պազ տապանագիրն իր վլալ է գարձնում,
Թող անունս էլ քո մըտազբազ աչքը
Գրաւէ, երբ տեսնես այս էջը տրտում։

Գուցէ, երբ կանցնեն տարիք մի քանի,
Կարգաս այդ անունն արգէն մոռացւած,
Սլնժամ իմացիր, որ չեմ կենդանի,
Որ սիրտըս մըռայլ ալստեղ է թաղւած։

ՀԵՂԻՆԵ

Վ Ե Պ

Տ. Ի. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շաբունակութիւն ¹⁾)

XXIII

Կոր տարու երրորդ՝ օրն էր: Խշանուհի Շակունին՝ բազմաթիւ
այցելու թիւններից յողնած՝ իւր տանը հիւրասենեակում թուղթ էր
խաղում մի ժանօթ կնոջ հետ:

—Աչ մի բան ինձ այնպէս չի հանգստացնում ինչպէս բէզիկ
խաղալը, —զարձաւ նա զէսվի Հեղինէն, որ կանգնած էր նրա կող-
քին զլիսարկն ու վերարկուն ձեռքին:

Դու, ինչպէս տեսնում եմ, տեղ ես դնում:

—Այո, գնում եմ Սովիա Եակովլինայի մօտ:

—Դու էլ համայ երբեմն բաներ կ'ասես հա՛, հոգիս:

Այդ ինչ Սովիա Եակովլինա է:

—Տիկին Ասատուրովա: Միթէ ծանօթ չէք նրա հետ:

—Ոչ, արհամարհանքով պատասխանեց իշխանուհին:

1) ՏԵՌ ԱՄՈՒՋՆ- 1891 № 1, 2, 4, 5, 7—8, 9, և 10:

Զարմանում եմ, խաչը, ինչպէս չես կարողանում թողնել այդ սովորութիւնդ, որ ում հետ պատահի ծանօթանում եւս Ախ, մարի ա՛ժ ունեմ, քիչ էր մնում չը գրեի:

Ոգեսորւելով լաւ խաղաթզթերով, իշխանուհին բոլորովին գրաւեց խաղով և չը նկատեց, որ Հեղինէն զուրս գնաց:

Երեկոյեան ժամի իննին մօտ կը լինէր, որ Հեղինէն վերադարձաւ տուն:

Սրահում կատարւող իրարանցումից նա հասկացաւ, որ քեռակինը հիստերիկա է եղել: Նա շտափով զիմեց դէպի ննջարանը, բայց դահլիճովն անցնելիս յանկարծ պատահեց Ասունուն:

Ասունին վախեցած նայում էր չորս կողմը:

—Ալեքսանդր Վասիլիչ, բարեւ, հազար բարի, սաստիկ զարմացած և ուրախացած բացականչեց Հեղինէն:

Այս ո՞ր խաչիցն է, որ այստեղ էք, ե՞րբ էք եկել:

—Երկու ժամ հաղիւ լինի, որ եկել եմ: Պաշտօնս փոխել են այստեղ:

—Իսկ այստեղ ի՞նչ է պատահել, չէ՞ք իմանում:

—Իշխանուհուն նամակ էի բերել Միխայիլ Պետրովիչից: Նայելով այն ներգործութեանը, որ... այդ նամակը ունեցաւ ձեր քեռակնոջ վրայ...

—Հա, հա, հասկացայ բանն ինչումն է, ընդհատեց նորա խօսքը Հեղինէն: Աւելի լաւ. թող վերջապէս ամեն բան բացւի:

—Հեղինէ, —լսւեց իշխանուհու զիլ ձայնը:

Նա վագեց քեռակնոջ մօտ, իսկ Ասունին, այլ ևս անյարմար համարելով իւր այնտեղ մնալը, գնաց տուն:

—Այս ինչե՛ր է գրում Միքայէլը քո մասին: Ճի՞շտ է: Ձես զղջում արածներիդ վրայ:

Հեղինէն բացասաբար շարժեց գլուխը:

—Ինչո՞ւ էիր զու ինձ խաբում: Առ, կարդա նամակը. այնքան զգացմունքով զբւած, որ առանց արտասուքի չի կարելի կարդալ:

Իշխանուհին խորը հոգոց քաշեց ու թաշկինակը սեղմեց աչքերին:

—Քեռակին ջան, թողէք այդ հարցը. ձեր սիրտը զուր տեղը մի նեղացնէք. ես ուրիշ տեսակ վարւել չի կարող:

—Այ քեզ խօսք: Զէ որ զրանով համ ինքու խաղք կը լինես,

համ էլ ամբողջ ազգուտակդ խայտառակ կ'անես Խելքդ գլուխդ
հաւաքիր, ամօթ ունեցիր, — զոռում էր իշխանուհին:

Երբ որ իշխանուհին տեսաւ, որ ոչ ազաւանքով, ոչ արտասու-
քով բան չի դուրս դալիս, մի քանի օր անցնելուց յետոյ կանչեց
իւր մօտ Հեղինէին ու սաստիկ խիստ կերպով ասաց.

Ես չեմ ուզում, որ քեռուդ անարատ անունը խայտառակւի:
Եթէ մինչև վաղը խելքի չը գաս, էլ իմ աչքիս չ'երևաս:

— Ինձ համար շատ ծանր է ձեր սիրալ ցաւացնել, բայց...

— Այսուհետեւ էլ դու իմ ազգականը չես, չորչոր կարեց նորա
խօսքը իշխանուհին:

Էլ քո ոտքը իմ տան շէմքը չը տեսնի:

Հեղինէն մի բոպէի շափ այնպիսի դրութեան մէջ ընկաւ, կար-
ծես քարացած լինէր, բայց այդ շուտով անցաւ և նա պատասխա-
նեց հանգիստ կերպով.

— Այս բոպէին կը կատարեմ ձեր ցանկութիւնը:

— Ասիր Հեղինէ, աւելի մեղմ ձայնով սկսել իշխանու-
հին. դու բոլորովին որբ էիր, ես քեզ իմ տունս ընդունեցի, պա-
հեցի, մեծացրեցի, ուսում տւեցի, հարազատ մօրից աւելի սիրեցի,
փայփայեցի, իսկ դու այժմ ոչ մի բանի տեղ չես դնում իմ խօսքա:
Այս էր լինելու իմ բոլոր երախտիքներիս վարձատրութիւնը: Նատ
շնորհակալ եմ, շատ լաւ ես անում: Պոնէ քեռուդ խնայէիր ու ծե-
րութեան օրը ինեղճին խաղք ու խայտառակ չ'անէիր:

Օ՛ֆ, սիրոս գնում է, հաւաչեց իշխանուհին քժին մօնեցնե-
լով գեղի սրւակը:

Հեղինէն խնամքով բարձրացրեց բարձը և շալով ծածկեց քե-
ռակնոջը, բայց նա անհամբեր շարժումով մերժեց նորա ծառացու-
թիւնները:

Հեղինէն տխուր-տրառում դուրս եկաւ ննջարանից հանդարտ
քայլերով:

Հետեւ օրը նա Ասունու օգնութեամբ դտաւ ու վարձեց եր-
կու սենեակից բաղկացած մի բնակարան և հէնց նոյն օրը քաշւեց
այնտեղ իւր երեխակի ու դաշեակի հետ:

Հիմա՝ որ Հեղինէն ազատ շունչ քաշեց և երկուր էր, որ դո՞ւ
էր իւր դրութիւնից, չը նացելով այդ դրութեան անորոշութեանը:

Մի որ և է պարապմունք գտնելու և առհասարակ ապագայի մասին դեռ չեր մտածում Հեղինէն։ Սկզբի օրերը նորա միտքը ամբողջապէս զբաղւած էր անցեալով և ներկայ դրութեան նորութեամբ։

Մինչ այդ՝ Ամիրանովից սուացւում էր նամակ նամակի յետելից, որոնցով նա աշխատում էր համսգել կնոջը հաշտել իւր հետ։

Հեղինէն ամենեւին չէր կակում և բացէ ի բաց հրաժարում էր այն փողերից, որ մարդը առաջարկում էր նրան ապրուսի համար։

Ասունին շուտ-շուտ գնում-գալիս էր Հեղինէի մօտ և առհասարակ շատ հետաքրքրում էր նորա դրութեամբ։ Խոկապէս ասած, դէպի Հեղինէն զգացած բարեկամութիւնն էր միակ պատճառը, որ Ասունին համաձայնել էր հեռանալ Թամար, ուր նորա համար չափանց ուրախ էր անցնում կեանքը, և դալ Պետրիզորսկ, ուր նա կարող էր շատ բանում օգնել Հեղինէին։ Այդ բանը Հեղինէի սկի մոքովն էլ չէր անցնում։

Մի օր Ասունին Հեղինէի հետ խօսելիս հարցրեց, թէ արդեօք լաւ մտածե՞լ է նա իւր առաջայի մասին։ Հեղինէն այդ օրը այնպիսի լաւ տրամադրութեան մէջ էր, որ ուշադրութիւն չը դարձրեց Ասունու տւած հարցի լուրջ եղանակի վրայ։

— Ի՞նչ էք մտադիր անելու, տիկին Հեղինէ։

— Ճիշտ որ, փողերս վերջանալու վրայ են։ շատ լաւ էք անում, Ալեքսանդր Վասիլիչ, որ ուշադրութիւնս դարձնում էք այդ բանի վերայ։

Այդ ասելով Հեղինէն պարզ սրտով ծիծաղեց։

— Գիտեմ, տիկին Հեղինէ, որ դուք նման չէք մեր երիտասարդութեան այն մասին, որ ոգևորում է, բայց երբէք չի աշխատում լուրջ կերպով իրագործել իւր այդ ձգտումը, սակայն...

Այդ խօսքի վրայ Ասունին կանգ առաւ։ կարծես խօսքը դէմ առաւ բգումը. նորա ձայնի մէջ լսում էր զսպած կսկիծ։

Զգացւած բարեկամի կարեկցութիւնից Հեղինէն իւր աթոռը աւելի մօտեցրեց նրան և երախտագիտական հայեացք զցելով նորա վերայ, ասաց։

— Ե, Ալեքսանդր Վասիլիչ, չը պէտք է այդպէս յուսահատել, աշխարհս միայն չար մարդիկներով չի լցւած։ Միթէ ինձ համար մի դործ չի գտնելի։

Ասունին ուզում էր մի կերպ հասկացնել Հեղինէին, որ հասարակութիւնը նորա բացառիկ դրութեանը շատ թշնամաբար է վերաբերում և, հազիւ թէ գտնւի մի մարդ այդ հասարակութիւնից, որ նրան այժմ համակրի, բայց Հեղինէի գէմքը անսպէս փայլում էր յոյսի արտայաջութեամբ, որ նա սիրո չ'արեց հիասթափեցնել նրան և այդ պատճառով լոեց:

Հեղինէն ուշադրութեամբ նայեց Ասունու երեսին և, կարծես գուշակելով նորա մտքերը, ասաց.

—Դուք այժմ մտածում էք, Ալէքսանդր Վասիլիչ, թէ որքան գժւար է կնոջ համար չ'ընկճել հազար ու մի խոչընդուներից, մարդկանց շարակամութիւնից և այն նախաւաշարմունքներից, որոնցով խմորած է մեր հասարակութիւնը և որոնք թողլ շեն տալիս, որ կանայք ազատ շունչ քաշեն ու իրանց աշխատանքով, ծանր աշխատանքով անկախութիւն ձեռք բերեն: Հը՞, ճիշդ գուշակեցի ձեր մտքերը:

Ասունին տխուր զլխով արեց և մտածեց, թէ որքան բախտաւոր կարող էր լինել Հեղինէն Սահառունու հետ, մինչդեռ այժմ ովզ գիտէ որքան անարդանքների կարող է ենթարկել նա:

—Ինչու ացղպէս տխրեցիք, Ալէքսանդր Վասիլիչ: Ես սովորել եմ միշտ ձեզ ուրախ ու ասող-խօսող տեսնել:

Ասէք, խնդրեմ; շատ ժամանակ է, որ Գհօրդի Ալէքսանդրովիթից տեղեկութիւն չունէք:

—Երէկ նրանից նամակ ստացայ:

Հեղինէն ուրախացաւ և մի քիչ յանդիմանորէն նայեց նորա վերայ:

—Ի՞նչ է զրում:

—Կ'ու զէք կարդացէք:

—Կարելի՞ է. ուէք տեսնեմ, աշխուժով ասաց Հեղինէն ու Ասունու ձեռքից խլեց նամակը:

Նամակը ամբողջապէս Հեղինէի մասին էր:

Հեղինէն կարդալիս մէկ լաց էր լինում, մէկ ծիծաղում էր: Այդ լացն ու ծիծաղը բախտաւորութեան լաց ու ծիծաղ էին, բախտաւորութեան, որի պատճառը Սահառունու սէրն էր:

—Կ'ուզէք պահեցէք այդ նամակը ձեզ մօտ, մի քիչ տատանելուց յետոյ ասաց Ասունին:

Հեղինէն չը սպասեց, որ Ասունին կրկնի իւր առաջարկութիւնը
և մի քիչ շփոթւելով նամակը դրեց դրամնը ու մտքի հետ ընկաւ:

Ասունին լուռ նայում էր Հեղինէն և հրճում:

— Ինչ էք կարծում, արկին Հեղինէ, լաւ չի լինիլ, որ Գէօրգին իմաց տամ ձեր այժմեան դրութիւնը:

— Զէ, չէ, այդպիսի բան չ'անէք: Եթէ ես կարողանայի գնալ
նորա մօտ, այն ժամանակ ուրիշ է, բայց այժմ...

Այդ րոպէին դրան շէմքին երեւաց դայեակը երեխան զրկին:

Այ, սա է ձեռք ու ոտքս կապում, աւելցրեց Հեղինէն գորովանքով գիրկն առնելով երեխային ու համբոյներ դրոշմելով նորա
երեսին:

Դայեակը սկսեց հաւաքել սեղանի վրայից թէլի սարքը:

— Ձեր երկիւղը շատ հիմնաւոր է, ես ոչինչ չունեմ դորադէմ:
բայց մի մոռանաք, տիկին Հեղինէ, որ Սահառունին ինքը կարող է
գալ այսուեղ կամ գոնէ կարող է կարճացնել իւր արտասահմանում
մնալու ժամանակամիջոցը:

— Այ հէնց իմ վախս էլ այդ է. նա չը պէտք է զայ այսուեղ,
վճռաբար պատասխանեց Հեղինէն: Նորա ինձ մօտ լինելը սաստիկ
կը գրգուի Միհայիլ Պետրովիչին և այն ժամանակ, այն ժամանակ...
նա կը իսլի իմ ձեռքից իմ՝ հրեշտակիու:

Երեխայից զրկւելու մասին մոտածեն անդամ՝ բաւական էր, որ
Հեղինէի դէմքը այլայլէր:

Ոչ, այդ չի լինիլ, երբէք չի լինիլ, սաստիկ յուզւած բացա-
կանչեց Հեղինէն և երեխային պինդ սեղմեց գրկումը:

Վերջապէս ինչու պէտք է Գէորգը այժմ՝ զայ Պետրիգորսկ, մի
քիչ անցած աւելի հանգիստ էի, աւելցրեց նա: Նամակներին նայելով
նորա զբաղմունքները այժմ լաւ են գնում:

Թող նա մնայ Ֆրանսիայում մինչև որ հասնի իւր նալատակնն
ու յետոյ գնայ իւր հայրենիքը: Նա հասարակութեան համար ան-
հրաժեշտ մարդ է. թող նա ազատ, առանց արգելքի իրազործի
իւր նպատակները, ես չեմ ուզում խոչընդունելի լինել:

— Բայց այդ զոհաբերութիւնը անտանելի տանջանքների աղ-
բիւր կը լինի ձեզ համար:

— Է, Ալէքսանդր Վասիլիչ, ես աւելի վատ օրեր եմ՝ քաշել: Ես

վճռել եմ ոչինչ չը յայտնել նորան; Խնչու զուր տեղը վրդովեմ նորա հոգու անվորրութիւնը, երբ որ այժմ աւելի քան երբ և իցէ նորան պէտք է այս անդորրութիւնը. թող նա հանդիստ գնայ իւր ճանապարհով: Նա էլ քիչ չի կուել կեանքի հետ, այժմ թող նա քաղի իւր բազմամեայ աշխատանքների պառողը:

Հեղինէի ձայնը աւելի ու աւելի քիչ էր դողում և աւելի հասաւատուն էր դառնում:

Խ'նչ վսեմ անձնուրացութիւն է, որքա՞ն ճիշտ է հասկանում ճշմարիտ սիրոյ նշանակութիւնը, մտածեց Ասունին խորախորհուրդ հայեացքով նայելով Հեղինէին:

—Ես ու դուք, Ալէքսանդր Վասիլիչ, մեր խօսակցութեամբ աննկատելի կերպով քնացրեցինք Գէորգիկին: Օգնեցէք ինձ՝ տանեմ անկողին դնեմ նորան:

—Զեր էլ քնելու ժամանակն է, տիկին Հեղինէ:

—Մի բան էի ուզում ասել ձեզ: Գրէք Գէորգին, որ ինձ գրած նամակները ձեր հասցէով ուղարկի:

—Նատ լաւ: Էլ ուրիշ յանձնարարութիւն չունէ՞ք:

—Զէ, շնորհակալ եմ: Նուաշուած եկէք մեզ մօտ, ինորեմ:

Ժամի տասնըմէկին մօտ կը լինէր, որ Ասունին դուրս եկաւ Հեղինէի մօտից:

Նա երկար ժամանակ գտնւում էր իւր այդ երեկոյեան լսածների քաղցր տպաւորութեան տակ:

XXIV

Միւս առաւօտեան Հեղինէն վերկացաւ շատ վաղ՝ աղօթարան բացւելիս՝ և սուրճը խմելուց յետոյ գնաց պարտէղը:

Խնչ Թ-սից դուրս էր եկել այս առաջին անդամն էր, որ նա լուրջ կերպով սկսեց մտածել իւր դրութեան մասին: Երբէք իւր կեանքում նա այնքան ուշի ուշով չէր քննել իւր ընդունակութիւնները ու աշխատել որոշել, թէ ինչ գործի համար է աւելի նախապատրաստած ինքը: Իաց այդ հարցը շատ չը դժւարացրեց նորան. նա կանդ առաւ մանկավարժական գործունէութեան վրայ և վճռեց իրագործել իւր վաղուցւան բաղձանքը—գիշերօթիկ ուսումնարան

քանալ երեխսաների համար: Նա մի քանի տարի տեսականօրէն ուսումնասիրել էր մանկավարժութիւնը և զգում էր, որ ինքը կարող է բարեխղճօրէն պարապել մանուկների կրթութեամբ: Բացի այն, որ բաւականաշափ տեսական հմտութիւն ունէր, նա կարող էր լաւ մանկավարժ լինել և այն պատճառով, որ չափազանց սիրում էր երեխսաներին, մեծ համբերութեամբ էր վերաբերում նրանց ու գիտէր վարել նրանց հետ:

Ճաշից յետոյ նա գնաց տիկին Ասատուրովայի մօտ և յայտնեց նրան իւր դիտաւորութիւնը: Տիկին Ասատուրովան պատիանում էր այն ասող-խօսող ու բարի հասակաւոր կանանց թւին, որոնք ամենքի գործերից տեղեկութիւն ունեն և ամենքի հետ վարել գիտեն: Ամենքը մի տեսակ բնագրմամբ՝ վառահարար էին վերաբերում նրան. նա ամենքի համար ունէր սիրալիր ժպիտ ու քաղցր խօսքեր:

— Խորհուրդ տւէք, Սովիա Եակովլենա, ո՞ւմ՝ դիմեմ՝ որ օգնի ինձ դուք այսուեղ ամենքին ճանաչում էք:

— Աւրախութեամբ, հոգիս, դուք զիտէք, որ ես ձեռքիս եկածը ձեզնից եմ ինալի, բայց այսուեղ բոլորը ձեզ ճանաչում են իբրև իշխան Շակունու քրոջ աղջկան և առանց իշխանուհու խնդրելուն ոչոք ձեզ չի օգնիլ:

— Զէ, որ մեռնեմ ես իշխանուհուց բան չեմ խնդրիլ, նա ինձ տանից համարեա դուրս արեց... Ափսոս, քեռիս այսուեղ չէ:

— Միթէ կարծում էք, որ նորա այսուեղ լինելը կարող էր մի որ և է նշանակութիւն ունենալ: Նորա տանը ամեն բանը կնոջ կամքովն է կատարւում: Նա հէնց ինքն էլ իւր կնոջ կամքովն է նատում՝ վերիենում: Զէ, սիրելիս, հէնց այսօր և եթ զնացէք իշխանուհու մօտ ու աշխատեցէք համոզել նրան, որ ձեզ օգնի. Հօանսիրտ զազան չէ, գուցէ համոզւի:

Հեղինէն լուռ ու մոտախոհ լսում էր:

— Զէ՛, չէ՛, խնդրելու մասին ինձ ոչինչ մի ասէք, այնպէս բացականց նա յանկարծ՝ կարծես մի բան խայթեց նրան:

Մի ուրիշ խորհուրդ տւէք ինձ:

Այ խօսեցէք մեր Ալէքսանդրի հետ Երեխսերք, չը գիտէ՞ք, առանն է բիձան թէ չէ:

Այ գալիս է, ուրախուրախ աւելցրեց նա, դուրս նայելով պատուհանից, և փոքր աղջկանը ուղարկեց դուռը բաց անելու:

Ասունու հետ երկար խորհրդակցելուց յետոյ Հեղինէն վճռեց զնալ զիմնազիայի վերատեսչի մօտ, խնդրել օգնի իրան, որ գիշերօթիկ ուսումնարան բանալու թոյլաւութիւն ստանայ:

Վերատեսուչը ծիծաղեց լսելով Հեղինէի խնդիրքը և կասկածուհայեցք գցելով նորա վերայ, ասաց.

—Կարո՞ղ էք արդեօք այդ գործով պարապել, տիկին: Հօ այդ բանի մէջ ուրիշ... ինչպէս ասեմ, ուրիշ նպատակ չը կա՞յ:

Հեղինէն զարմանքից աչքերը չոեց:

—Ի՞նչ: Ես ձեզ չեմ հասկանում:

—Ես ուզում եմ ասել, տիկին, շողոմքոր ձայնով սկսեց խօսել վերատեսուչը, լրաբար նայելով Հեղինէի վրայ, որ շատ քիչ է պատահում, որ ձեզ պէս ջահէլ ու գեղեցիկ կանացք իրանց նւիրեն այդպիսի ծանր ու ձանձրալի գործունէութեան:

—Ջահէլութիւնն ու գեղեցկութիւնը ինչ կապ ունին մեր խօսակցութեան առարկայի հետ. պարոն, ես ձեզ չեմ հասկանում, զայրացած պատասխանեց Հեղինէն:

Նա սաստիկ ծիդ գործ ու պահեց արտասուքը, որ քիչ էր մնում թափէր աչքերիցը:

Ժամանակի կորուստ եմ համարում այլ ևս ձեզ հետ խօսել այդ հարցի մասին, դողդոջուն ձայնով աւելցրեց Հեղինէն ու ուզում էր դուրս գալ, բայց վերատեսուչը կարեց նորա ճանապարհը:

Հեղինէի աչքերը այնպիսի ազնիւ արտայացութեամբ էին փայլում, նորա խօսքերը այնքան ինքնավստահ էին, որ վերատեսուչը ամաչեց:

—Մի բարկանաք, խնդրեմ, տիկին, ի՞ր մոքովս անգնել չի կարող վիրաւորել ձեզ նման կանանց: Խնչու պէտք է դուք կեանքներդ մաշէք աշխատանքով. բաւական է, որ մենք, թշւառներս, մատնածք ենք այդ վիճակին: Լաւ է գիշերօթիկ ուսումնարան պահելլ թողնէք ինեղճ այլիներին և պատաւած աղջիկներին, որոնք...

—Լոեցէք, պարոն, արհամարհաբար լնդհատեց նորա խօսքը Հեղինէն և դուրս գնաց:

Փողոցում՝ դրսեի օդը մի քիչ զովացրեց Հեղինէի տաքացած զլուխը և նա միայն այն ժամանակ լաւ հասկացաւ վերատիսչի վարմունքի նշանակութիւնը և առաջին անգամ կեանքումը նորա սրտումը ծագեց թշնամական զգացմունք դէպի հասարակութիւնը:

Երեկոյեան Հեղինէն սաստիկ յուգւած պատմեց Ասունուն, թէ ինչպէս ընդունեց իրան վերատեսուչը:

Թէւ իւր դիտաւորութիւնը իրագործելու միւս վորձերն էլ համոզեցին Հեղինէին, որ իւր աշխատանքը զուր է, բայց նա զեռ բոլորովին չէր յուսահատում, յուսալով, որ կարող է մի որ և է ուսումնարանում ուսուցչուհու կամ վերակացուի պաշտօն ստանալ:

Մարտ ամիսը վերջանալու մօտ էր Հեղինէի ձեռքին ոչինչ չէր մնացել այն հինգ հարիւր րուբլուց, որ նա հետը բերել էր Թ.-սից; Նա սկսեց մտածել, թէ արդեօք իւր ունեցածի մէջ չը կայ մի աւելորդ բան, որ կարելի լինէր ծախել: Դուրս եկաւ, որ ոչ մի աւելորդ բան չը կար: Նա ցիշեց, որ իւր հետը վերցրել էր միայն ամենաանհրաժեշտ բաները և վճռեց, թէւ այդ շատ ծանր էր նորա համար, ծախել մի քանի թանկադին զարդեր, որ մասամբ քեռու տւածն էր իրեւ օժիտ, մասամբ էլ հանգուցեալ մօրիցն էր մնացել:

Ասասուրովան լաւ գնով ծախեց Հեղինէի զուքսեղէնը և Հեղինէն այդ փողովը մի կերպ զլուխը պահում էր:

Մինչ այդ, ապրիլ ամսի սկզբներում Պետական Ս.-ի օրիորդաց գիմնազիայի վերատեսչուհին ու տեսուչը:

Հեղինէն Ասասուրովայի միջոցով իմացաւ, որ նրանց պէտք է մի վարժուհի: Նախապէս խորհրդակցելով Ասունու հետ, նա վճռեց գնալ տեսչի մօտ:

Տեսուչը շատ սիրալիր կերպով ընդունեց Հեղինէին և խոստացաւ խօսել նորա խնդիրքի մասին վերատեսչուհու հետ:

Մի քանի օրից յետոյ Հեղինէն պէտք է գնար տեսչի մօտ վերջնական պատասխանը իմանալու համար:

Հեղինէն մի քիչ սիրու առաւ: Հասաւ վերջասկէս նշանակւած օրը, որին Հեղինէն սպասում էր անհամբեր սրտով:

Նա տենդացին արագութեամբ գնում էր դէպի տեսչի տունը, ուր վերջնականապէս պէտք է վճռեւէր այն հարցը, թէ արդեօք կարող է նա հասարակութեան մէջ վոքը ի շատէ որոշ դիրք ունենալ,

որ, նրան նիւթական կողմից ապահովելով, միևնոյն ժամանակ անդորրութիւն ընծայէր նորա տանջւած հոգուն:

Տեսչի պատասխանը ոկտօք է վճռէր այդ հարցը: Հեղինէի վերջին յոցը ազդ պատասխանի վրաց էր:

Որքա՞ն սաստիկ պէտք է լինէր խեղճ կնոջ հիասթափութիւնը, երբ որ աեսուչը յայտնեց նրան, որ ինքը ամեն կերպ աշխատել է համոզել վերատեսչուհուն վարժուհի վարձել նրան, բայց նա բացէի բաց մերժել է, չուզենալով տեղ տալ գիմնազիայում, իւր կարծիքով, կասկածելի համարմունքի տէր անձնաւորութեան:

Ես շատ աշխատեցի համոզել նրան, որ մարդաթող եղած կանանց մէջ կարող են լինել այնպիսիները, որոնք արժանի են ամենայն յարգանքի, բայց նա ոչինչ չի ուզում լսել ու շարունակ այն է ասում, թէ դուք կ'արատաւորէք իւր խնամքին յանձնած դպրոցի անունը:

Հեղինէի դէմքը սաստիկ այլայլեց և նա ասաց ախուր ձայնով.

— Եատ շնորհակալ եմ՝ այն բարութեան համար, որով դուք վերաբերեցիք ինձ: Հիասթափութիւնը ախորժելի լինել չի կարող, բայց, ինչ արած, պէտք է հաշուել տխուր իրականութեան հետ:

Տեսուչը խորին կարեկցութեան արտացայտութեամբ նայեց Հեղինէին ու ասաց.

— Միայն մի միջոց կաց ձեր նպատակին հասնելու:

— Ի՞նչ միջոց:

— Դիմեցէք իշխանուհի Շակունուն: Հասարակութիւնը, մանաւանդ կանանց հասարակութիւնը, արձագանքի նման ձայնակցում է ազդեցիկ անձնաւորութիւններին:

— Զէ՛, երբէ՛ք. այն էլ բաւական էր, ինչ որ ես նրանից լսեցի:

— Սակայն վերատեսչուհին շարունակ կրկնում է, թէ, եթէ ձեր քեռակինը ձեզնից երես է թեքել, օտարները ևս առաւել այդպէս կը վարւեն ձեզ հետ:

— Ինքն իւր Աստուածը, թող երես թեքի ինձանից:

Մնաք բարե, յուսահատ, սրտով արտասանեց Հեղինէն ու գնաց: Նորա գեղեցիկ ծով՝ աչքերի սև թերթերունքների վրաց փայլում՝ էին արտասուքի կաթիլներ, իսկ տժգոյն ու ցամաքած շըրթունքները ջղաձգաբար զողդողում էին:

Խոնաւ, անձրւացին օր էր, բայց Հեղինէն, որ անզգայ էր դարձել դէպի արտաքին տպաւորութիւնները, գնաց թափառելու Պետականորսկի շրջակացքի ամացի անկիւններում։ Երեկոյանում էր արդէն, երբ որ նա վերադարձաւ տուն և մի քիչ հանգստանալուց յետոց դնաց Ասատուրովացի մօտ։

— Ախ, սիրելիս, չէք իմանում սիրտս ինչպէս է այրուում, երբ որ տեսնում եմ ձեր անցածողութիւնները, գրկելով նրան ասաց բարեսիրս Ասատուրովան։

Սիրտ արէք, գնացէք իշխանուհու մօտ, գուցէ մի բան դուրս գայ։

Հեղինէն վաղուց էր համոզել, որ առանց քեռակնոջ օգնութեան չի կարող հասնել իւր նպատակին, բայց այնուամենացնիւ չէր կակլում և այժմ առաջին անգամը նա զգաց մի տեսակ վարանմունք։

— Հաւատացէք իմ փորձառութեանս, հոգիս, ես ձեզ վաս խորհուրդ չեմ տալ, համոզում էր Ասատուրովան։ Իաւական է իշխանուհին մի խօսք ասի և բոլորը կը սկսեն ձեզ լաւ վերաբերելու ևսէք իմ խորհուրդին։ Ես իմ Աստածը, ճիշտ եմ ասում։ Իշխանուհին շատ մեծ կապեր ունի, նրան այնպէս են վերաբերում, կարծես կիսաստածուհի լինի։

Վերջին խօսքերն արտասանելիս նա երեսը դարձրեց Ասունուկողմը, կարծես սպասելով, որ նա հաստատի իւր յայտնած կարծիքը։

Ասունին համաձայն էր Ասատուրովացի այդ կարծիքին, բայց զժւարանում էր հաւատալ, որ բարձր աշխարհին պատկանող մի կին յանձն առնէր հովանաւորել մարդաթող եղած կնոջ։

Այս, մտածեց Ասունին, խաբել մարդուն, վատնել նորա փողերը, օրը մի սիրեկան փոխել, հասարակութեան առաջ ամենազգւելի փարիսեցիութիւն անել, այդ, մեծամասնութեան կարծիքով, եթէ բոլորովին ազնիւ վարմունք էլ չէ, դոնէ յամենայն դէպս ներելի է։ Խակ թողնել մարդուն, թէկուզ ամենայարգելի պատճառներով, — այդ աններելի յանցանք է և մարդաթող եղած կինը հասարակութեան աչքում արտասաւորւած ու խայտառակւած անձնաւորութիւն է։

Այդ մտածմոնքները այն աստիճան սարսափեցրին Ասունուն, որ նա ոչինչ չը կարողացաւ ասել։

Մի քանի օր շարունակ Հեղինէն մտասահնջութեան մէջ էր, — գնալ
թէ չը գնալ քեռակնոջ մօս: Միթէ նա կարո՞ղ էր գնալ նորից նորա մօտ
ու խնդրել. — նորա ինքնասիրութիւնը բողոքում էր դորա դէմ, նա
չէր կարողանում մոս անալ իշխանուհու հասցրած վիրաւորանքը,
բայց անհրաժեշտ էր գնալ, ուրիշ ճար չը կար, իսկ անձարութիւնը
մարդուս շատ բան անել կը տայ:

— Ախ, Գէորգիկ ջան, աչքիս լոյսը, բացականչեց նա բորբոքւած
գէմքով ընկնելով երեխայի անկողնի վրայ: Դու որ չը լինէիր, քո, ապա-
գայիդ հոգսը որ չը լինէր, որ երկինքը քանուէր զլիխ չէր կարող ինձ
անել տալ այն ինչ որ դու ես անել տալիս... ես չէի խեղդիլ ինք-
նասիրութիւնս, չէի ստորանալ... օ՛վ... հէրիք է...

Այդ ասելով, նա գերմարդկային ճիգ գործ զրեց իւր վրայ և
համարեա վազելով գնաց գէպի Նակունու տունը, կարծես վստահու-
թիւն չ'ունենալով իւր վճռականութեան վրայ: Նակունու տունը
հասնելով, Հեղինէն խեղդեց իւր վիրաւորւած ինքնասիրութիւնը և
առանց յայտնելու ծառային, որ իմաց տայ իշխանուհուն իւր գալու-
մասին, խոհանոցի կողմիցը մտաւ նեքսւ ու ուղղակի գնաց քեռա-
կնոջ ննջարանը:

Իշխանուհին նոր էր վերադարձել իննջոյքից:

Մի րոպէի շափ Հեղինէն կանգնած մնաց սենեակի մէջ տեղում,
կարծես ազատ շուն: Քաշելու համար, բայց յետոյ շփոթութիւնը մի
քիչ անցաւ և նա, մօտենալով քեռակնոջը, աղերսալից հայեացք գցեց
նորա վրայ:

Իշխանուհին, որ միշտ հետաքրքրում էր Հեղինէի դրութեամբ
ու տեղեկութիւններ ուներ նորա գործերի մասին և վազուց սպա-
սում էր, որ նա կը դայ իւր մօտ «մեղայ» ասելու, նայեց նորա վրայ,
սրտի խորքումը ուրախանալով, և նորա ձեռը բռնելով՝ քաղցրու-
թեամբ ասաց.

— Վերջապէս խելքի եկար. եկել ես ինձ ուրախացնելու. վաղուց
պէտք է այլպէս արած լինէիր: Լաւ է որ քո արածը գեռ չի հա-
սել քեռուդ ականջին. խեղճը դարդամահ կը լինէր:

— Սիալում էք, քեռակին. գալուս պատճառն ուրիշ է:

— Ի՞նչ... Զե՞ս զղջացել: Հասկա ինչո՞ւ ես եկել:

— Քեռակին, թողէք բացատրեմ թէ բանն ինչումն է. դուք

կը համոզւէք, որ ես այնքան մեղաւոր չեմ; որքան ձեզ թւում է:

—Գիտեմ, զիտեմ, բանն ինչումն է. Միխայիլ Պետրովիչը ինձ գրել է, որ դու ուրիշի վրաց ես սիրահարւել:

—Մինունար երեխայիս արևը վկայ, որ այդ չէ եղել պատճառը: Այս, եթէ դուք ճանաչէիք իմ մարդուս, ինքներդ ինձ խորհուրդ կը տայիք, որ թողնեմ նրան: Ես չեմ կարող, ես չը պէտք է արատաւորեմ այն ազգանունը, որ կրում է իմ որդին, աղէկտուր ձայնով բացականչեց Հեղինէն: Պատճառը ես ձեզ չեմ կարող յայտնել, բայց հաւատացէք ինձ, քեռակին, որ զարհուրելի բան է, այնպիսի զարհուրելի բան, որի հետ ես երբէք չեմ կարող հաշուել: Բայց, եթէ դուք չը հաւատաք, ես ատիպւած կը լինեմ ամեն բան բաց անել, բոլորը պատմել ձեզ: Ցիշո՞ւմ էք Ուրարովին... Զէ՛, չէ՛, չեմ ասիլ, ոչ ոքի չեմ ասիլ: Աւելի լաւ է...

Նորա ճայնը կարւեց սաստիկ յուզմունքից:

Եշիանուհի Նակունին համարեա չէր լսում այդ կցկոտուր խօսքերը, որ արտասանում էր Հեղինէն շարունակելով նայել նորա վրայ նոյն աղերսալից հայեացքով:

—Մարդուն անհաւատարիմ լինելը մեծ մեղք է, ազգու կերպով ասաց իշխանուհին. բայց մեղանչելուց յետոյ դու, իբրև կարգին կին, պէտք է ոչ թէ թողնէիր մարդուդ, այլ աշխատէիր խօնարհ վարմունքով մոռացնել տալ նրան արած յանցանքդ: Մէկ մտածիր, թէ ինչ պէտք է լինի այժմ քո օրդ. գոնէ երեխայիդ խղճաւես, յետոյ կը զղջաս, բայց արդէն ուշ կը լինի:

Հեղինէն բացասաբար թափ տւեց զլուխը:

Մէկ լսիր, թէ խալիս ինչ է խօսում քո մասին. ամօթիցս չեմ կարողանում ոչ ոքի մօտ գնալ, զրգուած շարունակից իշխանուհին:

Սկի կարող էր մի օրից մի օր մոքովս անցնել, որ մերոնցից մէկն ու մէկը կը համաձայնւի մոռանալ Աստծու օրէնքն ու աշխարհիս ամօթը և պսակի սուրբ խորհուրդը կը քանդի:

—Քեռակին, ամուսնական կապը միայն այն ժամանակն է սուրբ, երբ որ նա սրբագործւում է ամուսնացածների փոխադարձ յարգանքով, բայց երբ... Այս, ինչ անեմ, որ չեմ կարող ասել. երանի իմանացիք գոնէ հազարերորդ մասը այն բոլորի, որ իմ աչքում նրան յարդանքի անարժան մարդ է դարձնում...

— Բաւական է զլիսիցդ դուրս տաս, զայրացած զոռաց իշխանուհին:

— Աղաչում եմ, քեռակին, անօգնական մի թողէք ինձ, հնարաւորութիւն տուք ինձ մի կտոր հաց վաստակել և ամենքից մերժած դրութեան մէջ միսիթարւել իմ աշխատանքովս:

— Հա, լսել եմ՝ ուզում ես գիշերօթիկ ուսումնարան բանալուհիցը է:

Հեղինէն զլիսով դրական նշան արեց:

— Բայց ո՞ր ցիմարը կը յանձնի քեզ իւր աղջիկների կրթութիւնը, հա՛, հա՛, հա՛:

— Կատակ չես անում էլի՛, ուզում ես անպատճառ դաստիարակիչ դառնալ:

Հեղինէն այնքան զբաղւած էր իւր մատածմունքներով, որ շատ էլ չ'առնեց քեռակնոջ ծաղրից ու դարձեալ աղերսանքով գիմեց նորան:

— Քեռակին ջան, հաւասացէք, որ ես ուրիշ տեսակ վարւել չէի կարող: Մի օր... դուք կ'իմանաք և կը սոսկաք:

Նա դէմքը ծածկեց ձեռներով ու խորը հոգոց քաշեց, բայց մի քիչ անցած յաղթեց յուսահատութեանը ու շարունակեց.

— Աղաչում եմ, օգնեցէք ինձ. սովորեցրէք, թէ ինչպէս հաւատացնեմ ծնողներին, որ ինձ յանձնւած երեխաներին աչքիս լոյսի պէս կը պահեմ, կը պահպանեմ: Ո՞ֆ, մի մերժէք վերջին ինդիրքը, որով դիմում եմ ես ձեզ:

Իշխանուհին, ըստ երևոյթին, զգացւեց, բայց այդ միայն մի րոպէ տեսեց: Հեղինէի աղաչանք-պաղատանքը ապարդիւն անցաւ:

Քեռակնոջ քարասիրտ անստարքերութիւնը ու անդրդւելի նախապաշտմունքը սաստիկ զարմացրեց Հեղինէին: Մինչդեռ նա անթարթ նայում էր քեռակնոջը զարմանք ու զսպւած զայրոյթ արտապայտող հայեացքով, սա բազմոցի վրայ կիսապառկած աղիողորմ հառաչանքներ էր արձակում ու օ-կը-կոլոնով թրջած թաշկինակը մէկ քունքերին էր դնում, մէկ քթին էր մօտեցնում:

— Ո՞ֆ, զլուխս տրաքում է. ջղերս այնպէս քայքայեցիր, որ մի քանի օր խելքս զլուխս չի գալ, — սկսեց խօսել նա վերջապէս:

Քո աղաչանքներին ես միայն մի պատասխան կարող եմ տալ:

խելքի եկ, դուրս հանի զլիսիցդ ցնորքներդ. դրանից աւելի ես քեզ ոչինչ չեմ կարող ասել:

—Միայն ա՞յդ, դառը ծիծաղեց Հեղինէն, սակայն շնորհակալ եմ, ինձ այդ էլ շատ է:

Նա շատ էր աշխատում ազատութիւն չը տալ իւր զայրոյթին, բայց զայրոյթը այնքան սաստիկ էր, որ նա չը կարողացաւ իրան զսպել և, հազիւ պահելով արտասուքը, դողդոջուն ձայնով արտասանեց:

—Այժմ թոյլ տուեք ինձ, իշխանուհի, ասել ձեզ, որ ես բոլորովին համոզւեցի, որ դուք սիրու չ'ունեք, այնպէս որ, կարող էք ասպահով լինել, — էլ ես ձեզ չեմ անհանգստացնիլ որ և է ինդիրքով, մինչև անգամ եթէ մահւան դուռն էլ համնեմ: Մնաք բարեւ:

Այդ ասելով Հեղինէն կարմրատակած դէմքով դուրս վազեց սենեակից:

Մի քիչ անցած նա արդէն իւր տանն էր:

—Օ՛ֆ, աչքիս լոյսը, ընկնելով երեխայի անկողնի վրայ բացականչեց նա մղկտահար որտով: Խնչ մահացաւ մեղք է դործել խեղճ մայրիկի, որ բոլորը նրանից փախչում են այնպէս, ինչպէս ժանտախից:

Արտասուքը հեղեղի նման թափւեց նորա աչքերից: Նա փակւեց իւր սենեակում և մնաց այնտեղ մինչև միւս առաւօտ:

Տեսուչն ու Ասունին շատ էին աշխատում նորա համար մասնաւոր դասեր գտնել, բայց ի զուր:

Երկու ամիս Հեղինէն մնաց անգործ, դարդի ու անհանգստութեան մէջ անցնելով իւր օրերը:

Իշխանուհի Շակոնին յոյսը չէր կորցնում: Նա հաւատացած էր, որ վերջ ի վերջոյ Հեղինէն չի դիմանալ իւր անտանելի դրութեանը ու անձնատուր կը լինի և այդպիսով կ'ազատի թէ իրան և թէ իւր ազգականներին խայտառակ բամբասանքներից:

Ապրիլ ամսւայ մի գեղեցիկ օր էր: Օդը լիքն էր բուրմունքով. բնութիւնը յարութիւն էր առնում: Հեղինէն գնաց զբօննելու և քաղաքից դուրս գալով նորից հանգստանալու մի կանաչագարդ դարի

վրայ ու, հանելով Սահառունուց ստացած նամակը, սկսեց կարդալ: Տասերորդ անգամը կը լինէր, որ նա կարդում էր այդ նամակը և ամեն անգամ նոյն հրճւանքով:

— Օ՛հ, սիրելի Գէորգ, արդեօք մէկ էլ կը տեսնեմ քո երեսդ, արտասանեց Հեղինէն հազիւ լսելի ձայնով և վերջին համբոյը դրոշմելով նամակին՝ մոռքի հետ ընկաւ:

— Այո, ես ուզում էի անպատճառ այստեղ ապրել, որովհետեւ այս քաղաքը սիրելի է իմ սրտին այն քաղցր լիշտակներով, որոնք կապւած են նորա հետ: Մի տարի առաջ այստեղ սիրտս լիքն էր սիրով, երջանկութեան լոյսով, մի տարի առաջ սիրտս հաշտ էր մարդկանց հետ, իսկ ա՞յժմ, ի՞նչ է բռնել այդ բոլորի տեղը իմ սրտում: — Խորթութիւն ամբողջ աշխարհից, վիրաւորւած ինքնասիրութիւն, զայրոյթ ու ատելութիւն գէպի մարդիկ, որոնցից արդարադասութիւն լուսալլ, ինչպէս համոզւեցի, անմտութիւն է: Զէ, էլ չեմ կարող տանել այդ, համարեայ բարձրաձայն արտասանեց Հեղինէն ու խորը հօգոց քաշեց:

— Հազիւ հազ գտայ ձեզ, տիկին Հեղինէ, լուեց նորա յետեից Ասունու ձանը: Մի ժամից աւել է փնտուում եմ ձեզ այս տեղաբենք և արդէն սկսում էի համոզւել, որ զայեակը սիսալ է ասել ձեր տեղը:

— Գիտէք ինչ կայ, Ալէքսանդր Վասիլիչ, ես պէտք է այս քաղաքից հեռ անամ:

— Եւ շատ լաւ կ'անէք: Ուր որ էլ գնաք, ձեզ աւելի համակրութեամբ կը վերաբերւեն քան այստեղ:

— Այսինքն եթէ գնամ այնպիսի տեղ, ուր ինձ չեն ճանաչիլ իրրե իշխանուհի նակունու ազգականի, դառն ծիծաղով ասաց Հեղինէն:

Աւրեմն վճռւած է, հէնց վաղը կ'երթամ այստեղից:

— Ազգիս շուտ, տիրեց Ասունին: Դուք որ գնաք մեր օրերը շատ տիտուր կ'անցնեն:

— Ինձ համար աւելի տիտուր կը լինի ձեզնից հեռու, բայց ինչ արած, Ալէքսանդր Վասիլիչ, պէտք է անջառենք իրարից: Խորհուրդ տւէք, ո՞ւր գնամ:

— Լաւ կ'անէիք եթէ գնացիք մօտակայ Գոկ քաղաքը, մի քիչ մտածելուց յետոյ պատասխանեց Ասունին, շատ խուլ անկիւն է,

բայց այն յարմարութիւնն ունի, որ եղբայրս այնոտեղ ծառայում է:
Նա շատ լաւ տղայ է և ինչ որ ձեռքիցը գայ՝ կ'անի ձեզ համար:

— Նատ լաւ: Ինձ համար միւնոյնն է, ես թէկուզ աշխարհքի
ծայրն էլ կը դնամ: Այսուեղ ես անբախտ եմ, լաւ է այնպիսի տեղ
գնամ ապրելու, ուր ոչ ոք ինձ չի ճանաշում, ուր ոչ ոք երեսովս
չի տալ իմ կարծեցեալ խայտառակ վարմունքս:

Երկու օր անցած Հեղինէն Ասունու հետ ճանապարհ ընկաւ:

— Նատ ճիշտ է ասել մի մատենագիր, մտածեց Հեղինէն կառքը
նառելով, կեանքը կատակերգութիւն է մտածողի աչքում և ողբեր-
գութիւն զգացողի համար:

XXV

Գր-կ հասնելով Հեղինէն ազատ շունչ քաշեց: Ճաշից յետոյ նա
սկսեց վեազացնել Ասունուն, որ խսկոյն գնան տուն վնասուելու:

— Հանգստացէք մի քիչ, տիկին Հեղինէ, մենք այնպէս էինք
գալիս, կարծես զլուխ էլինք փախցնում:

— Ինչ հանգստանալ, չէ՛, պէտք է շտապել, հիւրանոցում
ապրելը շատ թանկ կը նառի:

Նատ ման գալուց յետոյ Հեղինէն վճռեց վարձել մի բնակարան,
որ բաղկացած էր երկու սենեակից ու մի խոհանոցից և առջեից
ունէր մի փոքրիկ պարուէզ:

Ասունին զարմացած նայեց Հեղինէին:

— Ի՞նչ էք ասում, տիկին Հեղինէ, մի՞թէ կարելի է այսուեղ
ապրել: Ի՞նչ էք ի՞նչ ցած սենեակներ են. այսուղ մարդ կը խեղդւի:

— Իմ միջոցների տէրը սրանից լաւը չի կարող վարձել, Ալէք-
սանդր Վասիլիչ: Դատարկ բան է, աղքատութեանը մարդ աւելի շուտ
կարող է սովորել քան չար լեզուներին:

Ասունին տիսուր կախ զցեց զլուխը:

Նա կարող էր օդնել Հեղինէին տալով նրան իւր ունեցածի մի
մասը, բայց չէր համարձակւում ակնարկել անգամ նիւթական օդ-
նութեան մասին, իմանալով, որ Հեղինէն այդ իրբեւ վիրաւորանք
կ'ընդունի:

— Այո, տիկին Հեղինէ, կեանքը շատ անողոք կերպով է հալա-

ծում ձեզ. բայց դուք ինքներդ էք վերցրել ձեր վրայ այդ խաչը բաւական է ցանկանաք և ամեն բան կը փռիսւի դէպի լաւը: Գէորգը երբէք չի ներիլ ինձ, որ...

— Մի շարունակէք, խնդրեմ, Ալէքսանդր Վասիլիի: Ինձ համար այժմ աւելի քան երբ և իցէ թանկ է նորա անդորրութիւնը: Յուսալով, որ ապագան աւելի լաւ կը լինի, ես աշխատում եմ ուշադրութիւն չը դարձնել ներկայի վրայ: Վեց ամիս արդէն անցել է և, փառք Աստծու, մի կերպ ապրել ենք:

— Հա, բայց այդ վեց ամսում տարւայ նեղութիւն էք կրել, ուզեց ասել Ասունին, բայց լոեց:

Մի քիչ յետոյ նա վերջապէս սիրու արեց առաջարկել Հեղինէին մի փոքրիկ գումար՝ տուն ու տեղ գնելու համար: Հեղինէն չի ուզում վերցնել, բայց նա այնքան խնդրեց, համոզեց, որ վերջապէս վերցրեց:

— Ինչ չը համաձայնելու բան կայ այսոեղ որ, տիկին Հեղինէ, դուք ինձ կը վերադարձնէք այս պարտքը երբ որ կարողանաք: Թէ, չէք ուզում, որ ձեր առաջին վաստակը ինձ հասնի:

Հեղինէն ժառանգ ու երախտագիտութեամբ սեղմեց նորա ձեռքը:

Մի քանի օրից յետոյ Ասունին ճանապարհ ընկաւ դէպի Պետականութիւնի: Հեղինէի հետ մնաս բարեւ անելիս նա խնդրեց նրան, որ իրան մէկ-մէկ նամակ գրի:

— Պէտք եղած ժամանակը ազատ կարող էք դիմել եղբորս: Նա ամեն կերպ ձեզ կ'օգնի: Մի նայէք, որ նա լուռ ու մուայլ մարդ է. իսկապէս նոս շատ բարի սիրու ո՞նի:

— Չը գիտեմ ինչպէս պէտք է դուրս գամ ձեր ընտանիքի երախտիքի տակից:

— Դժբաղտաբար մենք ոչինչ չենք արել ձեզ համար: Եհ, մնաք բարեւ, տիկին Հեղինէ. խնդրեմ, չը մոռանաք, աւելցրեց նա մի քիչ դողդոջուն ձայնով, որ ձեզնից հարիւր վերսո հեռու կայ մի մարդ, որ, երբ որ ցանկանաք, խսկոյն ձեր մօտ կը լինի:

Պետականութիւն Ասունին զգաց, թէ որքան սատոնիկ էր նորա համակրութիւնը դէպի Հեղինէն: Այժմ միայն նա լուրջ կերպով սկսեց մտածել այն հարցի մասին, թէ ինչն էր պատճառը, որ իւր սիրու համարեա ամեննին չէր ցաւում: երբ որ նա հեռանում էր հացրենիքից,

անջառում էր ընկերներից, զբկում էր այն բոլորից, որին սովորել էր տարիների ընթացքում Թ-սում։ Նա միայն այժմ չիշեց, որ Պետոփորսկ գալուց յետոց, նա, իւր սովորութեան հակառակ, չեր աշխատել ծանօթանալ սորա-նորա հետ, չեր աշխատել այնպէս անել, որ կեանքը ուրախ անցնի և մի քանի ամիս շարունակ զբաղւած էր եղել մտածելով Հեղինէի անմսիթար դրութեան մասին ու բաւականացել էր միայն նորա բարեկամութեամբ։

— Միթէ՞ նորա բարեկամութիւնը այդպիսի դիւթական ազդեցութիւն է ունեցել իմ վրայ։ Միթէ իմ մէջ կատարւած փոփոխութեան պատճառը այդ բարեկամութիւնն է։ Միթէ... զարմացած հարցնում էր ինքն իրան Ասունին և օրէցոր աւելի ու աւելի ծանր էր թւում նրան Հեղինէի բացակայութիւնը։

Բայց շուտով նա սկսեց նամակներ ստանալ Հեղինէից, որոնցով նա միսիթարական տեղեկութիւններ էր հաղորդում իւր մասին, և քիչ-քիչ սկսեց սովորել նորա բացակայութեանը, զւարձութիւնների յետելից ընկնել ու աւելի և աւելի տրւել իւր սովորական կենցաղավարութեանը։ Եատ շուտով ծանօթացաւ նա բոլորի հետ և Պետոփորսկիք սիրեցին նրան այնպէս ինչպէս սիրում էին Թ-սցիք։ Նրան համարում էին անհրաժեշտ մարդ հրաւերքների, երեկոյթների ու զանազան partie de plaisir-ների համար, մի խօսքով նա շատ շուտով, ինչպէս ասում են, դարձաւ Պետոփորսկի հասարակութեան հոգին։

Հեղինէն բաւական լաւ սարքւեց իւր փոքրիկ բնակարանում։

Երկու շաբաթ անցած Ասունու եղբայրը նորա համար մի քանի դաս գտաւ։ Հեղինէն այնպէս էր պայմանաւորւել, որ այդ դասերի վրայ ընդամենը օրը երեք ժամ պէտք է գործ դնէր, բայց նա նորում էր նրանց համարեա ամբողջ առաւօտից մինչեւ ճաշ։

Նա հոգով սրտով տրւել էր այդ պարապմունքներին, սիրում էր աշակերտուհիներին իւր սիրող սրտի ամբողջ ոյժով. աշակերտուհիներն էլ սաստիկ սիրում էին նորան։ Թէև այդ գասերի համար նա շատ աննշան նիւթական փարձարութիւն էր ստանում, բայց գոհ էր, որովհետեւ այդ գասերը բարերար ներգործութիւն էին ունե-

նում նորա վրայ անդորրութիւն բերելով նորա խոռված հոգուն:

Հեղինէի սիրով առաջւաց պէս չէր ալէկոծւում. մի տեսակ հանդիսաւոր խաղաղութիւն էր տիրել նորա ազնիւ հոգուն: Նորա միտքը էլ չէին պաշարում մաշիչ մտածմունքներ: Նա այժմ սառնասրութեամբ գատում էր արածները, վերաստուգում էր իւր հայեցքները և քննում էր իւր անցեալը: Նորա գէմքը սոացել էր մի տեսակ հանգիստ, մեղմ, թէև տանջանքի հետքերից ոչ բոլորովին զերծ արտալայտութիւն:

Երեկոյեանները նա նոյնպէս սիրով ինչպէս առաջ զբաղւում էր ընթերցանութեամբ: Նա կարգում էր Ասունու ուղարկած գրքերը, աշխատելով գտնել նրանց մէջ պատասխաններ իւր մէջ ծագած հարցերին և պահանջներին:

Մի կիւրակէ Հեղինէն Ասունուց նամակ սոացաւ, որով նա շնորհաւում էր փոքրիկ Գէորգի ծննդեան տօնը:

— Ուղարկում եմ իմ ծրարիս հետ, զրում էր նա նամակի վերջում, օրիորդ Թամարից սոացւած նամակն ու ծրարը: Նա կարծում է, թէ գուք դեռ այստեղ էք: Համբուրում եմ սանիկիսա:

Այս, մոռացել էի, որ այսօր Գէորգիս ծնունդն է, ուրախուրախ ասաց Հեղինէն ու ձայն լուեց դաշեակին, ոնանի, նանի, Գէորգին բեր այստեղ:

— Հէս է բերում եմ, երեսը լւանամ՝ յետոյ:

Հեղինէն գնաց դայեակի հետ երեխային լւացրեց ու հազըրեց:

— Գիտես, աննման, այսօր քո մի տարին լրացել է, գու այժմ արգէն մեծ մարդ ես, ասում էր Հեղինէն համբուրելով ու գուրդուրելով երեխային:

Այդ ժամանակ փոստառնից բերեցին երկու ծրար ու մի նամակ: Թամարի նամակն էր:

— Ինչ տեսակ մարդ եմ ես, մտածեց Հեղինէն նամակը ձեռքն առնելով, այս երրորդ նամակն է, որ նրանից ստանում եմ, իսկ ես նրան երկու տող էլ է չեմ զբել մինչև այժմ, կարծես բոլորովին մոռացել եմ, որ նա աշխարհիս երեսին դոյլութիւն ունի:

Ասենք, այնպիսի դրութեան մէջ էի, որ խելք չէր մնացել գլխումս, աշխատում էր արգարացնել նա ինքն իրան:

Թամարը մանրամասն նկարագրում էր, թէ ինչպէս ուրախ է

անցնում իրանց կեանքը վկազիկաւկազում; գովում էր իւր ազգականուհուն, որի տանը իենում էր, թւում էր նորա բարձր արժանաւ որութիւնները, յափշտակւած գրում էր, որ նորա շնորհիւ ինքը պսակւում է մի պաշտօնաթող մաջօրի հետ, որ շատ հիանալի մարդ է, և որ իրանք շուտով գնալու են ներքին Ռուսաստան:

Ես շատ ուրախ եմ, գրում էր նա, որ գնում ենք այսուեղից. ինձ թւում է, որ այդ տեղափոխութեամբ ինձ համար նոր կեանք կը սկսի և ես կը մոռանամ իմ անմիտար անցեալը: Այդ անցեալի խաւարի մէջ, Հեղինէ ջան, միան մի լուսաւոր կէտ է փայլում ինձ համար. այն կարճատե ժամանակը, երբ ես մտերմացայ քեզ հետ: Նորհաւորում եմ սիրուն Գէորգիկիս. տայ Աստուած, որ նա ողջ առողջ մեծանայ, կարգին մարդ զառնայ ու քեզ միսիթարի: Ուղարկում եմ մի քանի կտոր շոր, որ կարել եմ նորա տօնի համար: Այդ շորերը նրան հազցնելիս միշտ միտդ բեր, Հեղինէ ջան, քեզ անկեղծ սիրող Թամարին:

Նամակի վերջում նա հաղորդում էր, որ Ուբարովի ժառանգութիւնից եօթ հազար րուբլի էր ստացել, և շատ ինդրում էր, որ Հեղինէն ընդունէր իրանից հինգ հարիւր րուբլի:

—Եթէ գու, ուղենալով ինձ վիրաւորել, չ'ընդունես այդ ընծան, ես կ'ընծայեմ իմ Գէորգիկիս. գու իրաւունք չ'ունես արգելել ինձ ընծայ տալ իմ եղբօրորդուս: Աս, երանի այս րոպեիս ձեզ մօտ լինէի ու համբուրէի իմ աննման Գէորգիկին: Ուղարկիր ինձ, խնդրեմ, նորա պատկերը: Քո Թամար:

Մինչեւ Հեղինէն կարգում էր նամակը, զայեակը անհամբեր սրազ բաց էր անում արկղները: Մէկի մէջ խազալիքներ էին,— այդ Ասունին էր ուղարկել, մէսի մէջ Թամարի ուղարկած շորերն էին:

Դայիակը սաստիկ ուրախանում էր և ամեն բան մէկ-մէկ ցոյց էր տալիս երեխային: Երեխան ծիծաղում էր և ուրախ-ուրախ մէկ-նում էր առաջ իւր թիւիկ ձեռները: Մացը հեռւից նայում էր ու հրճուում:

—Ուրիշների միտքն է եղել, որ այսօր քո ծնունդդ է, իսկ մայրիկդ մոռացել է, հոգոց հանելով ասաց նա ու զիրկն առնելով երեխային սկսեց պաշաչել:

—Գիտես ինչ կայ, նանի, մի քիչ հանդասանալով զիմեց նա

դայեակին, ես էլ եմ ուզում՝ տօնել այս օրը։ Կ'երթաս առաջ խմո-
րեղէն ու քաղցրեղէն կ'առնես, յետոյ կը գնաս իմ աշակերտուհիների
տները, ծնողներին կը խնդրես, որ երեխաներին վերցնեն գան ինձ
մօտ թէցի, չը մոռանաս կանչել Ասունու եղբորը, նիկոլայ Վա-
սիլիչին։

— Զեմ մոռանալ, հոգիս, այս բոպէիս կ'երթամ։ Տեսնում ես,
մեղ չեն մոռացել, ընծաներ են ուղարկում, Աստւած իրանց սրատվը
տայ իրանց։

— Իսկ այս փողով, նանի, քեզ համար շորեր առ։

— Ենորհակալ եմ, հոգիս, ինձ պէս պառաւին ինչ կը սազի
զարդարւել։

Երեկոյեան մի քանի լապտերներով լուսաւորւած փոքրիկ պար-
ակում Հեղինէի հիւրերը ուրախ ժամանակ էին անցկացնում, —
մեծերը թուղթ էին խաղում, իսկ փոքրները Հեղինէի հետ զբաղ-
ւած էին զանազան զւարձալի խաղերով։

Յամնարից ստացած փողի մեծ մասը Հեղինէն բաժանեց իւր
պարտատէրին, իսկ մնացածը պահեց սև օրւայ համար ու աւելի
հանգիստ սրտով շարունակեց պարապել իւր գործով։

Այլպէս անցաւ երկու ամիս նորա Գ-ի գալու օրից։

Նա կարծես բոլորովին հանդատացել էր այն բազմաթիւ անար-
դանքներից յետոյ, որոնց ենթարկւել էր Պետական գործում, որ յանկարծ
նամակ ստացաւ մարդուց։

Նամակի սպառնական եղանակը այնքան սաստիկ ազդեց նորա
վրայ, որ նա հիւանդացաւ։

Գալով Ամիրանովին պէտք է ասենք, որ նա եօթ ամսւայ ըն-
թացքում բոլորովին համոզւեց, որ քաղցրութեամբ չի կարող յոր-
դորել կնոջը հաշտւելու, և, լսելով Եփեմիայի մշտական խորհուրդին,
վճռեց բռնութեամբ յետ բերել նորան իւր մօտ, մանաւանդ որ իշ-
խանուհի նակունին էլ պահանջում էր, որ նա խիստ միջոցներ գործ
դնի կնոջ դէմ։

Օգոստոս ամսին Ամիրանովը, իշխանուհու տւած խորհրդի հա-
մաձայն, արդէն Պետական գործում էր։ Այլտեղից էլ նա մի խիստ ու

մնուական նամակ գրեց Հեղինէին, սպասնոլով, որ եթէ նա դարձեալ յամառի, երեխային կը իլի ձեռքիցը:

Հեղինէն որ կարդաց այդ նամակը ու իմացաւ, թէ մարդը Պետականութիւնն է ու հաւանականօրէն իշխանուհու հետ խօսքը մէկ է արել, բոլորովին համոզեց, որ նա կարող է իրազործել իւր սպառնալիքը, և սաստիկ յուսահատւեց: Նորից սկսւեցին նորա համար դառն ու խռովացոյզ օրեր:

Նիկոլայ Ասունին զրեց այդ եղբօրը: Ալէքսանդրը իսկոյն գնաց Ամիրանովի մօտ ու յայտնեց, որ, ինչպէս իրան զրում են, Հեղինէն սաստիկ հիւանդ է, և աշխատեց համոզել նորան, որ շատ վտանգաւոր է այդպիսի դրութեան մէջ անհանդիսա անել Հեղինէին:

Ասունու աշխատանքը գուր չ'անցաւ, Ամիրանովը համաձայնեց չը խլել Հեղինէից երեխային:

Քիչ ժամանակից յետոյ նա հասկացաւ, թէ որքան անհեթեթէ էին իւր սպառնալիքները, և հեռացաւ գնաց Թու:

Ազգափառվ նա բոլորովին յոսը կորցրեց կնոջ հետ հաշտւելու, բայց գեռ չէր կարողանում սովորել ան մոքին, որ լնդ միշտ զըրկւում է կնոջից ու երեխայից, և սաստիկ դարդի մէջ էր:

— Եատերը կարծում էին, թէ Հեղինէի հետ կը վերադառնամ, այժմ ինչ պէտք է ասեմ նրանց, մոռածում՝ էր նա մօտենալով Թուին:

Սիրտը զայրովթից ուզում էր տրաքւել, վիրաւորւած ինքնամիրութիւնը տանջում էր նորան:

— Զհաննամը իրանք էլ, իրանց կարծիքն էլ, ինչ ուզում են թող կարծեն, ինձ ի՞նչ. նրանց նորութիւններ է պէտք, բաւական է մի նոր բան պատահի, նրանք այս կը մոռանան ու նորի յետեւիցը կ'ընկնեն, աշխատում էր ինքն իրան հանգստացնել Ամիրանովը. բայց իսկոյն նորա մտքովն անցնում էր,— իսկ ե՞ս, կարող եմ արդեօք մոռանալ... Օ՛խ, Սահառունի, Թամար, թէ ձեր դատաստանը ինձ կը տային...

Մարդ կը սարսափէր, եթէ նայէր Ամիրանովի դէմքին այդպիսի քոպէներին, երբ նա, կարծես մոռացած իւր բարձր հասարակական դիրքը, փայլուն ասպարէզը և ամբողջ աշխարհը, բոլորովին անձնատուր էր լինում ատելութեան ու վրէժինովութեան զդացմունքներին:

Բռունցքները չղաձգաբար կծկում էին, աշքերում փայլում էր կատաղութեան կրակ, կարծես նա պատրաստում էր պատառ-պատառ անել Սահառունուն ու Թամարին:

Ազդակիսի գրդուած զրութիւնից յետոյ Ամիրանովի վրայ մի տեսակ թուլութիւն էր գալիս. նա ժամերով լուռ նատում էր բազկաթոռի մէջ ու աշխատում էր համոզել ինքն իրան, որ պէտք է համբերութեամբ սպասել մինչև այն ժամանակ, որ ամեն բան ինքն իրան մոռացւի:

(Վերջը միւս համարում)

ՎԻԹԻԱՐԻ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Ա. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

I

Ամառն էր: Կիզիչ արել շիկացած ճառագայթները գցել էր ամայի դաշտի վերայ. հուրհրասում, պլովում էր մոխրագոյն դաշտը, կարծես մի թեժ թորոն. լոռ թիւնը մեռելացին էր, ոչ մի կենդանի շունչ չէր համարձակում զուրս զալ իւր քնից, իւր սորամոփց. նրանք ծածկել, թագնել էին, միայն ճանապարհորդներն էին, որ բեռնաւորւած ձիաներով շտապում էին. բայց ո՞ւր են շասպաւմ, չէ որ բաւականին տարածւած է այդ ամաչի դաշտը, ինչո՞ւ են չարչարում իրանց կենդանիներին, որոնք քափ ու քրախնքի մլջ կորած, հազիւ հազ հեւալով քայլերը փոխում էին: Ճանապարհորդները ձիշդ է այրուած, խանձւած էին, բերանները աղանձւած, բայց նրանց երեսներին նայողը կասէր՝ արանք շատ մօտ են այն ժամին, երբ պիտի աղատւեն արևիցոյ: Եւ յիրաւի անցաւ մի փոքր միջոց, քարաւանի գլխաւորը, որ մի բարձրահասակ, խոժորագէմ, չոր-չոր տղամարդ էր նժոյգի վերայ նստած՝ դարձաւ ուրախ-ուրախ լնկերներին աղանձւած բերանով. «Այ, այ, մեր աղատարար լնկուզենին, լաւ նայեցէք այն փոքրիկ կանաչ կէտն է. ի՞նչ փոքր է երեսում, հիմայ ի՞նչ-պէս հով կը լինի նորա տակը. օրհնւի քո անկողի զերեզմանը. գէ՛ մի բերան օրհնանք էլ դուք տւէք, սա վերցրէք, շուտով հասնենք, արեից աղատւենք, զէ ձեզ տեսնեմ»:

Ճանապարհորդները միաբերան, քաջալերւած «օրհնւի քո անկողի զերեզմանը» ասելով, ձիաներին մորակեցին, որ որքան կարելի է շուտով հասնեն իրանց փրկարար լնկուզենուն:

Թիա հազիւ հազ հասանք, ուխաց մի քիչ որ հովացանք» այս
ու այն կողմից ասացին ճանապարհորդները և ընկուզենու տակ տեղա-
որւեցան:

Ամբողջ դաշտի վրաց ոչ մի կանաչ չէր երեռում, բացի այդ հաս-
տաբուն, սուերաշատ, ոստերը հեռու տարածած ընկուզենին. այդ
շոր ամացի դաշտում միակ աչքի բերկրութիւն տւողը, միակ պատս-
պարողը դա էր համարում:

Արևը ամենաբարձր կէտումն էր կանգնած. ընկուզենու շւաքը
չորս բոլորը տարածւած, մի կանոնաւոր հիանալի շրջան էր կազմել:
Ոչ ոք չէր ուզում շրջանից դուրս գալ, չորս շուրջը կտրած հան-
գլստանում էին:

— Ինչպէս երեռում՝ է ճաշելու ախորժակ չունէք. ծառաները
ոչինչ պատրաստութիւն չեն տեսնում, ասաց զլիսաւորը, որ թիկն
էր տւել մեծ բաւականութեամբ հաստաբուն ընկուզենուն:

— Փայտ չի ճարւում, տղաց, դարձան միարերան ծառաները:

— Փա՛յտ... հա, ճիշդ է, փայտ չը կայ. բայց կացէք, աչքը
զցելով ընկուզենու բունին, այ ձեզ փայտ, ընկուզենու այս փոքրիկ
խոռոչը տեսնում էք, հանեցէք դաշոյններդ, էլայն տեղը չի, սովոր
կը կոտորւենք, նորա փտած տեղերը կտրատեցէք. այլտեղ մի շալակ
փայտից աւել կը լինի. դէ՛ մենք քնում ենք, կրակ արէք, և, երբ
խորովածը պատրաստ կը լինի, մեզ վերկացրէք:

Ծառաները ոչինչ չը կարողացան ասել. միայն նրանց երեսկա-
հատը լուս ու մունջ կարծես արտացայտում էր. «ինչպէս սուր
բարձրացնենք այն բարերարի դէմ, որ միշտ մեր պատսպարանն է
հանդիսանում», չէ որ նա շուտով կը չորանաց և մենք կը զրկենք
մեր այդ աղատարար ծառից»:

Քնեցին տէրերը, պատրաստութեան յետևից ընկան ծառաները:

Հինաւուրց ընկուզենին տեսաւ թէ ինչպէս ծառաները մերկ
դաշոյնները ձեռներին իւր վրաց յարձակեցան, իբր թշնամու վրաց, և
սկսեցին փոքրիկ խոռոչը մեծացնել՝ կեն փայտը կտրատելով. տեսաւ
նոյնպէս թէ ինչպէս նրանք սկզբում շուզենալով մօտեցան, բայց յե-
տոց, աղաների հրամանի ազդեցութեան տակ, մոռացան այդ, դուցէ

և խորովածի համար գրգռւած ախորժակն էլ սպակաս դեր չը խաղաց ազդ գործում։ Այս՝ նա տեսաւ այդ բոլորը, սրտումը մի տուր ցաւ զգաց և այդ ցաւը ճղնէ ճիւղ տարածւեց ամենայն տեղ։ նորա տխուր կերպարանքը, յուսահատ աչքերը ասացին։ «Միթէ ես այնքան անպէտք եմ դարձել, որ մարդիկ ացագէս ինձ կտրատում են։ եթէ ցիրաւի ես ոչ մի օգուտ չեմ տալիս, միայն իմ կանաչ ոստերիս և գազաթիս եմ զօռ տալիս աւելի ու աւելի տարածել և բարձրացնել, թո՞ղ աւելի լաւ է ինձ տակից կտրեն կամ թէ չէ՝ որպէս զի բոլորովին ոչ մի հետք չը մնայ՝ արմատահան անեն։ բայց ահա իմ ստերում անուշ անուշ քնած են մարդիկ, ես տեսայ թէ ինչպէս ինձ տեսնելով շտագեցին, որ արեից ազատւեն։ կը նշանակի ես օգուտ եմ տալիս, հասլա ինչո՞ւ են անխնայ ինձ կտրատում, միրտս վիրաւորում, արիւնլւայ անում։ Կանգ առաւ ընկուղենին և սկսեց մոածել։

«Հա՛ դասյ, շարունակից նա, խեղճ մարդիկ փայտ չեն ճարում այս ամացի դաշտում, իսկ նրանց հարկաւոր է փայտ կերտիրի համար. թո՞ղ լաւ է ես մի քիչ չարչարւեմ տանջւեմ, միայն թէ մարդիկ սովորեց չը մեռնեն։»

Վերջին միտքը մոռանալ տեսց ընկուղենու սրախ կսկիծն ու ցաւը։

Կրակը վրութվառթում էր բունին մօտիկ. կաղոյտ ծուխը, առանց դէս դէս տատանւելու, ուղղակի բարձրանում էր և, ոստերին կողէլով, տարածւում ճղների մէջ. ապա, բարձրում միախառն ելով, քուլաց քուլաց վեր բարձրանում։ Թեժ կրակը մի կողմը քաշած՝ խորոված էին անում, իսկ միւս կողմից թափթփած փայտերն էին իրարից կողէլով վառւում։

«Պատրաստ է խորովածը», ձայն տեխն ծառաները։

Խորոված լսելով՝ ճլըմկոտալով, յօրանիշելով վեր կացան քնատեղերից տէրերը։

— Ի՞նչ լաւ կը լինէր, այս ընկուղենու ոստերը շատ հետու տարածւէին, որ մեր ամբողջ քարւանը սրա տակը տեղաւորւէր. տեսնում էք ձիաները դուրսն են մնացել. մի բանի ալէտք չէ հա, թէև հեռւից միշտ տապատապում ենք շուտով հանել, աչքերը արորելով ասաց ճանապարհորդներից մէկը։

— Բայց որ տերեւները խիստ լինէին, աւելի լաւ կը լինէր, երբեմն քնած տեղը արևի ճառագայթները մարդու աչքերին են ընկնում, քնահար անում, աւելացրեց մի ուրիշը:

— Այս, ինչ ասեմ սրա ցիմար անկողին, վրայ բերեց զլխաւորը, ասա՛ մարդ Սսառւծոյ, տնկում ես տնկում, աղբը մօտ անկեիր էլի, որ ծարաւելիս մէկ էլ այրւելով, խաշւելով չը գնացինք աղբը մօտ ջուր խմելու: Աս զորդ որ մի բանի պէտք չի, ոչ մի յարմարութիւն չունի:

Սուփրան բաց արած էր, հացերը շարած, պանիրն ու գինին մէջ տեղ դրած. մեծ ախորժակով հացի նասեցին. խորոված էր որ, ծըլծըլալի, իւղը կաթկթելով փո.ած լաւաշների վրայ, վեր էր քաշւում, բայց մի բոպէում տեղը դարտակւում. կուլայի տակը տափը չէր տեսնում, համեցէք էր, որ անում էին ճանապարհորդները իրանց սրաւելի զլխաւորին: Խորոված ու գինի, — շատ գուրեկան է միմեանց հետ. քարաւանի զլխաւորի զլուխը տաքացած էր, երբ հացից վեր կացան:

— Պատրաստում էք ճանապարհւելու, դարձաւ զլխաւորը իւր ճանապարհորդակիցներին կարմրած աչքերով, հա լաւ ժամանակն է, հովն ընկել է, ինչ լաւ կրակ կաց. կրակը որ տեսնում եմ, ախորժակս կարծես կրկին բացւում է. կրա'կ, հրդեհ ես շատ եմ սիրում, այժմ ուղում եմ բո՛ց, բո՛ց տեսնել և զւարձանալ: Ծառաներ, այն փառած, մեծ մեծ խանձողները փղակի մէջ դրէք:

— Բայց ափսոս... ձայները փորները գցած շշնջացին ծառաները:

— Ոչ մի ձայն, լսում էք, թէ չէ ձեզ էլ հետը ներս կը խոթեմի Ափսոս է՛, ինչ ափսոս, չէք տեսնում հով է, էլ ինչ հարկաւոր է, թուլամն' րթ կինարմատներ:

— Այս, այս, ոչ մի բանի պէտք չէ, հով է, աւելի լաւ է տեսնենք ինչպէս է վառւում՝ այս անպէտք, կանաչ ծառը, այս ու այն կողմից վրայ բերին ճանապարհորդները:

Ծառաները բարձում էին ձիաները, իսկ ակրերը մեծ հրճւանքով մտիկ էին տալիս թէ ինչպէս մխում, թշթշում է կիճ փայտը: Ե՛, թշթշոյը չի կտրելու, ինչ է զգւացնում, զլուխներս տա-

նում, ինչու չէ բոց գուրս գալիս, բո՞ց, բո՞ց, հասկանում էք, կրակը թիժացրէք շուտով, գոռաց զլիաւորը ծառաների վրայ:

— Նատ ուշ կը քաշի, երկու օրւայ մէջ հաղիւ հազ այրւի, աւելի լաւ է գնանք, ժամանակն անցնում է, ասացին միաբերան ճանապարհորդակիցները զլիաւորին:

— Այս, այս, գնանք, բայց ափսոս որ չը տեսանք, թէ ինչպէս դրվ'իսկ՝ պիտի ընկնի այդ վիթխարի անպէտք ծառը Անպէտք է, գիտէք, այդ չը լինէր, գոնէ մէկ պարապ-սարապ մարդ, մի ուրիշը աղբը մօտ կը տնկէր, ասաց ու ձին հեծաւ:

«Վա՞յ, վա՞յ, այրւում եմ... կարծես նոր զդացած յուսահատ ճշաց ընկուզինին, օգնութիւն, օգնութիւն հասէք մարդիկ, ես էլի պէտք եմ ձեզ, չէ որ կրկին ճանապարհորդելու էք, չէ որ դարձեալ սովում էք լինելու... օգնութիւն, աղաջում եմ, սիրաս այրւում է... ջո՛ւր... ջո՛ւր... ջուր հասցրէք պաղատում եմ. բայց նրանք չեն լսում, գնում են... գնացին... քարւանի տուար կտրւեց... ուհ անգութ արարածներ, այդ էի ձեզնից սպասում, բաւական չէր ինձ վիրաւորեցիք ձեր փորի համար, այժմ էլ ինձ կրակում էք... անխիղճ մարդիկ, բարութիւնը չարութեամբ էք փոխարինում, Աստուած կայ վերեւում, նա տեսնում է ձեր արարքը, գոնէ նրանից վախնեցէք: Բայց իմ ձայնը խանձւած է, էլ չի հասնում նրանց, տե՛ս, տե՛ս, մինչև անգամ նրանք յետ էլ չեն նայում, ուհ անխիրաւները նրդիքս, որդիքս լինին աղատուած, բայց նոքա ահաս են... նրանք կայրւեն, վեր կը թափւեն, կը չքանան աշխարհի երեսից... մենք միասին մնաս բարեւ կասենք այս աշխարհին... բայց ես լեռ չեմ ուզում մեռնել, հասունացած որդիներիս աչքովս տեսնեմ՝ և յետոյ մեռնեմ...»

Այսպէս ընկուզենին յուսահատ ճշում, ծւում էր, մորմոքւած լաց լինում, երբ ստորին ոստերի տերեներն ու կաղաղները թառամել սկսան, կուշ եկան:

«Օգնութիւն, միանգամից սուր ձայնով ծացին սրանք, այրւում ենք, օգնութիւն. մայրիկ, աղատիր այս հնոցից, ահա քիչ է մնացել այրւած վեր թափւենք շուտով... ջո՛ւր... մի գլաւ ջո՛ւր... սիրաներս կրակ ընկառ... ո՛հ, այս ինչ պատիժ է...»

— Ինչ էք ականջնորս տանում, արհամարանքով կորեցին նրանց խօսքը միջին ռատերի կաղաղները, ինչ կայ որ, օգնութիւն, չէ մին, մեկի բանը կորւել է ձեզ օգնութեան գայ. այսպէս լաւ է, արտեցէք, կոսորւեցէք, տեղն է, ձեզ համար ապրելլ չեմ իմանում ինչ արժէք ունի ազդուղ գետնին մօտիկ. աղքատ էք. աղքատին ո՞վ օգնութիւն կը հասցնի, առանց այն էլ դուք մեռած էք, լաւ չի միանգամից հէնց ձեռք քաշէք այս աշխարհից. մեր փառքը դուք նսեմացնում էք, մեր մնունդը ի զուր տեղը կանում, մեռէք թըշւառներ, չը համարձակւէք էլ օգնութիւն կանչել:

Ուխա՛, ինչ լաւ է, մենք տաքանում ենք, երեխ մեր հասնելու ժամանակը եկել է:

— Օգնեցէ՛ք, Աստուծու սիրուն, ձայն տւաւ դարձեալ ընկուզինին:

— Այս մեր մօր ձայնն է, կարծես նոր լսելով դարձան միմեանց, մէջ տեղի ռատերի կաղաղները, այո՛, այո՛, նրա ձայնն է, նա էլ ացրւում է, բայց մեզ ինչ, այսպէս մեզ համար լաւ է, մենք հասնում ենք, էլ ինչ կարիք ունինք մօր. այսօր անպատճառ կը հասնենք, եթէ այսպէս շարունակւի: Բայց այս ինչ է, վա՛յ մենք էլ այրւում ենք, օգնութիւն... մայրի՛կ, մեռանք, չուր հասցրէք... տապակւեցանք, խորովեցանք... վա՛յ այս բոտէիս վեր կը թափւենք...

— Անամօթնե՛ր, ինչ էք երեխայի պէս լաց լինում, օգնութիւն, օգնութիւն բղաւում, յանդիմաննեցին բարձր ռատերի կաղաղները, ձայներդ կորեցէք և լուռ ու մունջ մեռէք, ում՝ հոգսն է կորել, ձեզ օգնութիւն դայ, դէ՛ պատանձւեցէք պատանձւելու նման. մեզ համար այդ շատ լաւ է, ձեր բաժինն էլ մենք կը վայենք, լայն ու արձակ կը լինի մեր տեղը, առաս՛ մեր բաժինը, մեզնից օգնութիւն մի՛ սպասէք, և վերջապէս ինչ կը սազի մեզ հարուստներիս, մեծերիս, մեր դիրքից իջնել և ձեզ պէս ստորներին, աղքատներին օգնութիւն հասցել:

Ծնկուզենին շարունակում էր իւր մերմնքւած սրտի աղեկոտր յառաջանքները. իւր քի: հասած, մեծ-մեծ որդիներն էլ լսեցին նրա յուսահատ ձայնը, բայց նրանք էլ երկրորդների պէս արհամարեցին ասելով. «Այսպէս լաւ է մեզ համար, մենք շուտով կը հասնենք... բայց երբ կրակը աւելի ու աւելի բորբոքւեց, թեժացաւ, նրանք էլ նոյն վիճակի ենթարկւեցան, ինչ որ իրանց եղբայրակից-

ները։ Նրանք էլ օգնութիւն կանչեցին, լաց եղան, ջուր խնդրեցին, մացրիկ կանչեցին, բայց ոչոք չը լսեց, որովհետև ընկուզենին էլ չեր զգում, նորա ջուրը քաշւել, աերւեները գեղնել, թողել էին և ընկոցները խանձած, կուչ եկած վեր էին թափթափում։

Անցաւ մի փոքր ժամանակ էլ և վիթխարի ընկուզենին իւր մարած աչքերը դէս զէն ամացի դաշտի չորս կողմը դարձնելով, մարդկանց արարքը մտաբերեց և առանց նզովելու նրանց՝ վերջին յառաջանքը—թշոցը—թոյլ կերպով արձակեց և ճարճատելով, կայծեր հանելով գետինը փռւեց։ Ծուխն ու փոշին միախառնելով կարծես շիրիմ ծածկեցին հսկայ դիակը, որը վլուվլուում էր և գալարուն բոց արձակում...»

II

Գարուն էր։ Ամայի դաշտը կանաչ էր հագնւել, գոյնզգոյն ծաղիկներով ներկւել, զարդարւել։ Մեռելացին լսութիւնը չքացել, անհետացել էր. երգեցիկ թռչնակների անուշ դաշտացիկը, ժրաշան մեղուների տպալոցը, զարնան մեղմ սիրը, որ նոր բաշւած ծաղիկների գլխիկներն էր քնքոյց առանում, միախառնելով կարծես ներդաշնակ ձօն էին մատուցանում կենսատուացնին։ Ահա բարձրահասակ, յաղթանգամ, բնութիւնն որդի՝ բարի հովին էլ իւր սիրուն հօար առաջն արած՝ ոգեսորւելով իւր սրնդի ձայնը բարձրացրեց, սրտի խորքից դուրս եկած անմեղ տաղով ձայնակցեց բնութիւնն երգիչներին։ Կէսօրւայ մօտ էր. ոչխարները մշմշալի արածելով առաջ էին գնում, իսկ հովինը յափշտակւած, վերացած բնութիւնով իւր սրինդն էր ածում։ Ուր էին դիմում ոչխարները. ինչո՞ւ էր ուրախ հովիւրը չը լինի՞ նոքա կէսօրւայ ժամկի դէսի մի հով տեղ հանգստանալու էին գնում։ — Այս՝ նրանք դէսի ընկուզենին, դէսի իրանց սիրելի լնկուղենին էին շտապում։

«Աւ է ընկուզենին, չի երևում, չը լինի միւս կողմն եմ թողել, ասաց հովիւր և մնաց տեղը կանգնած։ չէ, այսուղից երևում էր ամեն անգամ, երբ հօտը առաջս արած կէսօրւայ ժամին մագաղելու էի տանում. բայց ուր է, չկայ, ահա ոչխարներս էլ իրանց ուզզութիւնը փոխեցին, չէ, ինչ եմ՝ ասում, հէնց այս է ճանապարհը որ կայ— և ոչխարներին առաջւայ ուզզութիւնը տալով առաջ գնաց։

Հովիւր աչքերին չը հաւատաց, երբ վիթխարի լնկուղենին տեսաւ այրւած, խանձուղ կտրած, բայց երբ լաւ զննեց, իւր մանկութիւնից ի վեր ծանօթ լնկուղենուն ճանաչեց, արտասուքը այլ ևս չը կարողացաւ պահել, լացեց, շատ լացեց և ախուր տրտում կոճղի վրայ նստելով իւր սրտի թախծութիւնը երգեց: Խնչ էր նորա տիսուր երգի բովանդակութիւնը. արգեօք միայն լնկուղենու կեանքից զրկւելն էր լացում դառնապէս, թէ՞ նորա այնից զրկողին էր անհծում զայրացած.—այս՝ նորա երգը սրտի զայրոյթն էր թախծութեամբ համակւած, երբ երգելիս աղի արտասուք էր թափում, սրտի խորքից էլ կարծես շանթ ու կայծակ էր ցայտում:

«Ասա՛, ասա՛, դու իմ սիրելի լնկուղենի, վերջապէս սրինգըցած դրեց հովիւր, ո՞վ էր այն անգութը, որ քեզ այդ օրին զցւց. երկնքի պասիժն է՞ր, որ քո գլխին պիտի կատարւ էր, թէ՞ անգութ մարդը քեզ կրակեց. ասա՛, պաղատում եմ, վրէ՛ժ, արդար վրէ՛ժ է ուզում քո լնկեր բարեկամը. բայց աւա՛ղ դու մեռած ես, ինձ պատասխանող չկայ, ես կը հալւեմ՝ կը մաշւեմ առանց վրէժի... Ասուա՛ծ, լնկուղենուն ստեղծող զու Ասուած, դու, դու պատասխանիր թշւառիս, առանց վրէժի իմ կեանքը այս աշխարհում անտանելի կը լինի, բայց դու էլ չես ուզում պատասխանել, ինձ ուզում էք չարչարել, տանջել...»

Հովիւր ոչ մի տեղից պատասխան չը ստանալով, այլ ևս ոչինչ չը կարողացաւ ասել, սրտնեղած դարձեալ լնկուղենու սեւացած կոճղի վերայ նստեց և ինչպէս մի հոռատես, ախուր տրտում, զլուխը ձեռքերի մէջ առած, չէր իմանում ինչ անէր. իսկ ոչխարիները՝ իրանց լիշողութեան մէջ նորոգելով վիթխարի լնկուղենու ստերը՝ մոլորւած, սրտները կոտրւած էլ չ'իմացան ինչպէս այստեղ այնտեղ նստուեցին և ախուր աչքերը բաց ու խուփ անելով որոճում էին: Յանկարծ հովի յուսահատ աչքերը կանդ առին լնկուղենու չորացած, այրւած արմատների վերայ, մի ակնթարթում փոխւեց, տեղից վեր ցատկեց և սկսեց անդղել արմատների միջից երեւացող նոր դուրս եկած մի ընձիւղ, որի թերթիկները՝ թէւ դեղնած, թառամած, բայց մէջը կենդանի շունչ կար մի մաղից կախւած. բաւական էր արել իւր այրող ճառագայթների ոյժը ցոյց տար, նա էլ—լնկուղենու վերջին շատաւելիզ՝ մնաս բարեւ կամէր աշխարհին. այլ ևս ոչ

մի հետք, ոչ մի ցիշատակ չէր մնալ վիթխարի ընկուզենուց։ Հովիւր
ձեռքով շօշափեց այդ միահատիկ կիսակենդան շառաւիլլը, ուրախու-
թեամբ փայլեցին աչքերը. նա մոտածում էր. «Ումնից առնեմ վրէժս
և ի՞նչ օգուտ, արդեօք սորանով մի օգուտ տւած կը լինիմ իմ սի-
րելի բարեկամի աճիւնին.՝ ո՛չ, ի զուրէ այդ բոլորը, ահա՛, ահա՛
իմ սիրելի ընկուզենու միահատիկ ժառանգը, թէև կիսակենդան,
բայց ես ցոյս ունիմ, որ կարող եմ իմ անդադրում խնամքով կեն-
դանացնել. և ինչ կարծիք, որ ժամանակին կունենամ մի այնպիսի
ընկուզենի, ինչպէս իմ հին բարեկամն էր։ Յաւել, լաց լինել հին
յնկուզենու վրայ, որ նա կորաւ, մեռաւ՝ դա թուլամորթների գործն
է, իսկ ինձպէս մարդիկ, որոնք դեռ ես իրանց մէջ ոյժ են զգում,
ոչ թէ միայն թշնամուն տապալել, որը մեծ բան չէ, այլ տապալածի
տեղը նորը կանգնացնել, ահա որն է մեծ գործը, ամօթ է լաց ու
կոծ անել և վրէ՛ժ, վրէ՛ժ գոռալով ամբողջ կեանքը անցկացնել։»

Եւ հովիւր ոգևորւած այս նոր մաքով իսկոյն և եթ գործին
ձեռք զարկեց. նա սկսեց այդ ճիւղի տակը փորել, բոլորովին չորա-
ցած անպէտք թերթիկները պոկել, վրայի երեացող շէկ մրջիւնները,
ստորաքարշ, սողացող ճիճունները ոտի տակ տրորել, ոչնչացնել. այս-
պէս երբ բոլորովին ազատեց իւր հին բարեկամի մի հատիկ որդուն
իւր մօտ գտնւած թշնամիներից, այժմ էլ մոտածեց անդագ կենդանի-
ների բերանից և վայրենի գաղանների աւերիչ ոտերից ազատել, —
նա ամուր ցանկով պատեց չորս կողմը. յետոյ գնաց մօտիկ աղբիւրից
ջուր բերաւ աղբիւրից։ Նա գորանով էլ չը բաւականացաւ, որպէսպի
միշտ ջուր լինի նոր ընկուզենու տակը, որ աւելի շուտ զարգանաց,
ոստեր արձակի, — աղբիւրից առու հանեց մինչև ընկուզենին։

Հովիւր ուրախ էր, - իւր նպատակին հասաւ. նա ամեն օր գա-
լիս էր իւր հօտով նոր ընկուզենու մօտ նառում և ամեն անգամ երբ
տեսնում էր նոր տերեւ զցած, իսկ հին կիսամեռ տերեները զւար-
թացած՝ հրճւում, ցնծում էր և, սրինդը հանելով, անուշ կերպով
նւագում. նա իւր սրինգի ձախով ոչ թէ օրօր էր կարդում իւր սի-
րասուն զաւակին, այլ քաջալերութիւն, խոր քնից զարթնել, ածել,
ոստեր արձակել, կատարը ամսպերին հասցնել և իւր սիրած անթիւ-
անհամար ընկոյզներով բեռնաւ որել։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ի. Գ. ՌԱԶԻ

Խ՞նչ է ներկայացնում իւր հոգեկան կեանքով ֆրանսիական ժամանակակից ինտելիդենու երիտասարդութիւնը. ի՞նչով է ապրում, ի՞նչ է մատածում, ի՞նչ բարոյական նպատակներով է առաջնորդւում, որո՞նք են նորա հաւատալիքները, համոզումները, իդէալները Որքան մեզ յայտնի է, այս բոլոր հարցերը մեր մամուլը համարեա ամեննեին չի շօշափել թէև նա պակաս ուշադրութիւն չի դարձնում ֆրանսիացի քաղաքական-հասարակական, գրական և գիտնական երեսոյթների վերաց: Այդ հարցերը չափազանց հետաքրքրական են ինքն ըստ ինքեան, հետաքրքրական են և նորանով, որ սերտ կապւած են ֆրանսիական հասարակակետութեան մօտաւոր առաջի հետ. հասարակակալառութեան, որ քաղաքակիրթ աշխարհի մէջ առաջնակարգ տեղ է բանում: Սովորաբար ասում են, — և ասում են միանգամայն իրաւացի, — թէ երիտասարդութեան վերաց են երկրի բոլոր յուսերը: Համարձակ կարելի է ասել, թէ ինչպէս որ այսօրւաց երիտասարդութիւնն է, այնպէս կը լինի մեծ մասով էգուցւաց հասարակութիւնը իւր մօտաւոր և բարոյական կողմերով: Այսօր նորա ներկայացուցիչները խմբւած են համալսարանների յարկի տակ, խորասուզւած են դասախոսութիւնների, գրքերի և գասագրքերի մէջ, աշխատում են կարիքներում, լաբորատորիաներում, գրադարաննե-

¹⁾ Русская Мысль 1891 г., № 2.

րում, ապրում են շատ թէ քիչ փակ կեանքով, առանձնացած իրանց ընկերական շրջանների մէջ, բայց վազվ նրանք կը վերկենան դպրոցական նստարանից, դուրս կը գան հասարակական ասպարէզ, իբրև գործնական քաղաքացիներ, կը փոխարինեն այժմեան գործողներին, կը յայտնեն իրանց պահանջները, կեանքի մէջ կը մացնեն իրանց հայեացքները և առաջնորդող գեր կը խաղան քաղաքականութեան, ընկերական յարաբերութիւնների, գրականութեան, գիտութեան և արևեստների մէջ: Նոքա կը տարածւեն մուաւոր և գործնական կեանքի բոլոր խաւերի մէջ, ամեն բանի վերաց կը դնեն իրանց հանճարի կնիքը, հասարակաց կարծիքի առաջնորդ կը հանդիսանան, մի որոշ շափով կը կազմեն և կը վճռեն երկրի բաղդը, և այդ բոլորից կը կազմէի այն, որին «պատմութիւն» անունն ենք տալիս: Ահա՝ այս պատմառներով նրանք անկասկած արժանի են մեր ուշադրութեանը: Արդ, ի՞նչ ուղղութեամբ են կազմում և ձեւակերպում ֆրանսիական այժմեան ինտելիգենտ երիտասարդութեան գաղափարներն ու զգացումները, ֆրանսիական հասարակութիւնը և ժողովուրդն ի՞նչ պէտք է սպասեն համալսարանական երիտասարդութիւնից: Մէնք կ'աշխատենք յետագայ տողերով այս կենական հարցերին ըստ կարի պատասխաններ. բայց նախ տեսնենք թէ ի՞նչ են ասում այդ մասին իրանք՝ ֆրանսիական ուսանողները. նրանք այս խնդրի մասին խօսում են, և շատ հետաքրքիր բաներ են ասում:

Անցեալ տարւայ յունւարի վերջերին, Պարիզում՝ փառաւոր Maison des étudiants-ի (ուսանողական տուն) կահաւուած դահլիճներներից մէկում, որ պատկանում է Պարիզի ուսանողական միութեանը, (Association des étudiants de Paris) հինգ հարիւրից աւելի ունկնդիր ուսանողների ներկայութեամբ կացացաւ «Միութեան» հերթական ժողովներից մէկը. այս անգամ դասախոսում էր լեզւաբանական ֆակուլտէտի ուսանող Հէնրիխ Բերանժէն. նիւթն էր «Ենտելլիգենտ երիտասարդութիւնը և ֆրանսիական ժամանակակից րօմանը»: Մեզ համար այս դասախոսութիւնը մի կատարեալ գանձ է, որովհետև նորա մէջ պարզ արտայացուած է ֆրանսիական ժամանակակից ինտելիգենտ երիտասարդութեան դաւանանքը (profession de foi), իսկ ընթերցողների համար, մենք կարծում ենք, սա իսկական գիւտ է:

II

«Վէտի — կեանքի գեղարւեստական վերարտադրութեան մէջ, —
ասաց ի միջի այլոց ներանժէն իւր նշանաւոր դաստիուութեան
ակզբում, — երիտասարդները որոնում են անկագաբար ընդհանրապէս
կեանքի, ուրիշների և մասնաւորապէս իրանց սեպհական հոգու
դաղտնիքը։ Այս պատճառով մեր նորագոյն վիստասանները, կարծես,
ամենից առաջ և առանձին հոգածութեամբ պէտք է աշխատէին
նկարագրել այդ երիտասարդութեան համար նորա իսկական պատ-
կերը, որի մէջ ներկայանար և իդեալը և իրականութիւնը, որտեղ
երիտասարդութիւնը տեսներ իւր իսկական պատկերը, և որին աշ-
խատէր նմանել։ Մեծ հեղինակը կարող էր այսպիսով մի գեղեցիկ
վաստակ արտադրել և, անշուշտ, բարերար ազգեցութիւն կունենար։
Սակայն ֆրանսիական գեղարւեստական դրականութեան պատկառելի
ներկացացուցիչներից ոչ մէկը այդ գոհութեան արժանի պարտակա-
նութիւնը չէ կատարել։ Եթէ հոչակառոր վիստասանները իրանց
գրւածքների մէջ երբեմն երբեմն զուրս են բերել նոր սերնդի տի-
պեր, նոքա այդ արել են հարեւանցի կերպով, զրան երկրորդական
նշանակութիւն են ուել. նոքա նկարագրել են երիտասարդութեան
ափերը բացառապէս արտաքուստ. նոցանից ո՛չ մէկը երբէ՛ք չէ
թափանցել երիտասարդի հոգին, չէ հետաքրքրւել այդ հոգու աս-
տիճանաբար զարգացումով և կազմաւորութեամբ։

Այս երեսիթը բացարւում է զլիսաւորապէս նորանով, որ ո՛չ
Դոնկուրը, ո՛չ Զոլան և ո՛չ մի ուրիշը ֆրանսիական նտոտուրալիստա-
կան շկոլացի փայլուն աստղերից ինքն ուսանող չէ եղել բառի բուն
նշանակութեամբ, չէ շնչել համալսարանական շրջանի օղը, չէ են-
թարկւել այն տագնապաններին, որոնց ենթարկւել են նոր երիտասար-
դութեան մուգերն ու զգացումները, ուստի և կարողացել է զուրս
բերել նորան միմիայն արտաքին կողմից։ Միայն վերջին տարիներս,
երբ նատուրալիզմի դէմ սկսւեց բէակցիա և զրականութեան մէջ
երեան եկան իդէալիստական ձգտումներ, ասպարէզ եկան երկու
երիտասարդ վիստասաններ՝ Պոլ-Բուրժէ և Մորիս-Բարբէս մի շարք
գեղարւեստական գրւածքներով, որոնց մէջ ձգտում են նկարագրել և
բացատրել ինտելլիգենտ երիտասարդների հոգեկան կեանքը։ Այդ

երկու հեղինակները գուրս են բերում ո՛չ այժմէան նորահաս ինտելիգենցիայի տիպեր, այլ այն ինտելիգենցիայի, որին պատկանել է նոցանից իւրաքանչիւրը՝ Բուրժէի շարադրութիւնները 70-ական թւականների օգրվ են տողորւած, իսկ Բարբէսինը՝ ութունական թւականների կնիքն են կրում: Այս երկու հեղինակների վերայ, որոնք ներկայացուցիչներն են, Բերանմէն հրաւիրեց իւր ունկնդիրների ուշադրութիւնը: Նա վերլուծեց յիշեալ հեղինակների արտադրութիւնները, ընտրեց նոցանից բնաորոշ գծերը, կազմեց երկու ամբողջական, կենդանի տիպեր, որոնց համեմատեց ժամանակակից ինտելիգենտ երիտասարդի սկատկերի հետ, ժամանակակից երիտասարդի, որ մըտնելու վրայ է հասարակական—քաղաքական գործունէութեան ասպարէզը, որ տենդային կերպով որոճում է այս հարցերը, ո՞ւր գնալ, ի՞նչ անել, ինչո՞ւ համար ապրել, և որը խոհուն հայեացք է ձգում ապագայի վրայ: Տաղանդաւոր դասախոսի այս համեմատութեան արդիւնքը վերին աստիճանի խրառական է:

Ի՞նչպէս է ներկայանում մեզ 70-ական թւականների նոր սերունդը, որից «մարմին ի մարմնոյ» է ինքը Պոլ-Բուրժէն, որ 1872 թւին դեռ ուսանող էր բարձրագոյն գիտութիւնների գպրոցում (Ecole des hautes études): Այն ժամանակ նա քսան տարեկան էր և ապրում էր լատինական թաղի երիտասարդութեան կեանքով, այն երիտասարդութեան, որի մտաւոր շրջանի տիպերը փոքր ինչ յետոյ երեան եկան նորա հեղինակութիւնների մէջ: Զափազանց թշւառ էր այդ սերունդը. նորա կեանքը թունաւորւած էր, նա լնկղմւած էր մնայլ մելամաղձութեան մէջ, նա յուսահատ հեծում էր: Տիուր, հոգեկան վշտով նայում էր նա իւր և իրան շրջապատող իրականութեան վերայ. չէր էլ կարող ուրիշ կերպ նայել, չէր կարող առողջ հայեացք ունենալ կեանքի վրայ, ստեղծել առողջ աշխարհատեսութիւն: Պրուսացիները ոմքակոծում, ոտնակոլս էին անում և ասորացնում էին հայրենիքը. նոյն ժամանակւաց գեռահաս սերնդի ներկայացուցիչներից հասարաւորները, հրացանը ձեռքերին կանգնած Պարիզի ամրոցներում, կուռմ էին թշնամու զէմ, պաշտպանելով արիւնաների ծննդավայրը: Նոքա թափում՝ էին իրանց և թշնամու արիւնը, և հոգեպէս ճնշւում էին, ականատես լինելով զարհուրելի տեսարանների: Նոցա աչքի առաջ թափւում էր անմեղ զոհերի արիւնը, ամեն

տեղ սփուելով կորուսա, մահ և աւերմունք։ Աւելի գեռահամները տեսնում էին, թէ ի՞նչպէս պաշարւած քաղաքի վերաց անձրեւի նման տեղում էին թշնամու ռմբերը, բերելով իրանց հետ նոյն աւերմունքը. տեսնում էին և քստմնում... Միւս կողմից, մինչ արաւաքին թշնամու դէմ կոխու վերջանալու վրաց էր, որ Փրանսիացոց համար այնքան ստորացնող, այնքան նախառական ելք ունեցաւ, սկսւեց ներքին կոխու, արիւնահեղ, եղբայրասպան կոխու, համայնական կոխու, զարհուրելի կոխու «Փեղերալիսաների» և «վերսալեանների» մէջ... Պարիզը, մեծ Պարիզը, քաղաքակրթութեան լուսաւոր ջահը արիւնով ոռոգւեց, բոցերի ճարակ եղաւ... համայնքի մէջ լնդհարում... Արիւնահեղ շաբաթը... անգութ ձնշումներ... գաղանացին վարմունք դէպի յաղթւածները... սարսափելի սպանութիւններ... Եթէ մինչ իսկ այժմ, քսան տարի անցնելուց յետոց, մենք որ ոչինչ արիւնացին կապ չունենք Ֆրանսիայի հետ, այդ աննկարագրելի եղեռնագործութիւնները յիշելիս սարսափում ենք, խորշում ենք մարդկանցից, զարհուրում ենք, ի՞նչ պէտք է զգացին իրանք՝ Փրանսիացիք, որ ականատես և ժամանակակից էին այս զարհուրելի պէպքերին և իրողութիւններին։ Ի՞նչ պէտք է զգացին և կրէին մասնաւորագոները։ Ի՞նչպիսի ձնշող, մեռնդին պատկանող պատանիներն ու երիտասարդները։ Ի՞նչպիսի մեռնդող, մուայլ տապաւորութիւնների պէտք է ենթարկեր նոցա մատաղ հոգին, որ գեռնոր էր փթթում, նոր պէտք է կեանքի քաղցրութիւնները ճաշակեր։ Մեր հեղինակը չի կանգնում այս ամենի վրաց, չի զնում այսպիսի հարցեր, այլ բաւականանում է միայն այն ժամանակւայ երիտասարդութեան բնարոշ գծերը գուրս բերելով։ Առանց նրբագէտ հողերան լինելու կարելի է հասկանալ, թէ ի՞նչպէս պէտք է ազդէր այդ ժամանակամիջոցը գեռահաս սերնդի վերաց, ի՞նչպիսի խորը, անջնջելի կնիք պէտք է զնէր այդ շրջանի երիտասարդութեան կենդանի, մտածող ներկայացուցիչների հոգու վրաց։

Այդ երիտասարգութիւնը, ինչպէս առհասարակ լինում է, գեռանարաստ մնացած գործնական կեանքի կեղուերից, ձգտում էր գէպի ճշմարիտը, դէպի լոյս, դէպ աղատութիւն։ Նորա զգացումներն ու մաքերը մարդասիրական իդէալներով էին տոգորւած։ Երիտասարդ գլուխները լցւած էին մարդկացին հաւասարութեան, եղբայրութեան

վեհ և սուրբ երազներով. նոքա հաւատում էին, թէ աշխարհի վրայ պէտք է ժագաւորեն իրաւունքը, արդարութիւնը, խաղաղութիւնն ու սէրը... իսկ իրականութիւնը ի՞նչ ցոյց տւեց: Փոխանակ ացգ անզուսազ ձգտման դէպի լուսաւոր իդէալը, փոխանակ այդ ոսկի երազների, ի՞նչ գտան նոքա իրականութեան մէջ: Այստեղ գետի պէս հօսում էր մարդկացին արիւնը, լրբար յաղթանակում էր կոպիտ բռնակալութիւնը, ասուած ային և մարդկացին բոլոր սուրբ իրաւունքները հայհոյութեան առարկաց էին դարձել, կենդանական անսանձ կրքերը լիուլի բաւականութիւն էին ստանում, մարդկանց սրտում բուն էր զրել փոխադարձ ատելութեան չար ողին: Արդ, հնարա՞ւոր էր զեռ էլի գուրգուրել իրաւունքի, արդարութեան, մարդասիրութեան երազները, երբ շրջապատող կեանքի մէջ անխոտիր և անզուսազ կերպով տիրապետում էր միմիայն կոպիտ վիզիքական ոյժը, երբ կատաղի բռնակալը մարդկացին յարաբերութիւնների միակ ուղղութիւն տողին էր հանդիսանում, և յաղթական կերպով ապացուցանում էր բոլոր իդէալիստներին, թէ ոչ ժ օր էնք է: Կարելի՞ էր մոտածել այլ ևս խաղաղութեան, եղբարութեան, սիրոյ թագաւորութեան մասին, երբ «եղբայր-մարդիկ» վայրենի կատաղութեամբ յարձակում էին իրար վրայ, իրար միս էին կրծում վայրի գաղանների նման, երբ օդի մէջ հնչում էին թշնամութեան, ատելութան չարագուշակ ձայները, երբ չորս կողմու լսում էին աղեկատուր հասաւանք, անէծք, ատամների կրծոց: Եղբայրութիւն, սէր, միւթիւն քաղցր խօսքերը կարծես դառն, թունալից շեգնութիւն էին: Այսպիսի դարհուրելի օրեր հնարաւոր եղան, այն էլ ե՞րբ. 19-րդ դարի երկրորդ կիսին, երբ եռում էր քաղաքակրթութիւնը, երբ ուսումը, դիտութիւնն ու արւեստները անհաւատալի հսկայական քայլերով յառաջադիմում էին: Եթէ այսպէս է, էլ ի՞նչ միոք ունին այդ գովիելի քաղաքակրթութիւնը, ցանկալի յառաջադիմութիւնը, երբ նոքա մարդկանց չեն մարդկայնացնում, երբ նոքա անզօր են մարդու մէջ գաղանը սանձելու: Եւ կը լինի՞ արդեօք երբ և իցէ այս մարդկացնացումը, կը թագաւորէ՞ արդեօք ցանկալի մարդասիրութիւնը, սէրը, մարդկացին եղբայրութիւնը: Ոէր... եղբայրութիւն... դատարկ խօսքեր չե՞ն արդեօք: Տղայական ցնորքներ չե՞ն արդեօք այս բոլոր ձգտումները գետի լուսաւոր իդէալը, որ իրական կեանքի

Հետ շփւելիս անհետանում, չքանում են. երեխայական ցնորքների արդիւնք չէ՝ արդեւք նոյն իսկ այդ իդէալը: Այո՛, այո՛, — զառնութեամբ կրկնում էին Բուրժէի ժամանակակիցները. լնկնւած զարհուրելի օրերի աշաւոր տեսարանով, — բոլորը դատարկ, անմիտ, անբովանդակ խօսքեր են, բոլորը ցնորք է, երևակայութիւն է, խարուսիկ երևոյթներ են: Եւ քանի նոքա կրկնում էին այս մոքերը, այնքան նոցա հայեացքը մժնում էր, ոգեորութեան վաս կրակը, որով երբեմն բորբոքւած էր նրանց հոգին, հանգչում էր, տեղի էր տալիս սասանութեան, զոռոզաբար բարձրացրած գլուխները խօնարհում էին կրծքերի վերայ, անզօր մժեւերը թուլացած լնկնում էին... Հանրամարդկացին լայն, լուսաւոր իդէալի քնքոյց ծաղիկը ցրտահար էր լինում, խնարհում, թառամում էր և մեռնում... Դաւնանք, սակայն, մեր երիտասարդ հռետորի ճառին:

Բայցի վերեն ասածներիցս, այն ժամանակւայ երիտասարդութեան լայն, իդէալական ձգուումների խորտակւելուն և մեռնելուն մեծապէս նպաստեցին և ուրիշ հանգամանքներ: Կամենալով գոնսել իրական կեանքի այդքան փշացած լինելու պատճառները, երիտասարդ ինտելիգենցիացի ներկայացուցիչները ականայ դարձնում էին իրանց աչքերը Ֆրանսիացի մօտիկ անցեալի, ֆրանսիական սպատմութեան նախընթաց օրւայ վերայ, և գոնում էին այնտեղ երկրորդ կայսրութեան նախատինքը, որի սպանիչ, անբարոյականացնող ներդործութեան վերայ մատնացոյց է անում ներանժէն թուցիկ կերպով, երկու-երեք խօսքով: Բայց մենք առանց այդ էլ գիտենք, թէ ի՞նչ էր երկրորդ կայսրութիւնը և ի՞նչ նշանակութիւն ունեցաւ. նազմբաղդ Ֆրանսիացի համար: Պուրս եկաւ մի ճարպիկ փախտական, զողի պէս ներս սողաց ժողովրդական ինքնավարութեան մէջ, խորտակեց այդ ինքնավարութիւնը, ոսնառակ տալով օրէնքը և անամօթաբար իւր երգումը լուծելով, ձեռքն, առաւ երկաթեայ գաւազան, բռնի ուժով սոխպեց շլացած ազգին ճանաչել իրան «փրկիչ և տէր» և ակսեց կառավարել: Հայրենիքը իւր ըլուսաւորւած և քաղաքակիրթ» զասակարգերով միասին հետևում էր ճարպիկ աւազակի գործողութիւններին և նորանից օրինակ էր առնում իւր գործերի մէջ: Յաջողութիւնը ի վերուստ լնծայւած շնորհք էր համարւում: օրէնքը, իրաւունք, պատիւ, խիղճ, մարդկացին արժանաւորութիւն,

այդ ամենը ցիմարութիւններ էին, որոնց լուրջ կերպով կարող էին վերաբերւել միմիայն ցիմարները, իսկ «խելօք», գործնական, կեանքի վերայ առողջ հայեացք ունեցող մարդիկ վաղուց պէտք է թողնեին այդ ցանցառութիւնները։ Կեանքի մէջ անհրաժեշտ էր որ և է կերպով յաջողութիւն ունենալ. զորա համար ամենայն ճանապարհ և միջոց ներելի էր. միջոցների մէջ խորութիւն զնելը տիսմարութիւն էր։ Յաջողութիւնն ամեն ինչ արդարացնում է, ամեն ինչ սրբացնում։ Նորա առաջ ամեն բան խոնարհում է, որովհետեւ նա է զօրութիւն, իշխանութիւն, երկրացին առաս բարիք տւողը, նորանից է բղխում՝ այն ամենը, ի՞նչ որ հարկաւոր է լիուլի բաւականութեան համար, իսկ բաւականութիւնը խօմ կեանքի միակ նպատակն է։ Նրանից զորս ոչինչ չկայ, որին արժէր ձգուել... Ի՞նչ բարձր շահեր, ի՞նչ քաղաքացիական առաքինութիւններ, իդէալներ... Այս և սոցա նման դասարկաբանութիւնները վաղուց պէտք է արխիւ ձգել։ Նոքա ո՞չ մի բարիք չեն տալիս. նրանց հետեւողը քաղցած կլ մնայ... կեանքից հասկացող և ապրելու եղանակն իմացող մարդու համար իդէալը լաւ կերակուրն է, տաք տեղը, կառավարիչների և իշխանաւորների բարի հայեցողութիւնը, գեղեցիկ Ելենացի գերը կատարող փառահեղ տիկին ննէցդերի հագուստի կողքի հրապարակի բացւածքը... Մնացածը ամբողջապէս ցիմս ըութիւն է... Կեցցէ, ուրեմն, յաջողակութիւնը, կեցցէ՛ կեանքի վացելքը։

Այս թիթեւ, հեշտալի, սար կրքերն ու հաճոյքները զրգուղ բարյականութիւնը միախառնւած Յիշէնքախեան օպերաների դայլ-լայլիկների հետ, որ այն ժամանակւայ կեանքի արտայացութիւնն էր, Տիւլիլիից տարածւում էր հասարակութեան մէջ և այնուեղ եռանդուն կերպով մշակւում էր, շնորհիւ երկրորդ կայորութեան։ սորա ձեռքում դա մի գեղեցիկ պատւար էր «Փնտասակար» գաղափարների դէմ, և ամենայուսալի գրաւական՝ ներքին խաղաղութիւնը ու հանդարտութիւնը պահպանելու համար։ Այս կողմից նորա աշխատութիւնները պսակում էին կատարեալ յաջողութեամբ. կենդանական պահանջներն առաջին տեղն էին բոնում, կատարւում էին ամեն տեսակ խողութիւններ։ Անառակ վարք ու բարքը չափազանց յարմար էր զալիս ֆրանսիական հասարակութեան կրթւած դասակարգերի ճաշակին, նոքա անցագաբար վազում էին հարստութեան,

վայելքների յետևից: Փողը, զւարձութիւնը պաշտւում՝ էին, փողի համար հոգիներն էին ծախում: Ամենալիրը նոցանից ոգեկան զարմանալի արագութեամբ քաղաքացու պատի էր հասնում, ձայն էր ունենում երեսփոխանական ժողովում, բարձրագոյն առենում, դատարաններում, դատախանական էր սպաֆիսատրական ամբիոն, գործում էր հրապարակախօսութեան և զրականութեան մէջ: Քաղաքակիրթ Ֆրանսիան կամաց-կամաց սկսեց նմանել մի ահազին հասարակաց տան, որտեղ, առանց խղճահարութեան, օրը ցերեկով, ամբողջ Եւրոպայի աշխարհում էին ամեն տեսակ կեղասութիւններ և որտեղ պատիւ, խիզճ, համոզմոնք, բոլորը օդն էին ցնդում: Եւ այս ամենը շարունակւեց, համարեա՛, ամբողջ քսան տարի, որի միջոցին ապականութիւնը տարածւեց Ֆրանսիայում, ինչպէս իւղի կաթիլը ծծող թղթի վրայ:

Խնքնըսաինքեան հասկանալի է, որ այն ամենը, ինչ որ ազնիւ էր, մաքուր էր, բարոյակէս կենդանի էր, պէտք է մեռնէր իսեղող, ապականւած մթնոլորդի մէջ, կամայ ակամայ պէտք է տեղի տար ինքնաբաւական խոզութեանը: Բնաւ որութիւնները մանրանում էին, համոզութերը ծախուում էին շողշողուն ոսկիներով, տաղանդները փչանում էին: Կեանքի և գործունենութեան բոլոր խաւերի մէջ աերապետեց տոռը միջակութիւնը, որ ամեն բանի վրայ զրեց իւր սեփական կնիքը. ամեն ինչ ստորացաւ, կեղտուուեց, հողեկան կեանքի աղբիւրներն սկսեցին ցամաքել, ամենայն ստեղծագործութիւն, բացի սրիկայական օպերէտներից, մեռաւ: Անբարոյական հասարակութեան մէջ միանգամայն սպառւեցին կենդանի ոյժերը, անսառակութեանը յաջորդեց կատարեալ սնանկութիւն, որի հետևանքն եղաւ 70 թւականի կատաստրովը:

Բերանժէն չընկարագրեց իւր ունկնդիրների առաջերկրորդ կայսրութեան օրերում Փրանսիական հասարակացին կեանքի այս այլանդակ պատկերը: Նա միայն հարևանցի ակնարկ ձգեց այդ կայսրութեան վրայ, համարելով նրան ամբողջապէս Ֆրանսիան անբարոյականացնող և 70-ական թւականների ինտելիգենտ երիտասարդութեան ոգուն անկմանը նպաստող մի գործօն (Փակորք): Բերանժէի հասակակիցներին և լնկերներին պէտք է զարմացնէր աւելի այն լնդհանուը տեսաբանը (Փօթե) որի վրայ նկարւում էր վերոցիշեալ պատկերը - այն հա-

սարակութիւնը, որն օժանդակում էր աւազակի յաջողութեանը, որը ծափահարում էր նրան, խոնարհում, տարածում էր ֆրանսիայի այդ շաբ ոգուց ոտքերի տակ: Այդ հասարակութիւնն ընդունակ էր միայնգամայն մոռանալ մարդկացին արժանաւորութիւնը, վերջին աստիճանի ստորանալ, փշանալ, բարոյապէս ընկնել: Նա պատրաստ էր յարձակւել իւր առջելը դրած լափի վրաց, և մեծ բաւականութեամբ խրւում էր իւր համար պատրաստած ցեխի մէջ, և, որ ամենից սարսափելին է, արորւելով այդ ցեխի մէջ, իրան երջանիկ էր զգում և ուրախ, ինքնաբաւական մրժմրժոցով ականջ էր տանում: Եւ այս անողներն էին երկրի ծաղիկները՝ նորա բարձրագոյն քաղաքակիրթ, լուսաւորւած և յառաջադէմն ներկայացուցիչները: Երբ մարդ երևակացում է, թէ ի՞նչ էր այդ հասարակութիւնը, որ մարդնացած ապականութիւն էր, ակամաց սարսուռ է զգում, փշաքաղւում է... կարելի էր այս բոլորը պատմական անցեալ համարել, մոռացութեան տալ: Բայց ցաւն այն է, որ չի կարելի: Զէ՞ որ հասարակութիւնն այլպէս էր ոչ թէ հարիւր տարի առաջ, այլ երէկ: Նա չէր կարող մի դիշերւաց մէջ ամբողջովին փոխւել. այդպիսի կարծ միջոցում չէին կարող խողի ցւուկները մարդկացին կերպարանք դառնալ: Եւ թէ արդարեւ նոքա չը փոխեցին, դորան պերճախօս վկաներ են 70-ական թւականների բազմաթիւ իրական փաստերը: Զը նայելով որ արտաքուստ շատ բան փոխւեց, չը նայելով որ երկրորդ կայսրութեանը յաջորդեց երրորդ հանրապետութիւնը, իրական կեանքը մնաց իսկապէս առաջւանը, նրա շարունակութիւնը: Եւ այսպիսի կեանքի մէջ, այսպիսի հասարակութեան մէջ, որին անաշառ պատմութիւնն անշուշտ իւր արժանի տեղը կտաց, վիճակւած էր մեզ հետաքրքրող սերնդի ինտելիգենց երիտասարդութեանը ապրել և գործել... Ի՞նչպիսի ճնշող, վհատեցնող, կաշկանդող ազդեցութիւն պէտք է անէր այդ կեանքը նոր սերնդի հոգու վրայ:

Բայց եթէ այդ ժամանակւայ երիտասարդութիւնը շրջապատող կեանքի մէջ իւր իգէալական ձգտումներին, նեցուկ չէր գտնում, գուցէ նա այդ կարող էր գտնել վերացական զաղափարի, փիլիսոփայութեան, գիտութիւնը քաջալերող ոյժի մէջ: Դժբաղգաբար չէր կարող, վտում ենք Իերանմէկից: Թէ՛ գիլիտվայութեան, թէ՛ գիտութեան մէջ վաղուց արդէն կատարւել էր արմատական փոփոխութիւն,

որի հետևանքները, մեր հռետորի ասելով, ամենևին չէին նպաստում մտածող մարդոց ոգին բարձրացնելու:

«Թրանց ծագումով այնքան տարբեր և իրանց նպատակներով այնքան հակառակ կանոնի կրիտիցիզմը և անողո - ֆրանսիական պողիտիւիզմը միացրին իրանց ոյժերը, որպէսզի հին մետաֆիզիկայի բացարձակ դրութիւնները խորտակեն և այդ անմահ հաւաքւած բացարձակ դրութիւնների տեղը դնեն ընդհանուր չարարեր ականութեան վարդապետութիւնը լր Ֆրանսիական ցեղափոխութիւնն ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ բացարձակ իրաւունքի հրատարակութիւնը երկրի վրաց. նա իրեւ անհերքելի և սրբազն յայտնեց այն սկզբունքը, թէ բոլոր մարդիկ եղբացր են, թէ նոքա բոլորը ազատ են և հաւասար: Սա բացարձակ մետաֆիզիկական դրութիւն էր, և ահա՝ կանոնի վարդապետութիւնը, միացած Կոնսիսի հետ, հերքեց այս դրութիւնը: Ըստն իսկ գիտութիւնը, որ հետզհետէ տիրում էր մտքերին, հրատարակեց, թէ աշխարհում գոյութիւն ունին միմիայն օրէնքներ և ամբողջ տիեզերքում տիրապետում է համատարած պատճառաբանութեան երկաթեաց շղթան, թէ հոգեկան և թէ նիւթական աշխարհները կառավարուում են նորանով և միայն նորանով: Այս երկու սկզբունքները, —ընդհանուր յարաբերականութիւն և պատճառականութիւն, —զօրեղ կերպով խորտակեցին ազատութեան, բացարձակ իրաւունքի, ընդհանուր եղբացրութեան գաղափարները, որոնք ոգևորում էին անցեալ դարի վերջում՝ ապրող մարդկանց, որոնցով ներշնչած նոքա հերոսութեան էին հասնում, ձգտում էին ամբողջ աշխարհը ցեղաշրջել:

Ինչպէս որ տաճարի սիւները խորտակելով իրանց հետ խորտակում, փշրում ու տապալում են կամարները, կաթողիկէն, աստւածային սուրբ խորանը և սրբազն պատկերները, այնպէս էլ ազատութեան և իրաւունքի բացարձակ սկզբունքների հետ միասին խորտակեցին բանականութեան արդիւնքը՝ ջերմ հաւատը, և առհասարակ առաջւայ բարոյական գաղափարների ամբողջ շէնքը: Բացի անհրաժեշտութեան երկաթեաց օրէնքից, որով կառավարում է ամբողջ տիեզերքը, և որը ամենեւին չի ենթարկում մարդկանց գործողութիւններին, չը կայ ոչինչ անխախտ, ոչինչ բացարձակապէս ճշմարիտ, չը կա' ոչինչ, որի վերաց, իրեւ հաստատուն նեցուկի

վրայ, յենի մարդուս միաքը: Ճշմարտութիւնն ու ստութիւնը, առաքինութիւնն ու մեղքը, բարին ու չարը, բոլորը յարաբերական բաներ են երեւում, բոլորը դառնում են մեզ համար լնգհանուր տիեզերական ոյժերի բնական անխուսափելի հետեանք, ոյժերի, որոնք չեն ենթարկում մարդու կամքին: Ամբողջ բնութիւնը իւր փոփոխութիւններով երեւում է պատճառների և հետեանքների անընդհատ ճակատագրական շղթայ, և ողորմելի, անզօր մարդը չի կարող իւր կամքի համաձայն փոխել կամ դասաւորել այդ երկաթեայ շղթայի մի օղակն անդամ: Աշխարհի մէջ ամեն զան կը կատարէի այնպէս, ինչպէս պահանջում է ընդհանուր պատճառականութեան անողոք, բնական օրէնքը, և մարդը, որ անմիջապէս գտնուում է այդ օրէնքի իշխանութեան տակ, իրերի ընթացքի մէջ փոփոխութիւն մոցնել չի կարող: Այսպէս էր, բերանմէի ասելով, մոքերը նւաճող պատճառականութեան փիլիսոփայութիւնը, որ, աւելացնում ենք մեր կողմից, հոգեբանական տեսակէտից սխալ էին հասկանում և բացատրում: Այս փիլիսոփայութիւնը իւր կնիքը դրեց և հասարակական զիտութեան, և՝ գեղարւեսասական գրականութեան վերաբերյալ առաջին անդամ երեւան եկաւ Տէնի, յետոյ և Ալնանի շարադրութիւնների մէջ. այդ ոգով տօգորւեցին և տիրապետող նասուրալիստական շկոլայի վիպագիրները—Ֆլորէր, Գոնկուր եղբայրները և Զոլան իւր աշակերտներով և հետեւողներով: Այդ փիլիսոփայութիւնը, այդ պատմութիւնը, այդ գրականութիւնը մահացնող սառնութիւն փչեցին երիտասարդութեան վերաբերյալ: Դոցա շնորհիւ երիտասարդների բարոյական ոյժը թուլացաւ, կաշկանդւեցաւ:

Գաղափարների, պատմութեան և կեանքի այս զանազան աղողեցութիւնների հետեանքը չափազանց անմիսիթար եղաւ: Երիտասարդութիւնը հոգեպէս ընկճաւեց, ընկաւ. ծայրահեղ հիասթափման մէջ, ոչ մի բանի չէր հաւատում: Վերելից, գաղափարական աշխարհից, սառն, ազատ լրս էր տարածւում նորա վրայ, շրջապատող իրականութիւնը նորա մէջ զարթեցնուում էր զդւանքի զգացում: Կեանքը երեւում էր անխորհուցդ, աննալատակ, ապականւած: Զկար այս աշխարհում ոչինչ, որին արժէնար գէմ փոքր ի շատէ լրջօրէն վերաբերեւէլ, որի վերայ արժէնար օգտաւէտ կերպով և հաճութեամբ գործնել հոգեկան ոյժերը: Սորանից առաջ եկաւ յուետեսութիւն, ան-

տարբերութիւն և, իբրև այս բոլորի անմիջական հետեւանք, նեղ եսականութիւն, սեպհական և սըր պաշտել: Արդարեւ, եթէ շրջապատող կեանքը այնպէս է կազմակերպւած, որ նորա մէջ ոչինչ մասնակցութիւն չարժէ ունենալ, եթէ այդ կեանքի մէջ ոչինչ չը կաց սիրելու, ոչնչով :ի կարելի յափշապեկել, ոչնչի առաջ չի կարելի խոնարհւել, ուրեմն մտածող մարդուն ուրիշ ոչինչ չի մտում անել: բայց եթէ երես դարձնել այդ կեանքից, քաշւել, փակւել իւր անձնական ներքին աշխարհի մէջ, միմիայն իրան հոտմար ապրել, և անտարբեր աչքով նայել ողորմելի տեսարանների վրայ, որ ներկայացնում են ողորմելի դերասանները կեանքի ողորմելի բեմի վրայ: Այս եզրակացութեանն եկան 70-ական թւականների երիտասարդութեան նոյն խականագոյն ներկայացուցիչները, որոնցից է անկասկած և ինքը՝ Պօլ-Բուրժէն. նոքա բոլորը դարձան յուսաբեկ պեսսիմիսոներ և իրապաշտներ: Բայց այսպէս իրանց շրջապատող կեանքից խոյս տալով, աշխարհից կորւելով և ճզնաւորի նման խցերում փակւելով՝ նոքա էին կարող իրանց բաղդաւոր զգալ: Մի կողմից նոքա ողբում էին լայն, հանրամարդկացին իդէալների կորուսոր, միւս կողմից, հոգեպէս կորւելով շրջապատող կեանքից, նոքա հետզհետէ թառամում էին: Մարդը ընկերական արարած է. հէնց որ նա խզեց իւր սերտ, կենդանի կապերը հասարակացին մարմնից, որից շարունակ ծծում է կեանքի հիւթը, անպատճառ կը ցամաքի, կը թառամի, կը մեռնի... թշւա՛ռ էգօխաններ. նոքա պարզ տեսնում էին իրանց տկարութիւնը, տկար էին գործով, տկար էին մաքով և զգացումներով, և զրա գիտակցութիւնը նրանց տանջում էր, հանգիստ չէր տալիս Այս հանդամանքը զեղեցիկ կերպով երևում է Բուրժէի վէտերի երիտասարդ: Հերոսների վրայ. նոքա, իհարիէ, բարոյապէս տգեղ երևոյթէին ներկայացնում, և կարո՞ղ էր արդեօք ուրիշ կերպ լինել: Նոքա շատ լաւ էին զգում այդ, ուստի և ամեն ներին չէին մոռածում իրանցով հրճւել. ընդհակառակը, նոքա լաւ էին հասկանում իրանց բարոյական կեանքի անբնական մինելը, հասկանում էին, և քիչ չէին տանջուում: Այս տանջելը պարզ ցոյց է տալիս, որ նրանց մէջ կար աղնիւ, մարդկացին բնաւորութիւնն Այս պատճառով, —բացադանչեց ներանժէն, —ընայելով այս բոլորին, մենք սիրում ենք նրանց, համարելով նրանց մեր եղբայրները, որոնք

տանջւում էին, որոնց կեանքը հարւածւում էր և որոնք, սակայն, հնար չունեին իրանց վերքերը բժշկելու... Մենք նրանց սիրում ենք և ներում՝ նրանց մեղքերը, որովհետեւ նոքա զարհութելի անցեալի ժառանգներն էին, որովհետեւ նոցա մաքովն իսկ չէր անցնում հսկարտանալ իրանց բարոյական հիւանդութիւնով, կամ նրանից ո՛ր և է օգուտ սպասել:

Ահա' այսովիսի գոյներով է նկարում և այսպէս է զնահատում մեր ժամանակակից երիտասարդութեան ներկայացուցիչը, հաւանօրէն լաւագոյններից մէկը, — 70-ական թւականների նոր սերունդը: Տեսնենք ինչ է ասում նա իւր եղբայրակիցների՝ 80-ական թւականների սերնդի մասին:

(Կը շարունակւի)

ԱՊԵՐՈՒՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ

ԵՒ

ԹՈՒՍԱՅ ՆԱԽԹ-Ը

ԳԱԼՈՒՍ ԿԻՒՂԵՆԻՆԵԱՆԻ

(Շաբունակութիւն և վերջ¹⁾)

Մենք ջանացիմք կարելիին չափ ճիշտ գաղափար տալ Ապշերոնեան թերակղզում գործադրող նաւթափին շահագործութեան մասին. բաց քանի որ այդ կատարելագործութիւնները միայն երէկւանից են, մենք աչժմ անցնենք նաւթափին գործի զարգացմանը, այն կառավարչական սիստեմ-ներին, որոնք դանդաղացրել են կամ խրախուսել են լառաջդիմութիւնը, այն լաղթութիւններին, որ տարել են ինտելիգէնս գործարանատէրերը աւանդութեան և ամերիկական մրցման վերակ և, վերջապէս, այն խոչընդոտ-ների վերակ, որոնք խանգարում էին Անդրկովկասիան նաւթի շահագործութեան ընդարձակւելուն.

Սկզբում, մեր դարու միջերքում, նաւթափին դործը ոչ մի կարևորութիւն չէր ներկայացնում, ու այն էլ շատ պատճառներով՝ նախ որ կառավարութիւնը, մոնոպոլ ստեղծելով՝ թուլացնում էր գործարանական ջանքերը. երկրարդ՝ հաջորդակցութեան ճանապարհներ չը կալին, որովհետև քարւանները միայն փոքր քանակութեամբ էին փոխադրում Բաքւից Վլա-ղիկաւկազ. Նաւթը սակաւ էր և թանկ, և Ռուսաստանում Տրանսիլւանի-ափ (ամերիկական) կերոսինն էր գործածում. կամաց կամաց գործիքները կատարելագործեցին, արդիւնաբերութիւնը աճեց և աչժմեալ բարգաւաճման առաջին հիմունքները տրւեցին 1872 թւականի հրամանով,

1) Տե՛ս «Մուլճ» № 7-8, 9 և 10.

որը վերացրեց մոնոպոլը (սինալաճտոռոթիւն). Երկրորդ շրջանում (1872—1877), տէրութիւնը վերապահեց մարկարի իրաւունքը, իսկ 1877-ից այդ էլ վերացրեց: Դորժարանական ազատութեան ամեն մի նոր քաղլին համապատասխանեց արդիւնաբերութեան կրկնապատկումը՝ գործիքների կատարելագործութեան և ճանապարհների շատացնելու պատճառով և միննոն ժամանակ ամերիկական կերոսինը, մաքսի պատճառով թանկանալով՝ անկտանում էր ռուսական շուկաներից, Եթէ աւելցնենք որ ո՞ի լանձ. նաժողով է կազմւած կալմեր հրամանով, նաւթի գործը կատարելագործելու միջոցներ սրոնելու համար, զորանով մենք մի քանի խօսքերով ամփոփած կը լինենք ազդ աչնքան նոր, բայց և աչնքան բեղմնաւոր գործի պարզ և կարծ պատմութիւնը.

Մոնոպոլի ամբողջ շրջանի ընթացքում, նաւթի արտահանութիւնը Բաքվից չնչին է եղել, նոյն իսկ Ռուսաստան, զեռ 1871 թւին 2,100,000 պուդ կերոսինից, որ զործ է ածել Ռուսաստանը, 1,720,000 պուդ բերել է Ամերիկակալից, և միայն 380,000 պուդ Բաքվից, 1876-ին՝ 13 միլիոնից 6 միլիոնը եկել է Բաքվից: Եւ դեռ մինչ 1878 թւականը Բաքվից միայն ջրով կարելի էր փոխադրել, ալմինքն միայն ամառը, քանի որ բոլոր ռուսական գետերը ձմեռը սառչում են:

Ահա, իրբ զոկումնատ, Ապշերոնից արտահանւած հում կամ զտած նաւթի քանակութիւնը 1840 ից մինչ 1871 թւականը.

մոնոպոլի ժամանակ	հում նույն.	մոնոպոլը վերջացնելուց լեռու	հում նույն.	
			հում նույն.	զունդ նույն.
1840	3,500 թոն.	1872	"	16,400
1845	3,500 "	1873	65,000 թոն.	"
1847	3,400 "	1876	195,000 "	55,000
1850	3,500 "	1880	400,000 "	150,000
1860	5,000 "	1883	800,000 "	206,000
1865	8,000 "	1888	2,500,000 "	800,000
1870	27,000 "	1889	2,780,000 "	900,000
1871	24,000 "	1890	3,000,000 "	1,000,000

Մի թոնը հաշւած 60 պուդ.

Մոնոպոլը, որ տրւած էր Միրզոկան և զբակրներին, տէրութեանը բերում էր 250 մինչ 300 հազար ֆրանկ, որը չնչին էր համեմատած նաւթարին զործին արւած վնասի հետ: Ասացինք որ 1872 ին մոնոպոլը վերացրեց և արդիւնաբերութիւնը իսկուն կրկնապատկւեց: Բայց ազդ միջոցը իւր բոլոր պտուղները չէր ցուց տալ եթէ միայն նորէլի ընտանիքը չը գար Բաքվում հաստատելու համար: Առանց որ մենք ստիպւած կարծենք մեզ մի քանի գլուխ նւիրելու ազդ շատ նշանաւոր մարդկանց կինսագրութեանը՝ Ռոբերտ, Լուգւիգ, Ալֆրէդ, Էմանուէլ Նորէլներին, մենք աչնու ամենա:

Նիւ չենք կարող մի քանի խօսք չասել թէ ինչ մեծ ծառակոթիւն են նոքա մատոցի նաւթալին գործին. նոքա ոչ միայն Բաքվի ամենահոչակաւոր զատղներն են, նոքա նաև ամենախնելօքն են, ամենապատրաստը ընդունելու և բաճախ ամենասրամիա՞՝ հնարելու տեսն տեսակ կատարե. լագործութիւններ. ախպէս որ փոխանակ բաժանելու երեք պերիօդների՝ մոնոպոլի, մարկարին վճարի և ազատ շահագործութեան, երրեմն բաժա. նում են ախպէս՝ շրջանը մինչև Նորել եղբայրները, 2) Նորելեան շրջան, որ սկսում է Առոքէրտ Նորելի հաստատելովը Բաքւում, 1875-ին. Էմա. նուէլ Նորելը, հայրը, հնարեց տորպիլեօրները. Լուդվիգ և Որոքէրտ Նորել ինժեներները, որոնք Նեւալի նաւազործարաններում հոչակւել էին, գեռ Բաքու չեկած՝ ահապին հարստոթիւն էին դիպել. վերջապէս Ալֆրէդ Նորելը ամ. բողջ աշխարհից ճանաչւած է որպէս զինամիտի (ուժանագ) հնարող (No. beliefs Explosive). Լուդվիգ և Որոքէրտ եղբայրներն են որ հիմնեցին Բաք. ում անքան հոչակւած Նորել եղբայրների տունը:

Նախ որ Նորելներից առաջ Բալախանից նաւթը գալիս էր Բաքու տակառների մէջ որ տանւում էին կատարելով կամ տարօրինակ սալլերի վերաբէ Ալդ նստում էր տարեկան 4 միլիոնից աւելի. Նորել եղբայրները առաջարկեցին իրանց կոնկորդէնտներին կառուցանել աչժմեալ սիստէմը. նոքա մերժեցին. այն ժամանակ Նորելները վճռեցին իրանց հաշուվ այդ շինել, որը շատ լաւ լաջողուեց. Ճխլւելով Նորելների մրցումով՝ հակառակորդները ստիպւեցին նոյնական կամ զնել. Խողովակները 3—12 անտիմէար տրամադիմ ունին և թեքւած են, ախնպէս որ նաւթը ինքն իրան իջնում է Բալախանից Բաքու. ըստ հարկին՝ կարելի է զործածել չոքէ ջրհաններ. Հասկանալի է որ աղջ ժամանակից ի վեր արդիւնաբերութիւնը չափազանց արագութեամբ աւելացաւ. զա էր առաւելութիւնը. բայց զա միննոն ժամանակ նաև մի չարիք կը լինէր, եթէ միան տրանսպորտի միջոցները նոյնը մնալին, որովհեան Աստրախան զնացող նաւերը ողորմելի էին. Նորել եղբայրները առաջարկեցին կասպիան և Վոլգապի ազ և այլ ընկերութիւններին երկար ժամանակամիջոցով պատմանագրութիւնները ցիստերն-նաւեր (casks steamers) շինելու համար, որոնք պէտք է ուղղակի ընդունէին հեղուկը առանց տակառների միջնորդութեան: Ալսանդ էլ Նորելները հանդիպեցին բուտինին և չկամութեան և զորանից զլած՝ իրանք իրանց արհեստանոցներում. Պիտերբուրդում շինել աւեցին ցիստերն. նաւեր իրանց կերոսինը տեղափոխելու. համար. Ալդ նաւերը զիազում են զործարանի չետելին, և խողովակներու նոցա մի քանի բոպէում լքցնում են. Աստրախանում նոցա նոյնքան արագ վակը են բերում և նոյն ձեռվ լքցնում վագոն—ամբարները, որոնց նոյնակս Նորելների տունն է շինել. աւելի փոքր նաւերը կատարում են Վոլգապի գետավին ծառակութիւնը: Կաս. պից ծովի նաւերը, 90 մէտր երկարութեամբ և 8 մէտր լայնութեամբ, կարող են տանել մօտ 1000 թոն կերոսին (թոնը 60 պուդ). այժմ շինում են նաև

1500 թոն տանող նաւեր Սե ծովի համար Ցիստէրն-վագոնները տանում են մի տանեակ թօն։ Միւս գործարանատէրերը հետեւցին Նորէլ եղբայրներին, և ալժմ մի քանի ցիստէրն—նաւեր շրջում են Բաքւի, Աստրախանի և Պարսկաստանի միջներքում և մի քանի հաղար ցիստէրն-վագոններ՝ Ոռուստասանում և Կոմիկաստմ։ Աչսպիսով վերացաւ նաւթի կուտակելու ամեն վտանգ, և երբ Բաթումի երկաթուղու գիծը բացւեց՝ սա շատ օգտաւէտ եղաւ, թէն նա ալ ևս անհրաժեշտ չէր։

Բայց և աճնպէս Բաքւում եղան մի քանի ծանր կրիզիաներ տնտեսական և ֆինանսական, զլսաւորապէս լառաջացած նորանից, որ բաւականաչափ արագ չէր արտահանուում արտադրած նաւթը։ Դորա համար է որ առաջարկեց Բաքւի և Բաթումի մէջ անցկացնիլ նաւթանցք, ինչպէս այդ կաէ Բալախանի և Բաքւի մէջ։ Ծախոքը հաշում են 60 միլիոն ֆրանկ 900 վերատի համար Բայց ալդ առաջարկը դեռ իրազործման շրջանը չի մտա։

Ոռուստատանի գետերի սառչելուց լառաջացող անկարմարութիւնները վերացնելու համար, Նորէլ եղբայրները և ուրիշ զտողներ ահագին րեզ զերւուարներ են կառացնել Ոռուստատանի զանազան կէտերում։ Յարիցինում Վոլգավի վերակ, որը վերջնակէտն է ոռուսաց երկաթուղիների։ Օրեօլում, ուր բեզերւուարները կարող են տանել մինչ 100 միլիոն հեկտավում։ Նովն նպատակով առաջարկել են երկաթուղիների շարունակութիւնը Վլադիկավոլից Պետրովսկի, որը Գալատանի նաւահանգիստն է, 24 ժամ Բաքւից հեռու։ Պետրովսկից կարելի էր այն ժամանակ երկաթուղի անցկացնել մինչ Բաքու և կամ ցիստէրն-նաւերի երթենեկութիւն սարքել Անկասկած, ոռուսաց կառավարութիւնը չի չապաղի միացնել Վլադիկավոլը ծովի հետ, որովհետև ալդ բանում ուղղմագիտական շահ ունի՝ զեռաւելի քան վաճառականական շահ։

Ուելցնենք որ նաւթակին գործը մի նոր կեանք է տւել Բալթեան ծովի առետրին, ուր զանազան նաւահանգիստներ և մասնաւորապէս Լիբաւան, որոնք ջրանցքներով ուղղակի կապւած են Վոլգավի հետ, արտահանման մեծաքանակ նաւետուր ունին Գերմանիայի, Բելգիայի և Ֆրանսիայի հետ։

V

Անշուշտ կը հարցնեն թէ ինչ պէտք է լինի մի գետնի կաղմութիւնը, որը ալղան հարուստ է ջրածուիներով, աղքան հարուստ ամեն տեսակ երեսթներով, նաւթի խաւերով, հրաբիսավին ժայթքումներով, ցեխի և կրակի կրատէրներով, չը վառւող զաղերի աղքիւրներով, բայց և կառարկապէս անքերրի և զուրկ բուսականութիւնից։ Ալ և ալ գիտնականներ ուսումնասիրել են նաւթի գուանալը զէօլոգիական ալլ և ալլ ժամանակ-

ներում, և չը ճակած որ առաջարկւած հիպոթէզները մեծագույն մասով վիճելի են, բայց մինք հետաքրքրական ենք գտնում ալտանեղ նոցա առաջ բերել:

Ամենքը ընդունել են որ ամերիկական նաւթը հանդիպում է առաջին շերտում (terras primaires), մինչդեռ Բարսի նաւթը արակեան կասպիան կազմութեան երրորդ շերտերում (couches tertiaires): Բայց ալտանեղ սկսում է տարածալնութիւնը. մէկերի առելով՝ նաւթը գոյացել է բուռական նիւթերի լուծելուց հոգի տակ, մինչդեռ միւսները նրան լատկացնում են կինդանալին ծաղումն: Առաջինները հիմնւում են այն բանի վերակ, որ նաւթալին խաւերը հարեան ևն քարածխալին խաւերին և, բայց դորանից, քարածալից ստանում են նույնպիսի իւզեր որպէս նաւթից, այս զանազանութեամբ որ նոքա չն լուծում բենդինի մէջ: Աչպատու ուրիմն կարծեցին թէ նաւթը գոյացել է որպէս քարածուխ փակ տեղում բուսերի լուծելուց. գաղալին արտադրութիւնները և սրբազան կրակները հետեապէս պէտք է լինեն ալզ կազմալուծելու հետեանքը, որովհետեւ զետնի տակ եղած թիզերուարներում ժողոված գաղերը մնում են աճնտեղ աճագին ճնշման տակ, գաղերը դուրս դալով՝ վերականգնուում է հաւասարակշռութիւնը գաղերի ճնշման և մթնոլորդի ճնշման մէջ: Երբեմն հաւասարակշռութիւնը վերսկանզնում է աւելի բուռն կերպալ՝ չախտի թէ չաճախ ինչ սարսափելի ժամկին քունքներ են լինում հոր վարելիս, որոնք դուրս են մղում ամենամարդ գործիքները և ծնունդ աւլիս այն ժամկի դուրս հորերին կամ շաղրաւաններին, որոնք թէ վասնպաւոր են և թէ անպատուզ:

«Հաւանական է, ստում է պ. Վինչել (Winchell), որ նաւթը երբեմն բարձրանում է զետնի երեսը նոյն աեսակ ուժի ազդեցութեամբ, ինչպէս արտեսեան ջրհորներն են. բայց պէտք է կարծել որ աւելի չաճախ ալզ մղումը լաւաջանում է զաղերի ճնշումից: Կարող է պատահել որ մի ստորերկրեալ խոռոչ (cavité) կամ ծալոս քարածալերի մի կտոր, փակւած լինելով անթափանցելի խոռոչի մէջ՝ պարունակում են քարածուխ իրանց նիրքերի մասերում, մինչդեռ մնացածը լրցւած է գաղալին ջրածուխներուն: Ալզ խոռոչները (զատարկութիւնները) կարող են զանազան ձեր և անորոշ մեծութեան լինել, և կամ բաղկացած լինել շատ խոռոչներից կամ հաղորդակցող ճեղքւածքներից. բայց միշտ էլ հեղուկի հետ կը լինեն զաղեր, մեծ ճնշման տակ: Ալզ դէպրում ճնշումը լաւաջացած կը լինի օրգանական նիւթերի քիմիական կազմալու ծութիւնից, բայց ոչ թէ աւելի բարձր խաւերում զանուող հեղուկի ծանրութիւնից, ինչպէս ալզ արտեսեան ջրհորների դէպրումն է լինում: Աթէ, պատահմամբ, փորելու ժամանակ հասնում են խոռոչի վերին մասը, զաղը սաստիաբար դուրս է զալիս մինչև որ նորա ճնշումը հաւասարելի մթնոլորդի ճնշմանը: Ալզ դէպրում, նաւթը ստանալու համար՝ պէտք է դիմել ջրհանների օգնութեանը, որովհետեւ գաղի նիրգործութիւնը ոչ միայն չի բարձրացնում հեղուկը, ալզ ընդհակա-

ռակը, մղում է նորան դէպի ներքես. Երբ հոր փորելը թափանցում է խոռոչի ոչ այն մասը որ գաղ է պարունակում, այլ աճտեղ ուր իւղն է հաւաքւած, այն ժամանակ գաղը, ներգործելով հեղուկի վերա՛ սորան կը մղի դէպի հորը և տեղիվ կը տաէ ժաշֆող աղբիւրի և շատրւանը կը տեի մինչև որ հաւասարակշռութիւնը կը վերականգնի. բայց երբեմն դապի ոչքը այնքան միծ է, որ խոռոչը բոլորովին զատարկում է, Երբ հաւասարակշռութիւնը վերականգնում է աղբիւրի սպառւելուց առաջ, այն ժամանակ պէտք է լինում դիմել ջրհաների օգնութեան, ինչպէս վերը վիշած դէպքում:

«Մէջ ու մէջ խփող շատրւանների հորերը, որպէս երեսում է, որոշ դէպքերում գործում են որպէս մէջ ու մէջ զործող (ընդհատող) ջրի շատրւանները. սական մեծ մասամբ գաղափն ջրածովիներն են արտազլում նոցաւ. Կարող է պատահել որ փարւածքը հասնում է մի ճեղքւածքի որ լիքն է սեղմած գաղպի, անցնում է նորա միջով և վերջապէս հասնում մի խոռոչի որը նաւթ է պարունակում. նաւթը կը փախչի դէպի հորը, կը բարձրանաւի մինչև ճեղքւածքի վերեի մասը և թուլ կը տաէ որ գաղերը գուրս գան: Երբ հեղուկի խաւը շատ հաստ չէ՝ գաղը նորան կը բարձրացնի և գուրս կը մղի դէպի օղը՝ մաղւող անձրեի նման. Երբ հեղուկի մասսան աւելի ծանր կը զառնայ՝ նա զուրս կը ժակթքի մի շատրւանով, որ մի քանի վայրկեան կը տեի և դորանից լետ կը լինի զաղափն արտավիժումն. իստու նաւթը նորից կը լքցնի հորը մինչև որ նորից առաջւաէ պէս դուրս ժայթքի և ապսպէս շարունակ: Նոյն երեսովթը կը լինի, եթէ զաղափն խոռոչը գտանւում լինի նաւթալին խոռոչի տակ և մինչև անզամ եթէ երկու խոռոչներն էլ նոյն մակերեսովթի վերաէ գտնեւն»:

Մենք դիտաւորութիւն չունենք ալստեղ առաջ բերել ժամանակիս քիմիկուների թէօրիաների մանրամասները նաւթի ծագման մասին. բայց այն կարծիքից չետու թէ նաւթը և բարածութիւը միննուն ծագումից են, մենք կը վիշենք միան կարծիքը այն բոլորի, որոնք քարածութիւն նաւթի հիմնական տարրերութիւնից եղանակացնում են նաև նոցաւ զուանալու կատարեալ տարրեր պատճառներից լինելը: Մի կողմում նոքա են, որոնք, որպէս կնողիր (Engler) կարլալուէից և Հոֆէր (Höfer) Լէօրէնից և զոցան ամերիկական քիմիկուների մեծամասնութիւնը, նաւթի մէջ տեսնում են մի հետեանք ծովափն անտառների մնացորդների կաղմալուծութեան: Դորա ապացուցը այն են համարում նոքա, որ նաւթը լինում է այն գետիններում, ուր ծովը լետ է քաշւել, բայց որոնց նա ծածկում էր մի ժամանակ. Բայց այդ նկատողութիւնը, որ միանդաման ճիշտ է, հաստատում է քիչ փոփսիութեամբ նաև այն քիմիկուների կարծիքը, որոնք նաւթին բռնական ծագումն են վերագրում. ծովափն բուսերը գուացրել են ջրածուխները, մինչդեռ գետնի վերաէ ծառերը և մեծատերե տունկերը արտադրել են քարածուխը: Ինչից է այդ ապրերութիւնը. մինչ աչժմ աչժմ

գեռ չեն մեկնել. Պր. Բերթելոն (Berthelot), *Annales de physique et de chimie* տարեգրի մէջ (1866, հատոր IX, երես 482) մեկնում է՝ ներգործական գեր տալով մետաղներին, որոնք ներս են մտել զետնի մէջ. Նորա թէօրիան, որը հիմնւած է այն ներգործութեան վերաբ, որ ունենում են լայտնի մետաղները քիմիական բաղադրութիւնների մէջ, հաւանութիւն չը գտաւ մասնագէտ երկրաբանների (գէօլոգ) կողմից, և պ. Կրիւ (Crew) մեծ տաքութեամբ նորա գէմ հակածառեց: Խերի այժմեան վիճակում դժւար է գուշակել թէ թէօրիաններից որն է լաղթող լինելու:

Զուտ Փիզիքական հիպոթէզները ընդհանրապէս աւելի քիչ են անորոշ, օրինակ, հեշտ է հաստատել լուդվիգ Նորելի թէօրիան՝ նաւթափին բեզերուարինների ախժմնան բազմութեան մասին, մի թէօրիա, որը հիմնւած է կովկասիան նաւթերի քիմիական բաղադրութեան տարբերութեան վերաբ: Եւ իրօք, եթէ մի ընդհանուր ոտորերկրեալ բեզերուար գոյութիւն ունինար, այն ժամանակ բոլոր հորերից նաւթ կը դուրս գար. մինչդեռ իրողութիւնը հակառակին է ցոյց տալիս. Պէտք է ուրեմն ենթադրել, որ նաւթի ասորերկրեալ ամբարները մեծ մասամբ իրարից անկախ են: Անշուշտ կարող է լինել որ երկուսը իրար հետ հաղորդակցուում են որ և է անհաջող պատճառով, երբեմն գործածած դիմամիտի ուժով, գորանով բացատրում է թէ ինչու մի նոր հոր չըացնում է միւս հորը և կամ ինչու մի սպառւած հոր կարող է լանկարծ նորոգւել: Այս ամենը բոլորովին պարզ է և ինչպէս երևում է՝ քիչ վիճելի է:

Թող ներւի մուզ հիպոթէզների ալգախիսի կուտակումն մի ուսումնասիրութեան վերջուամ, որը սկզբում կարծէք թէ կարող էր առանց նոյցա եօլա գնալ և աճառականութեան պատմութիւնը, առօրեալ շահագործութեան մանրամատները ունին անմիջական հետաքրքրութիւն. և այս աշխատութեան աւաջին զլուխները ապացուց տւին որ մենք անտարեր չենք նոցա նկատմամբ. բայց առանց թէօրիաբէ սլրակտիկան շուտով աւանդական է դառնում. արւեստը, առանց գիտութեան օգնութեան, դառնում է անշարժ, ալսինքն լուսաղիմում է, և առանց բաղմաթիւ փորձերի, առանց քիմիկունների կամ Փիզիկունների սրամիտ փորձերի՝ Բալամանի նաւթը, որ առաջւակ դանդաղութեամբ կը փոխադրէէր և անշորհք կերպով կը զտաէր՝ կը մնար կովկասում անօգուտ, մինչդեռ ամբողջ Ռուսաստանում գեռ գործ կ'ածէին Պինսիլւանիալի կերոսինը:

Մեր կովկասիան ճանապարհորդութիւնից գէս՝ Բաքւի նաւթի շահագործութիւնը և արտահանութիւնը աւելացել են սպասածից վեր. բայց և այնպէս Թուրքեստանի և Սուզանի բոլոր ազգիւրները զեռ ևս մնացել են ձեռք չը տւած. վաղելինի, բենզինի և անիլինացին գուներ զուացնող ալ և ալ նիւթերի ֆաբրիկացիան զեռ ևս շատ բարձի թողի է արւած. եւրոպական ինժեներների թւի պակասութիւնից, որոնք դուրս եկած լինելին օրինակ Փրանսիական մոծ դպրոցներից, նաւթի գործը դեռ չի իրակա-

նացրել բռլոր ցանկալի լառաջդիմութիւնները. Սուրամի տունէլը նոր է բացւած, և, որ զլիսաւորն է, Մակ Կինչէի բիլը, որով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանդները փակում են եւրոպական արդիւնքների համար, դեռ ևս իւր բռլոր պտուղները չի տւել, Որովհետեւ, որպէս հաւանական է, եւրոպական պետութիւնները իրանք էլ հրաժարւեն Միացեալ նահանդների արդիւնքները ընդունել, Բաքվի նաւթի գործածութիւնը կը տասնապատկրի և գեռ աւելի, թէկուզ վետոյ Մակ Կինչէի բիլը վերացնեն, բայց Կովկասնան արդիւնքը՝ իւր լուսատու ուժով գերազանց լինելով, ունենալով աւելի մեծ ուժ պատրազի մէջ բարձրանալու և նոյնքան մաքուր և աման որքան ամերիկականը, մի անգամ որ ձեռք բերած կը լինի առաջին տեղը—այլ ևս իւր այդ տեղը երբէք չի կորցնիլ, Ֆրանսիայի և Ռուսիայի հետ ունեցած բարեկամական զարաքերութիւնները կը նպաստեն երկու երկիրների առևտրական կապերի զարգացմանը. մի խօսքով՝ այս 1891 թւականին բոլոր հանգամանքները խօսում են չօգուտ մօտազատ և վերջնական լաղթանակի ուսուաց կերոսինի: Բիրմանայի անգլիական նաւթի մրցումը—որքան էլ նա առատ լինի ինչպէս այդ պնդում են լոնդոնում, մեզ չի կարող վրդովեցնել. բայց աչժմեանից իսկ ամերիկական մրցումը մեզ չի սարսափեցնում:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽԹԱՑԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Մեր երկրի մի աշնքան խոշոր արդիւնաբերութեան մասին, որպիսին է Բաքրի աշխարհան չակ նաւթի արդիւնաբերութիւնը, թարգմանելով (տեղ տևզ կրծատելով) Revue des deux Mondes հանրածանօթ ֆրանսիական ամսագրից պ. Գալուստ Կիւլպէնկեանի այս չօգւածը որ մեզ ուղարկւած էր հեղինակից, մենք արդէն երկու տեղ առիթ ունեցանք նկատողութիւններ անել չօգւածագրի հակումների մասին՝ չափազանցնել Բաքրի նաւթի նշանակութիւնը ի վես ամերիկականի. Նուն նկատողութիւնը մենք կարող ենք կրկնել նաև չօգւածի վերջին տողերի նկատմամբ: Աշխարհքս անշուշտ չի փոխւիլ եթէ Բաքրի նաւթը կարողանալ ոչ միան մրցել այլ և լաղթանակը տաճել ամերիկականի վերակ, և մասնաւրապէս մենք, աւելի քան ֆրանսիացիները, օգուտ կ'ունենանք Բաքրի բարգաւաճումով, բայց և այնպէս այն չարգանքը, որ մենք տածում ենք դէպի փասերը—ստիպում են մեզ ասել, որ մենք համերաշխ չենք պ. Կիւլպէնկեանի հետ վերաբերեալ ուն եզրակացութիւններին, որ նա անում է Բաքրի նաւթի մօտագայ տապագայի մասին: Դեռ ևս այս բոպէին Հիւսիսակին Ամերիկաի Միացիալ Նահանգները արտադրում են զգալի չափով առելի հում նաւթ քան Բաքրուն: Հաւասար քանակութեամբ հում նաւթից նոքա ստանում են երկու անգամից աւելի կերոսին, քան Բաքրում են ստանում: Նոքա ունեն վերին աստաճանի կատարելագործած նաւթ ողանելու ամբարներ, ունին նաւթացքներ մինչ ովկիանոսի ափերը, որ չատ էժան է նստեցնում կերոսինի փոխադրութիւնը մինչև նաւահանդիսները, մինչդեռ նոչնը կատարում է մեղանում մեծ մասամբ երկաթուղով, որը չափազանց թանկ տարիփով է բանում: Նոքա կազմակերպած ունին նաւթի առուատորը այնպէս, ինչպէս բաքրեցիք դեռ երկար ժամանակ զլուխ ընթել չեն կարող: Վերջապէս նոքա աւելի մօտ են Լոնդոնին, որը բեզուշատոր է հանդիսանում կերոսինի զների, և այն և այլն: Վերջապէս ալժմ դեռ ամերիկական կերոսինը աւելի մաքուր է և լաւ է համարում, և նրան մինչ տասը տոկոս աւելի բարձր զին են տալիս քան

Բաքվի նաւթմբն: Այս բոլորի զիմաց Բաքուն ունի միակն այս առաւելութիւնը, որ նորա հորերը դեռ ևս աղնքան խորը չեն գնացել, ինչպէս Ամերիկայի հորերի հետց արժմեալ դրութեան մէջ ամերիկացիք աւելի ուժեղ են քան բարեւցիք:

Բայց և ազնակս մենք գոլում ենք պ, Կիւլպենկեանին նորա խզճմասաւոր աշխատանքի համար, որը շատ ամփոփ և բազմակողմանի պատկեր է ներկայաց: Նում մեր երկրի նաւթի արդիւնաբերութեան գործի մասին: Բայց որովհետեւ լողածը հիմնած է այն տեղեկութիւնների վերակ, որ հեղինակը հաւաքել է միայն մինչ 1888 թւականը, մեր լնոթերցողներին լնոթացիկս պահելու համար գործի ներկայ գրութեան հետ, աւելորդ չենք համարում զետեղել ալտեղ նաւթի գործին վերաբերեալ հետևեալ նորագոյն տեղեկութիւնները, որ քաղաք են նաւթագործարանատէրերի ժողովների (ընթացք ուժուածականութիւնը) գեկուցումներից, „Կասպի“ լրագրից, „Petroleum Reporter“-ից, „Վետհակ“-Փինանսօվ“ շաբաթաթերթից „Հովու Օբօզր-նիւ“ լրագրից և այլն:

Կերոսինի առաջին գործարանը հիմնւեց Բաքւում 1859 թ.:

1880—1885, թ. հեղամենակ շրջանում Բաքվի նաւթի արդիւնաբերութիւնն էր 324 միլիոն պուդ, իսկ 1886—1890 թւականների հեղամենակ շրջանում նաւթ ստացւեց 880 միլիոն պուդ, ներկայ 1891 թւականի առաջին ութ ամիսներում նաւթ ստացւել է 190 միլիոն պուդ:

Արդքան արդիւնաբերութիւնը շահագործելու համար Բաքւում շինւած են 150 գործարան (զավոդ), որոնց անցեալ 1890 թւականի ամիսնամին արտադրութիւնն էր 80 միլիոն պուդ:

Դոցա համար շինւած լեզերուարները կարող էին տանել 118 միլիոն պուդից աւելի:

Հորեր փորելու համար մսխել է 1888 թ., 850,000 րուբլի, 1889-ին՝ 1,105,000 ր., 1890-ին 2,517,000 ր., իսկ ներկայ 1891 թ. առաջին ութ ամիսներում 2,060,450 ր.: Միայն այդ երեք արորում և 8 ամսում փորած հորերի խորութիւնը միասին առած՝ կազմում է 40,046 սաժէն (առել է թէ 80 վերատ կամ մօտ 8-9 կիլոմետր):

Անցեալ 1890 թ. Բաքւից արտահանւել է 179₁₉ միլիոն պուդ կերոսին:

Գները: 1890 թ.-ին կերոսինի պուդը տևզում արժէր 20 կոպէկ, նաւթի զինը 6—7 կոպէկ. ազմ կերոսինը պուդը արժէ 8—6 կոպէկ, նաւթինը 1¹/₂—2 կոպէկ:

Մի պուդ նաւթից ստանում են Բաքւում լնոթանրապէս 30—33 տոկա կերոսին, իսկ Ամերիկայում 70—75%։ Բաքւում միայն Բաղոզինն է կարողանում ստանալ 60 տոկոս կերոսին:

Թէ որքան վառ է կազմակերպւած կերոսինի մանրագաճառութիւնը թէ Բաքւում և թէ առնասարակ Ռուսաստանում, այդ երեսում է նորանից, որ նայն իսկ Բաքւում, ուր մի պուդ կերոսինը մեծ քանակութեամբ (օպ-

առվլ պուղը 6—7 կոպէկով է ծախտում աչժմ, մանրավաճառութեան մէջ պուղ կերոսինը ծախտում է 30 կոպէկով, իսկ աչտոեղ թիֆլիսում ֆունաը ծախտում է 2 $\frac{1}{2}$ կոպէկ, ամինքն պուղը մի բուրլի, 40 կոպ. ակցիզ վճարելուց չետադ:

Նիւշ-Յօրկում ամերիկական կերոսինը արժէր՝ լուսւարին 1891 թ. 7,₁₄₀ ցենտ մի գալոնը, մարտին—7,₂₂ ցենտ, չունիսին 7,₀₂, լուլիսին 6,₉₇, օգոստոսին 6,₈₇, սեպտեմբերին 6,₃₃, ցենտ: (Մի գալոնը հաւասար է 3,₇₈ լիտր, ցենտը՝ մի դոլարի 100-երրդն է): Այսինքն՝ ամերիկացիք այս տարի շարունակ պակսացրին գները, աղղելով նաև Բաքուի կերոսինի գների վերալ:

Բաքուի կերոսինի միծագոյն մասը տղարկում է Անգլիա, ալպէս օրինակ ներկաչ թւականի լուլիս ամսում Լոնդոն և Անգլիակի միւս նաւահանգիստանները աւղարկել է 74,795 տակառ կամ մօտ 747 հաղար պուղ, մինչդեռ Եւրոպաչի միւս նաւահանգիստները՝ ուղարկել է միան 39,330 հաղար տակառ կամ մօտ 393 հաղար պուղ:

Լոնդոնում Բաքուի կերոսինի գներն էին իւր ժամանակւակ թղթադրամի կուրսի համաձայն՝ լուսւարին 87,₈₇ կոպ. պուղը, մայիսին 73,₂₅ կոպ., չունիսին 70 կոպ., լուլիսին 73,₀₆, օգոստոսին 80,₀₃, սեպտեմբերին 70,₀₅ կոպ.:

Ներկաչ տարւաչ ութ ամիսներում Բաքուն տևեց ընդամենը 190 միլիոն պուղ նաւթի: Դորա հակառակ Ամերիկան, բայց իւր արտահանած կերոսինից, առ մէկն սեպտեմբերի ունէր նաւթամրարներում 318,431,000 պուղ նաւթի:

Նաւթը ստացւում է հասարակ հորերից (օբյեկտային շվայցիանական շատրւան խփող հորերից (ՓՈՒՏԱԵՑ): Հասարակ հորերից ստացւող նաւթը ներկաչ թւականին նստել է՝ բումանինեան նաւթի պուղը 1,₃₁ կոպ., սարունչեան նաւթի պուղը 1,₁₂ բիթի-էլքաթեան նաւթի պուղը 1,₁₂ կոպ.: Իսկ բոլոր 190 միլիոն պուղի համար, որ ստացւել է այս տարի լուսւարից մինչ 1-ն սեպտեմբերի—միջին թւով մի պուղ նում նստեթը նստել է, որպէս հաշւում հն՝ 1,₁₅ կոպէկ: Իսկ ալդ նոյն նաւթը ծախտում էր՝ լուսւարին 5 կոպէկով պուղը, լուլիսին 3 $\frac{1}{2}$ —3 կոպէկով, սեպտեմբերի 2—1 $\frac{1}{2}$, կոպէկով, աչժմ (նոչեմբեր) 2 կոպէկ:

Ինչ է նստում մի պուղ կերոսինը: Խոշոր գործարանատէրերի համար հաշիւը ալս է. 100 պուղ նաւթից ստանում են 30 պուղ կերոսին և 50 պուղ մնացորդ (օստագոք): աչժմ 30 պուղը պահանջում է զտելու և այն ծախսք 60 կոպէկ, վարչութիւնը 60 կոպ., գործարանի (զաւողի) արժէքի պարտքաշէջը 30 կոպէկ, ընդամենը 1 ր. 50 կոպ.—Մանր գործարանատէրերի համար հաշիւը ալս է. 3 $\frac{1}{2}$, պուղ նաւթից ստանում են նոքա 1 պուղ կերոսին և 1 $\frac{1}{2}$, պուղ մնացորդ: Վախոք և պարտաշէջը միասին կազմում հն՝ 8 կոպ. ալդ թւերը պաշտօնական են:

Ազգական է, երբ գործարանատէրը իւր սեպհական նաւթեն է շահագործում. բայց եթէ—և ազդ է մեծամասնութիւնը—նա ուրիշի նաւթեն է առնում կերոսին պատրաստելու համար, այն ժամանակ խոշոր գործարանատէրերին 1 պուղ կերոսինը նատում է 7_{1/2} կոպ., մանր գործարանատէրերին 11_{1/2} կոպէկ պուղը, եթէ զնւած նաւթի գինը ընդունենք այս տարւաչ միջին զինը. բայց եթէ ընդունելու լինենք վերջերքումս ընկած զները (2—1_{1/2} կոպ. պուղ նաւթը), այն ժամանակ պուղ կերոսինը խոշորներին նատում է 6_{6/8}—5 կոպէկ, մանրերին 10_{1/2} մինչ 8_{7/8} կոպէկ:

Բաքւում զնովի նաւթից ստացւած կերոսինը կազմում է ընդհանուր բանակութեան 54 տոկոսը, ուրիմն կէսից փոքր ինչ աւելի. իսկ նոցաթիւը, որոնք զնովի նաւթով են բանում, գործարանատէրերի ընդհանուր թւի 70 տոկոսն է կազմում:

Բանով հորերի թիւն էր ներկայ տարում՝ լունւարին 242, սեպտեմբերի 1-ին 286. Ազգան նոր հորեր փորելու պատճառն այն էր, որ աճցեալ 1890 թւականին կերոսինի զինը շատ բարձր էր՝ 20 կոպ. պուղը, մինչդեռ այժմ կերոսինի զինը դորա կէսին էլ չի հասնում՝ 6_{6/8} կոպ. լուլիսին, 7_{1/2} կոպ. օգոստոսին, 8—8_{1/2} և 9_{1/2} կոպ. սեպտեմբերին, 7_{1/2} կոպ. հոկտեմբերի վերջին։ Հորերի թիւը շատանալով, աւելացաւ և արդիւնաբերութիւնը, առանց շուտով ծախւել կարողանալու. զները ոկտեգին ընկնել, որով և բառաջացաւ նավթավին գործի այն տագնապը, որի վերաց այժմ ընդհանուր ուշաղրտթիւն է դարձրւած։

Բաքւի կերոսինը ուր է արտահանում։ Ուռասատանում ծախւում է Բաքւի կերոսինից միայն փոքրագուն մասը։ 1890 թւին ստացւած ակցիզի գումարն էր 10 միլիոն 578 հազար լրութի (ակցիզի մեծութիւնն է 40 կոպէկ մի պուղ կերոսինից), ուրեմն Ուռասատանը սպառել էր 1890 թ.-ին միայն 26_{1/4}, միլիոն պուղ, մինչդեռ Բաքուն նոյն թ.-ին արդիւնաբերել էր 73_{1/2} միլիոն կերոսին և 5_{1/2} միլիոն քսելու իւղեր։ Բաթումի մաքսատան թւերի համաձայն՝ այդ նաւահանգստից 79 միլիոն պուղից դուրս է զնացել 42 միլիոն 420 հազար պուղ, իսկ մեացեալը պահեւել է շտեմարաններում։

Իսկ Ամերիկան արտահանել էր 1890/91 թւականի ֆինանսական տարում, այն է լունիսից 1890 մինչ լուս 1891 թ.—704 միլիոն 383 հազար գալոն (մի գալոնը մօտ 4 լիտր է)։

Բաքւի կերոսինը լունդոն հասցնելով նատում է ոսկով 30_{1/2}—32, կամ միջին թւով 31 կոպէկ, իսկ թուղթ փողով, նաև առաջ թղթադրամի արժողութեանը՝ երկաթուղարկին գեպարտամենտի հաշիների համաձայն՝ լունիսին 64_{1/2} կոպէկ, լուլիսին 71_{1/2} և 67_{1/2} կոպ., սեպտեմբերին 73 և 69 կոպ.. Այդ հաշիների մէջ մտել են թէ ֆրախտը, թէ կուրտամը, մանր ծախքերը, բրակը և այլն, ի նկատի առնելով խոշոր գործարանատէրերին։

Իսկ զները լոնդոնում էին՝ լունիսին 70 կոպ., լուլիսին 73, օգոստոսին 80, սեպտեմբերին 78 կոպ.։

Ուրիմն ալդ զներով Բաքւի խոշոր գործարանասէրերը և չատկապէս նոքա, որոնք իրանց ուսպհական նաւթահորերն ունին, կը ստանալին օգուտ՝ լունիսին և յուլիսին մօտ $5\frac{1}{2}$ կոռլէկ պուդ կերոսինից, օգոստոսին 10 կոռլէկ, սեպտեմբերին մօտ 9 կոռլէկ: Մինչդեռ մանր գործարանատէրերը, և չատկապէս նոքա, որոնք իրանք նաւթահորեր չունեն, ալլ կերոսին զտելու համար ուրիշից պիտք է նաւթ առնեն—նոյն զներով նոքա կամ վնասւում են, կամ ոչինչ օգուտ չեն ստանում և կամ ստացած օգուտը շատ քիչ է լինում: Մասն գործարանատէրերը ալսպիսով ստիպւած են տեղի տալ խոշորներին:

Իրերի զրաթիւնը լաւ պարզելու համար պէտք է, սակայն, ի նկատի ունենալ ալս կարեոր հանգամանքն ես. ամերիկական կերոսինը շատ տւելի թանկ է նստում քան Բաքւի նաւթը. ազգքանը չափնի է, թէս զեռ չենք կարող բերել իսկական թիւը: Միւս կողմից Նիւկ-Լորկից մինչ Լոնդոն ֆրախտը զրեթէ նոյն է ինչ Բաթումից Լոնդոն: Բայց ֆրախտը Բաքւից Բաթում 19 կոռլէկ է պուդ կերոսինի համար, և մի կոռլէկ էլ Բաթումում Բաթում 20 կոռլէկ, մինչդեռ ամերիկացիք հասցնում են իրանց կեցար—ուրիմն 20 կոռլէկ, մինչդեռ ամերիկացին հասցնում ոչ թէ երկարութիւններով ալլ նաւթանցքներով, որ չափազանց աժան է նստում:

Ուրիմն ալս բարձին Բաթում-Բաթումի երկաթուղարին տարիփի խընդունելով առաջնակարգ խնդիր է Բաքւի մանաւանդ մանր գործարանատէրերի համար:

Աւելցնենք վերջապէս, որ Բաքւի նաւթագործարանատէրերը, օրինակինով ամերիկական նաւթագործարանատէրերի Standart կոչւած միութիւնը, վերջիրքու սինդիկատ են ուղում կազմել:

ԶԻՒՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զւիցերիայի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿԲՏ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆԻ

(Հարունակութիւն և վեցչ¹⁾)

Կանտոնական դատարաններին է պատկանում դատաստանական իշխանութիւնը: Քաղաքացիական թեթև գործերը վճռում է հաշտարար դատաւորը, Քաղաքացիական ատեանը բաժանւած է: Քաղաքացիական գործերի համար կատ վաճառականական ատեան: Խոկ վաճառականական գործերի համար կատ վաճառականական ատեան: Ատեանը վճռաջինջ չէ, թը է ական գործերը քննուում են չառուկ քննիչի միջոցով: Քաղաքացիական ատեանը քրէական գործերի քննող նիստն է կազմում (chambres d'instruction). Յանցանքները (délits) դատուում են ուղղիչ նիստերում (assises correctionnelles). Խոկ ոճիրները (crime) քրէական նիստերում (assises criminelles):

Բողոքները ներկալացնեում են վճռաջինջ ատեանին (cour de cassation):

Կանտոնը ունի մի ընդհանուր պրօկուրոր (procureur général) երկու օգնականներով: Դատարաններում գործերը կատարում են բաց գոնով (հրապարակով), Քրէական յանցանքների համար ատեանը կազմում է ժողովրդից անմիջապէս ընտրած երդւեալներից, ոճիրների համար 12 հոգուց, Խոկ քրէական թեթև յանցանքների համար 6 հոգուց, Երդւեալները կարող չեն լինել դատաստանական ծառակողները, պետական խորհրդի անդամները և ոչ էլ եկեղեցականները:

Քրէական ատեանը ասացի, որ բաց դռնով է նիստ ունենում: Ամեն

1) Տե՛ս «Մոլոք» Ակ 9 և 10:

ոք իրաւոնք ունի ներկայ գտնելու նիստերին. կանցաւորը ունի պաշտօնական մի փաստաբան, եթէ նա չի որոշում առանձին մի խորհուրդատու Ատեանի նախագահը հարցազնում է կանցաւորին և վկաներին. Վկաներին հարց տալ կարող է կանցաւորը կամ իւր խորհրդատուն նախագահի միջոցով. Հարցեր առաջարկել կարաղ հն թէ կանցաւորին և թէ վկաներին երգւեալները և պրօկուրորը. Նախագահ է խօսք խնդրելով նախագահից, չանցաւորը կամ իւր փաստաբանը պաշտպանութեան և ընդդէմ պատասխաններից չետոյ իրաւոնք ունեն կրկին խօսք պահանջնելու. Պալքարից չետոյ նախագահը ձեւակերպում է այն հարցերը, որ պէտք է վճռեն երդեալները. Թէ պրօկուրորը և թէ փաստաբանը կարող են իրանց նկատողութիւնները անել ազդ վերաբերութեամբ, որից մետոյ նախագահը ամփոփում է կանցաւորի թեր և դէմ բերած ապացուցները և առաջարկում երգւեալներին. Երգւեալները՝ ժողովրդի՝ անմիջական ներկայացուցիչները, առանձնանալով վճռում են ձաշների առաւելութիւնով. Եթէ նախագահ չը բաւական չէ մեռում երգւեալների տւած վճռից, ապա գործը առաջարկում է ազ երգւեալների որոնց վճիռը վերջնական է:

Անմիջական ռամկական կազմութիւն ունին, ինչպէս վշեցի, Դւարիս, Ռւերի, Ապահնցել, արտօպքին և ներքին Ռողեր, Ունտերվալդէն (վերին և ստորին), որոնց սահմանադրութիւնները գրեթէ նունն են. այդինքատի առած, ես բաւականանում եմ սղելու Ապահնցէլի կիսականտոններից մէկի՝ ներքին Ռողերի (Rhodes interieurs) սահմանադրութիւնը, որով գաղափար կարող է տրւել և միւսների վերաբ.

Ապահնցելի արդի սահմանադրութիւնը գործադրում է 1873 թւականի ապրիլի 27-ից. Քաղաքական գլխաւոր օրդանը, մալիսնեամասւած ժողովն է (Landsgemeinde):

Կանտոնի բոլոր քաղաքացինները, որոնք ընտրողական և ընտրւելու իրաւոնք ունին (20 տարեկանից), ամեն տարի ապրիլի վերջին շաբաթում, համախմբելով կազմում են ազդ ժողովը, որը արդարեն կարելի է ազգային ժողով կոչել խօսքիս բուն նշանակութեամբ: Այդ ժողովը կանտոնի բարձրագուն իշխանութիւնն է: Այդ ժողովում նաև ժողովուրդը, անմիջական ազատ և անկախ խղճով, արդարութեան և երկրի բարելաւութեան բուռն տենչանքով լքցւած, արտավաճուում է իւր կամքը, նախքան անցնելս նորա իրաւունքների թւելուն, ես աւելորդ չեմ համարում այստեղ թարգմանօրէն գնել աեղական լրագիրներից մէկի թղթակցի մի լոգւածից մի փոքրիկ կտոր:

Ահա թէ ինչ կերպ է նա նկարագրում այդ ժողովը:

— «...Բաց դաշտի վրայ ժողովուրդը համախմբում էր համագումար:

— « Իւրաքանչիւրը հագել է իւր տօնական զգեստը. մուգ վարտիկ,

« սև ֆրակ կամ լողիկ (redingot) և զլխարկ. Մի քանիսը կողքից կա « խել են սրերը. աչք ձեռներին ունեն... Ժամկի 11-ին դաշտը վիստում էր

« արդէն խուռան բաղմութիւնով, Քաղաքացիներից մի խումբ ստիպւած էր
 « տեղ բոնել մօտակաչ հրապարակի վրաչ ասիստակամածի (էստրադ) հան-
 « դէպ, Նախընթաց օրւաչ վաս եղանակը արգելվ էր եղել վասառողջ-
 « ներին և ծերունիներին ներկաչ գանձելու ժողովրդի բազմութիւնը անց-
 « նում էր 8 հազարից, իսկ լաւ եղանակներում, առհասարակ այդ թիւը
 « 10,000-ից անցնում է: Ժողովը բացւելուց մի քանի բոպէներ առաջ,
 « երաժշտական խումբը բոնեց տախտակամածը, Երաժշտապետի նշանով,
 « խումբը ածում է ամակիսեան ժողովի մազթանքը», ամբողջ բազմութիւնը
 « երգակցում է երաժշտական խմբին ներդաշնակ: Լուրջ դէմքով, խոր ա-
 « սուզւած, ներդաշնակ ներդում է իւրաքանչիւրը: Մշակական երդի
 « մի օրգինալն է այդ: Չորս առանց երգելոց էնաոլ, տիրեց մի տեսակ խո-
 « րին լուսթիւն, որի ներքոյ պաշտօնական կորտէծը ընթանում է և աեղ
 « բռնում տախտակամածի վրաչ (estrade):

« Լանդամամանը (Landammann) տեսց զլխարկը, կարծես զիւթա-
 « կան մի ուժով ընկան բոլոր զլխարկները և ահա ութ հազար հոգի բաց
 « զլխով մնում են, համերաշխ զգացմունքով, ի պատիւ այն բարձր պաշ-
 « նեակին (magistrat), որին իրանք նշանակել են են և որը այդ բոպէին
 « ներկաչացնում էր հաշինիքն և օրէնքը, Ամբողջ բազմութիւնը խորին
 « ուշազրութիւնով լսում է ժողովի բացման հակիրճ և կարճ ճառը: Ակա-
 « գէմիական պերճախօսութիւնը բացակաչ է: Ատենարանը վերջացնելով
 « իւր խօսքը, հրաւիրում է ժողովին, խնդրել Աստծու օրհնութիւնը: Կրկին
 « խորին լուսթիւն, ամենքը, արոած զլխարկ ները, կենտրոնացել են մտա-
 « ւոր աղօթքում: Ամբողջ բազմութեան մէջ ոչ մի դէմք չէ նկատում:
 « տեսնում է գանգերի և մազերի կոտ սակալն այդ երկար չի տեսում.
 « մի քանի վարկեանից, ամենքը զլուխ ները բարձրացրած զործի են պատ-
 « րաստում: Հերթական առաջին զործը ֆինանսական վարչութեան տւած
 « հաշւի համար ժողովրդի հաճութիւնը և համատառութիւնն էր: Ամենքն
 « էլ լազանի ձաւն են տալիս ձեռները վեր բարձրացնելով, թէ զրական և
 « թէ բացասական ձախատութեան համար...»¹⁾:

Ահա ընթերցող, զեխերական մի լրագրի խօսքերը, բառացի թարգ-
 « մանելով²⁾:

Այս ժողովին, ինչպէս պետութեան զլխաւոր իշխանութեան պատ-
 « կանում է՝ հաստատել և քննութեան ենթարկել սահմանադրու-
 « թիւնը ժողովը միշտ կարող է մասնաւոր փոփոխութիւններ անել: իսկ
 « երբ կարիք եղաւ ընդհանուր վերաբննութեան, ապա նա նշանակում է

1) Le „Genévois“ լրագրից:

2) Ունակը վալդէնի Մայիսեան ժողովում վարչութիւնը յայտնել է, որ անցեալ
 « տարիները եկամուտը կը ծածկէի յաջորդ տարւայ պետական կ նկատի ունենալք ծախսերը, այնպէս, որ այդ տարին ժողովութեղ ազատ է բոլոր հարկերից:

վերաբննող մի մասնաժողով, որը պրօէկտոր ներկաւացնում է լաջորդ ժողովին: Այդ ժողովն է հաստատում կամ հերքում գաշնակցութեան սահմանադրութեան պրօէկտոր: Այդ ժողովում քաղաքացիները ընտրում են պարլամենտի ազգային խորհրդի համար իրանց ներկաւացուցիչը:

Ամեն մի քաղաքացի իրաւունք ունի պահանջելու սահմանադրութեան վերաբննութիւնը մասմաք կամ ամբողջովին: Նա է մտցնում նոր հարկեր՝ անմիջական հարկերը:

Մալիսեան ժողովն է նշանակում երկրի րարձր պաշտօնեաներին և նրանց ռածիկները որոշում: Ամեն տարի ադր ժողովում ¹⁾ նշանակում է Պետական խորհուրդը 2-դ, կանտոնակուն առեանը, Յ-դ, Կանտոնի քաղաքուղարքը և կանտոնի գունապանը (Hausseier) և առանում է կանտոնի վարչական հաշիւները: Մալիսեան ժողովը տարեկան մի անգամ կանոնաւոր հաւաքւում է ինչպէս վիշեցի ապրիլի վերջին շաբաթում, սական նա կարող է ժողովւել և արտաքոյ կարգի:

Ժողովի ձաների մեծամասնութեամբ կարգրած վճիռը օրէնքի զօրութիւն է ստանում, որին պէտք է լարգեն բոլոր քաղաքացիները: Սական ամեն ոք կարող է քննադատութեան ենթարկել ժողովին մասնակցել և ընտրել և թէ ընտրել կարող են բոլոր քաղաքացիք 20 տարեկանից: Զրկուում են մի մի աէն նրանք, որոնք դատապարտւած քրէական լանցանքով և կամ անւանարկւած են դատարանական վճիռով (վերջնական): Սնան կացածն երը կարող չեն ոչ ընտրւել և ոչ ընտրել: Խրաքանչիւր քաղաքացի ընտրող պարտաւոր է մասնակցել բոլոր ընդհանուր ժողովներին և ժողովներին որոնք տեղի կ'ունենան համաձան սահմանադրութեան համաձան, բացառութիւն կազմում են 65 տարեկանից անցած ծերունիները: Մալիսեան ժողովում նախագահում է Լանդամանը (Landammann). Ներկաւացուցական ձեի միւս իշխանութիւններն են 1-ին բարձր խորհուրդը, որը ընտրւում է Մալիսեան ժողովից և որին լանձնւած է օրինադիճներ կազմել և նշանակել մի քանի պաշտօնեաների: Բարձր խորհուրդի անդամներին ընտրում են համանքները 250 հոգուն մի ներկաւացուցիչ ապալով: Խորհրդին նախագահում է Լանդամանը: Բարձր խորհուրդը առհասարակ հաւաքւում է տարեկան երեք անգամ: Խորհրդին մասնակցում են նոյնպէս պետական խորհրդի անդամները: Այդ խորհրդում բոլորեքեան ներկաւացնում են ամբողջ կանտոնը և ոչ աչս կամ աչս համանքը, ուր ընտրւած են: Նա, որպէս ասացինք օրինագիծներ է կազմում, բաց եթէ անկետաձգելի կարիք կայ կարող է և օրէնքներ տալ, որոնք զործում են չանուն մալիսեան ժողովի, միան թէ այդ ակում է իբր լոկ ակտ մինչ չետագաէ Մալիսեան ժողովը, որը եթէ հաստատեց, ապա նոքա մտնում են կանոնաւոր օրէնք:

Ների շարքը: Նա հրահանգներ է տալիս օրէնքների իրավուրծման համար Դաշն է կուում և օտար լարաբերութիւնների մէջ մտնում: Հոկում է վարչութեան կանոնաւոր ընթացքը: Կազմում է պետական բիւջէն, կունարու է անում ծախսերը, սահնում է պետական խորհրդի տարեկան զեկուցումները: Վարում է պատերազմական, Փինանսական գործերը, Հոկում աղքատների հոգաբարձութեան ինչպէս և աշխատանքներին: Նորա հօկոգութեան ներքու է գտնում մի խօսքով կանոնի սահմանադրական բոլոր իշխանութիւնը:

Բարձր խորհուրդն է ընարում պետութեանց խորհրդի ներկայացուցիչը (le député au Conseil des Etats) մի տարով:

Նա է նշանակում բոլոր պաշտօնեաններին, բացի նորանցից, որոնց նշանակում է մավլուհան ժողովը: Բարձր: Խորհուրդը ունի չը մոռանանք ասել, նաև ներելու իրաւունք (Droit de grâce):

1890 թւականից բացւած է Թիֆլիսում ազնւականների պետական բանկի ճիւղը, Արդ, ներկայ նոյնմքերին Փինանսական մինիստրի կարգադրութեան համեմատ՝ ազնւականների պետական բանկի Թիֆլիսի ճիւղը իրաւունք է ձեռք բերում իւր գործողութիւնները տարածել նաև Նրեանեան նահանգի վերաբ։ Ովքեր պէտք է կարողանան դորանից օգտւել—միմիան տոհմական ազնւականները, բէզեր, աղալարներ, մելքներ, և ոչ հողագործ զասակարգը առհասսարակի թաց նոյն իսկ հողատէր դասակարգը դորանից օգտւել չը պիտի կարողանաք ամբողջապէս, որովհետեւ թէս իրապէս մի աղպափախ հողատէր դասակարգ կաչ կամ ամբանութիւնը մինչ ազժմ հաստատուած չէ ռուսաց կառավարութիւնից։ Երկուսից մէկը՝ կամ ազնւական պետական բանկի բացումը պէտք է փութացնէ Երեանեան նահանգի, որպէս և միւս թրքահազ նահանգների մեծ կալւածատէրների տոհմական ազնւականութեան մէջ հաստատելը, և կամ գինանսական մինիստրի նոր կարգադրութիւնը պիտի մեալ գրիթէ առանց օգուտի Երեանեան նահանգի կալւածատէր դասակարգի համար։

Ենթադրենք անդամ որ այդ խնդիրը լուծեաց լօգուտ նոցա ազնւականութեան, բաց մեր երկրի կալւածատէր դասակարգը մինչ այժմ չի ապացուցել թէ մի մեծ ֆակտոր լինի մեր երկրի լաւաջդիմութեան, դեռ աւելի պակաս քան Վրաստանում, մեր թրքահազ նահանգների կալւածատէրները, այդ խանները, բէզերը, աղալարները որոնք բազմաթիւ են, զուրկ են պատմական ամուր և լառաջադէմ աւանդութիւններից և միզանում ոչինչ չի զլուխ եկել նոցա միջոցով։ Եւ թէս հողատէրներ են նոքա, բաց ոչ հողագործ հողատէրներ, նոքա իրանց հողերից միայն մի տիսակ հարկ ստացողներ են, տառանորդով կամ աղալապէս։ Արդ, ինչ օգուտներ պիտի կարողանաւ տալ ազնւական պետական բանկը այդ դասակարգին—ես իսկապէս չը գիտեմ։ Ոէտք է ենթադրել որ նա կ'օգտւի փող ճարելու հեշտութիւնից աւելի շւայլութիւնների համար, քան թէ որ և է բարենորոգումներ մտցնելու իրանց կալւածներում։ Պարտքերի մէջ ընկնել ու խրւել, և ապա տէրութիւնից ողորմութիւն խնդրել՝ հաւանականորէն այդ կը լինի բոլոր հետանքը։

Ռուսաստանի մի մեծ մասին հասած աղէաց թևագրեց կառավարութեանը արդելել հացահատիկների արտահանումը կալսերութեան սահմաններից։ Առաջ այդ կարգադրութիւնը արւեց միան հաճարի համար, որը Ռուսաստանում դործածւղ ամենասովորական հացն է։ Մի երկու ամիս վետով, անցեալ հոկտեմբերին, արտահանման արգելքը տարածւեց նաև ուրիշ տեսակի հացահատիկների և նոցանից ստացւող ալիսրի վերաւ

բացի ցորենից. մի քանի ժամանակ չետով նաև ցորենի արտահանումը արգելվեց:

Այդ կարգադրութիւնները սական միայն եւրոպական Ռուսաստանին չեն վերաբերում. նոքա մնածալէս վերաբերում են նաև Անդրկովկասին, որտեղից, մեր երկրի համեստ չափսերի համեմատ՝ բաւականի մեծ քանակութեամբ հացահատիկ է արտահանում. Ի բաց առաջ նաւթը՝ մեր երկրը ոչինչ չի արտադրում ահազին քանակութեամբ, ավտինքն ախալիսի քանակութեամբ, որ համաշխարհազին նշանակութիւն ունենալ Մեր երկրի արդիւնաբերութիւններից միայն նաւթն է և նորանից ստացւող կերոսինը որ համաշխարհազին նշանակութիւն ունին. մնացած բոլոր արդիւնաբերութիւնները զիխաւորապէս տեղական նշանակութիւն ունին, նոյն իսկ նոքա, որոնք արտահանում են: Բամբակը, որ ազնքան մեծ հարստութիւն ենք համարում մեր երկրի մանաւանդ Երևանի հանանգի համար, և որը ամենամեծ մասով արտահանում է Ռուսաստան—չճշին բան է համեմատած Ամերիկայում մշակող և Ամերիկակից՝ արտահանուալ բամբակի քանակութեան հետ: Բոլորովին նոյնը կարելի է ասել նոյն իսկ գինու մասին և ազն: Թող ընթերցողը նորից աչքի անցնէ իմ անցեալ քրոնիկում առաջ բերած թւերը, որոնք ցուց են տալիս թէ ինչ ապրանքներ ինչ քանակութեամբ տեղափոխել է Անդրկովկասեան երկաթուղին անցեալ 1890 թւականին, և կը համոզւի ինձ հետ, որ մի երկրի համար մի արդիւնքի արտահանութեան նշանակութիւնը նրանով չի չափւում թէ նա ինչ տեղ է բռնում համաշխարհազին առևտորի, համաշխարհազին չուկաչի մէջ: Եւ որ զիխաւորն է արտահանութեան ազատութեան նշանակութիւնը միայն նրանով չի չափւում, թէ որքան է արտահանուալ, այլ նաև նրանով, թէ այդ թէս վագր արտահանութիւնը ինչպէս է աղջում տեղական գների վերաբ Օրինակ՝ մեր հողագործ կարողանում է իւր բամբակը 4—5—6 բուրգով ծախել նոյն իսկ մեր տեղացի զործարանատէրին, երբ ազատութիւն կայ արտահանելու կովկասից և ծախելու հեռաւոր վաճառանոցներում՝ 8—9—10 բուրլիսկ. բաց երբ այդ աղասութիւնը չը կայ՝ նա տիպւած կը լինի նոյն բամբակի պուղը ծախել մեր երկրացուն 1—2—3 բուրլիսկ կամ աւելի պակասով, եթէ միայն ապրանքի քանակութեան համեմատ գնողներ չը կան: Կիւղացին վերջապէս ստիպւած կը լինի թողնել բամբակի մշակութիւնը մեծ չափսերով, երբ կը տեսնի որ օգուտ չի ստանում:

Նոյն, և բոլորավին նոյն գիտողութիւնները կարելի է անել հացահատիկի մշակութեան և առուաւորի մասին. Մինչև 1884 թւականի վերջերը մեր երկրի զիցուք ցորենի գները ալճքան ստոր էին, որ զիւղացին մեծ շահ չէր կարող ունենալ ցորենից. ինչ օգուտ կարող էր մնալ զիւղացուն, երբ սա ստիպւած էր, երկրի հին գների համաձայն՝ իւր ցորենի պուղը ծախել 20—30 կոպէկով, եւ երեակալեցէք որ Անդրկովկասի մի

խաչոր մասը հինգ միավն հացահատիկ՝ ցարեն, գարփ, եղիպտացորեն է արտադրում:

Պակմանները փոխւեցին, երբ Անդրկովկասուան երկաթուղին բացւեց և միջոց արւեց համեմատապէս էժան դնով տեղական հացահատիկը ոչ միայն մեր երկրում ծախսել, այլ և օտար երկիրներում ծախսել, ուր զները մեր նախակին գներից շատ աւելի բարձր են: 1884 թւականի վերջերքում սկսւեց կովկասիան հացահատիկների արտահանումը Փոթիի և Բաթումի նաւահանգիստների միջով: Գները խոկոչ բարձրացան. աճ, որ առաջ 20—30—40—50 կոտէկով չէր ծախսում, ստացաւ 60—80—90—100 կոտէկի զին նոյն իսկ մեր ներկրում, որովհետեւ նոյն ազգ հացահատիկը կարողանում էին արտասահմանում ծախսել 1 ր., 1 ր. 10, 1 ր. 20, 1 ր. 30 կոտէկով կամ աւելի: Ազգային մի լեզափոխութիւն կատարւեց հացահատիկների գների մէջ, և կատարեց ալդ միանգամից, և ոչ թէ տասնեակ տարիների ընթացքում:

Բնական է, որ այդ լեզափոխութեան սկզբի տարիներում, երբ մեր երկրում անցեալ տարիներից կար հացահատիկ հաւաքւած, նաև հացահատիկների արտահանութիւնը շատ միլիոնների էր հասնում, և բնական է որ երբ անցեալ տարիներից մենացած պաշարը սպառուէր—մեր երկրից հացահատիկ արտահանել կարելի էր միավն այդ գէպքում, երբ բարձրացած գները աղդէին մեր հողագործութեան վերաւ և գիւղացիք, խրախուսած լինելով, սկսէին իրանց հողագործութիւնը աւելի ընդարձակել, որուեղ ալդ միավն կարելի էր:

Իւր ժամանակին, 1886 թւականին, մեր աչքի առաջը կատարւող իրերի ալդ նշանաւոր փոփոխութիւնը ընդհանուր ուշագրաւթիւն գրաւեց, և նորան ուսումնասիրողը պնդում էր, որ, ի մեծ օգուտ մեր հողագործ զասակարգի, մեր երկրի հացահատիկների գները չեն ընկնելու մինչ նախակին գների առածանը, եթէ նոյն խոկ արտահանութիւնը նւազի կամ զադարի անգամ լաջորդ տարիներում. ազգային մեր գիւղացիք այսուհետեւ աւելի մեծ շահ են ունենալու հողագործութիւնից, որի արդիւնքը մեր քաղաքների և այլ բնակիչներին առաջ չնչին օգուտով կամ վնասով էր ծախսում: Երկրորդ, նա անկարելի էր համարում, որ բարձրացած գները չաղլեն մեր երկրի հողագործութեան ծաւալի վերաւ, այնպէս որ, նորաատելով, շատ հողեր որ մինչ 1884 թւականը չեին մշակւում, ալֆմ կամաց կամաց կ'սկսեն մշակւել, այնպէս որ հաւանականորէն, եթէ մինչ ալֆմ, սուոր գների ժամանակ, մեզ համար բաւարար չափով հացահատիկ էր մշակւում, ալսուհետեւ խոմ Անդրկովկասը կ'աշխատի մեզ համար բաւական քանակութիւնից աւելի հացահատիկ արտադրել, ուրինի աշխատել ոչ միավն երկրի բնակիչների կարիքների չափ, այլ զորանից աւելի՝ ալտահանութեան համար:

Ալդ հայեացքների դէմ խօսողներ եղան Գիւղատնահստկան ըն-

կերութեան նիստերում, բաց և մասնաւու լուսո. չը մնաց, զլուաւորապէս սովորած այն ժամանակւաւ „ՏԻՓԼՈՅԵԿԻ ՀԱՍՏՈՒՑ“-ը, որը չողւած չօղւածի էետեից տպեց ազգ բոլորի դէմ. հավկական մասնուշում հակածառող հանդիսացաւ «Մշակ» լրագիրը, և ապ. Գր. Արծրունին տարիներ շարաւանակ և մինչ աֆմ էլ ամենախիստ կերպով աշխատել է հերքել այն հավեացքները. ել ես չեմ խոսում նորա պնդածների վերաց, որոնք որ և է վերլուծութեան շեն լարմարում, անքան նոքա հսկասական են և անքան նոցա մեջ տեղ են բանում անձնական վիրաւորանքները:

Ես չեմ վերադառնալ այդ խնդրին, եթէ միան խնդիրը ծան. րակշխու չը լինէր և նորա հետ ժողովրդական մնծ շահեր չը լինեն կապւած: Տարիներով կուել մի հոսանքի դէմ, որը խոստանում է մեր երկրի հողագործների դրութիւնը բարելաւել, միջոց տալով դիւղացուն իւր հողագործութիւնից աւելի օգտւել, աւելի շահեւել քան այդ տուած կարելի էր—դա վնասակար է, վտանգաւոր է, թէն ամենքը զորա վնասակարութիւնը ալժմ չեն զգում, խնդիրը արագէս ասած ակադէմիական համարելով: Մենք զանգաւում ենք, որ շատ դիւղացիներ թողնում են իրանց ծճնավալը, պանդխտում են և մինչև անզամ գաղթում. խոկ միւս կողմից բողոքում ենք և կուռում այն պայմանների և հանդամանքների դէմ, որոնք մի կատր հաց կարող են տալ նոյն այդ գիւղացուն, այն հայը, որով միաւն գիւղացին կը լօժարի իւր գիւղում մնալ ու գործել: Մենք ուզում ենք արհեստներ տարածել գիւղերում, բայց ազնւագոչնը բոլոր արհեստներից՝ երկրագործութիւնը հէնց գորանով հալածում ենք: Այս, հալածել է նշանակում, երբ մենք չենք ուզում ուրախակից լինել գիւղացուն, որը տեսնում է իւր աշխատութիւնը առաջւանից աւելի լաւ վարձատրւած, և երբ նա տեսնում է որ իւր ջայէլ որդկերանցից մէկը, որ նախակին հանգամանքներում ստիպւած կը լինէր քաղաք գնալ փող աշխատելու համար, այժմ թերես ասելորդ ուժ չէ, քանի որ, բարձրացած գների չնորհիւ, նա օգուա ունի իւր գործը աւելի ընդարձակելու, որտեղ միան այդ հնարաւորութիւնը կայւն զլիսաւորն էլ հէնց այն է, որ ազգ հնարաւորութիւնը կայ մեր երկրում, և անկասկած է որ 1884 թւականի վերջում տւած շարժումը ազդել է արդէն. թէ չէ ինչով պէսաք և մեկնել ապս իրազութիւնը որ ոչ միայն 1885, 1886-ին, ապ և չաջորդ տարիներում հացահատիկների, զլիսաւորապէս գարու և եղիպատացորենի արտահանութիւնը շարւնակւեց, փողթ չէ թէ ոչ այն մեծ չափսերով, ինչպէս 1886 թւականին: Եթէ այն շարժումը և գների իեղափոխութիւնը ազդած չը լինէր՝ կարող էր արդեօք պատահել որ ալժմ Անդրկովկասից արտահանւի տարեկան մի քանի միլիոն պուդ հացահատիկ, զլիսաւորապէս եղիպատացորեն և զարի. և չէ որ հէնց մեր երկրում ծախւող հացահատիկն էլ, այն որ հողագործները ծախւում են մեր քաղաքի՝ բնակիչներին—նոյն լեզափոխութեան չնորհիւ, այն գնով չի ծախւում: ինչ մինչ 1885 թւականն էր, այլ աւելի յանակ, չէ որ

ախար հէնց ալդ հանգամանքից մեծապէս օգտում են հացահատիկ մշակող գիւղացիները:

Ինձ մի քանի բաներ են առարկում. ալսպէս, օրինակ, «Մշակ»-ը պնդում է, թէ մեր երկրից հացահատիկ չը պէտք է արտահանել և որ չը պէտք է ուրախանալ, երբ մեր երկրում հացահատիկների գինը բարձրանում է. իբր ալդ բարձր գներից օգտողները միան ցորենի վաճառականներն ու վաշխառուներն են, և որ իբր դորանից գիւղացին ոչ մի օգտաշունի. Դէն ուրիշն վաճառականների ձեռքից գիւղացուն աղաս պահելու. համար՝ քարոզինք որ գիւղացին ոչինչ չարդիւնաբերէ, բացի այն, ինչ իւր ուտելու համար բաւական է! Այ թէ ինչ բանի համար է առած՝ ՅՈԼԿՈՎԵ նօյտւու—ԵՅ լինը ու հօդում որ վաճականները աւելի են օգտում, քան հարկաւոր է՝ ես միջոցներ կ'առաջարկեմ, որոնցով գիւղացին հնարաւորութիւն կը սասանա քաղաքների և կամ համաշխարհափն շաւկավի գներից աւելի լաւ օգտական է կ'առաջարկեմ հաստատել մեր երկրում ապրանքների պահեստներ. համաձան 1888 թւականի տուած կանոնադրութեան, կամ դեռ ուրիշ միջոցներ, և ոչ թէ կը սկսեմ պահանջել որ հողագործութեան արդիւնքների գները վայր ընկնեն, իբր վաճառականների, կապալառուների, վաշխառուների ջիգրու! Այ կը կռւեմ մերջիններիս դէմ ոչ թէ տուժել տալով գիւղացուն, այլ աւելորդ միջնորդներին աւելորդ դա ձնելով այս կամ այն միջոցով:

Բաց ի հարկէ, ի զուր է կարծել թէ իրօք՝ ալժմ բարձրացած գներից միան վաճառականն է օգտում. Եթէ առաջ մի արդիւնքի պուղը արժէր 35 կոպէկ, շատ կարելի է որ վաճառականը աշխատէր գիւղացուց առնել 20—25 կոպէկսի, որպէս զի քաղաքում ծախելով՝ 10—15 կոպէկ իրան մնար. երբ ալժմ նոյն արդիւնքի պուղը արժէ 80 կոպէկ, շատ հաւանական է որ նոյն վաճառականը, 10—15 և թէկուզ 20 կոպէկ աշխատելու համար՝ աշխատէ գիւղացուց պուղը առնել 60—65—70 կոպէկով. Աւրեմն այն դէսքում գիւղացու ձեռքը կ'ընկնէր 20—25 կոպէկ, այս դէսքում՝ 60—65—70 կոպէկ: Թէ չէ պէտք է ենթադրել որ գիւղացիները կատարիապէս անքան արարածներ են և կամ առող գլխով կաշկանդւած են՝ աչքերը բաց անել չը կարողանաւու շափու:

Մեր հողագործների զրութիւնը առաջ անփողութեան դրութիւն էր Քարտողել թէ լաւ է վերադառնալ այն զրութեանը—կը նշանակի ցանկանալ Տաճկահամաստանի շատ աւեղերի զրութիւնը: Ահա թէ մի արտասահմաննեան հաւ թերթի թղթակից ինչպէս է սկսում իւր նկարագրութիւնը Մերաստիակի նահանգի:

«Գիւղացւոց ստացւածներ մշակութեան արտադրութիւնք, կևնդանիներ ու հողեր ըլլալով՝ քիչ անդամ պատրաստ հնչիւն զրամ կ'ունենալ: Թէն կալի մէջ իւր արտադրութեան մեծ մասը կը սպառի կամ կը փճանալ, սակայն և այնպէս քիչ շատ համբարած ցորենով ալ կա-

րելի է իւր վիճակ բարելաւէր, եթէ տեղակին հանգամանքներն, ճաճապարհի և հաղորդակցութեան միջոցներն արտածման (արտահանութեան) նպաստէին. և այս խանգարւած ու դժւարութեանց մատնւած ըլլալով, ի քաղաք ցորեն խիստ ստորին զնով կը վաճառւէին, և վաշխառու վաճառականաց ձեռքն անցնելով, նոքա կ'ընեն պէտք եղած վաստակը, և երկրագործն կը զրկւի, կամ ոչնչով վարձատրւելով՝ ձեռնունալն կը գտնի, և շաճախ մեծաքանակ հարկերու վճարման առջև անկարող կը մնալ:

Բաց ճիշդ հէնց այդ գրութիւնն էր մեզանում մինչ 1885 թւականը, դէպի ուր մեղ քարոզում են վերալառնալ, և դեռ աչժմ էլ չաս տեղեր, օր. Զանգեզուր և այլ տեղերում այդ գրութիւնն է իշխում:

Առարկում են նաև թէ հացի՝ արտահանումից, ուրիմն և արտահանման ազատաւթիւնից կարող է սովլ պատահել երկրում: Անհիմն երկիւզներ Մենք սովլ ունէինք մեր երկրում 1879 թւականին, երբ հաց չէր արտահանում. և մենք կարող ենք նման դժբաղդութիւնների հանդիպել ապագայում: Անմիտ բան է պահանջել որ հողագործները 15—20—25 տարի ոչինչ չաշխատեն, թէ ինչ է մի տարի կարող են հաւճարը շատ լինել, նախ որ եթէ նոքա ոչինչ չաշխատեն—հողագործութիւնն էլ կը պակսի. և ուրիմն վտանգն էլ աւելի կ'ածի. խոկ երկրորդ, և այդ է զինաւորը, մի երկրում, ուր արդէն երկաթուղիներ են բանում, և հեշտ հաղորդակցութեան միջոցներ կան հացաբեր երկիրների հետ,—հացը երբէք չի կարող շատ թանկանալ: Խուսաստանի բաղմաթիւ նահանգներում աչժմ սովլ կավ,—բայց ոչ մեծ թանկութիւն. գիւղացիք փող չւնին հաց զնելու, ահա սարսափելին, և ոչ թէ հացն չ շատ թանկ: Միլիոնաւոր գիւղացիք աւտանց միջոցի են ցորեն կամ հաճար զնելու թէկուով ոչ թանկ զներով, որ ցանեն և մինչ նոր հունձերը կերակրւեն,—ահա թէ ինչումն է խնդիրը:

Ի՞նչ է հարկաւոր անել արդախսի դէպքում: Աղէտը մեծ է, միջոցներն էլ պէտք է մեծ լինեն, անսովոր լինեն: Երբ մի աղէտ արդքան լախածաւալ է և արդէն պետական ընդհանուր շահերին է զիազում—մատնաւոր բարերարութիւններն էլ չնչին նշանակութիւն կարող են ունենալ և ոչ խոկ հասարակաց շահմարանները կարող են բաւել: Այսուղ պէտք է տէրութիւնը ինքը միջամտի: Հարկաւոր է 100 միլիոն պուդ հացահատիկ հասցնել կարօսեալ նահանգներին. ամենախիելացին հէնց այն կը լինի որ տէրութիւնը զիցուք 100 միլիոն բուրլու փոխառութիւն անի, այդ փողով կուրսաչին դների համաձաւ 100 միլիոն պուդ ցորեն առնի թէ տէրութեան սահմաններում, ուր հունձը լաւ է եղել և կամ արտասահմանի հարեւն երկիրներում, և այդ քանակութիւնը բաժանի կարօտեալ նահանգների մէջ, թէ ցանքսի համար և թէ կերակրւելու համար: Եւ որաեղից իհա ստանակ պարտքը վճարելու համար՝ 100 միլիոն գումարը իւր տոկոսներով? Կարելի էր կարծել թէ այդ պարտքը պէտք է վճարեն միայն այն դժբաղդացած նահանգները, որոնք օգնութիւն են

ստացել, բայց ոչ, դա գուցէ չափազանց ծանր լինէր նոցա համար, Աւելի լաւ է որ ամբողջ կալսերութիւնը մասնակցի այդ պարտքի վճարելուն, այն 100 միլիոն բուբլին չետ կը վճարւի մասամբ վիճակախաղ դերի արդիւնքով, մասամբ ժողովարարութիւններով, իսկ մնացածը պետական նոր, բայց լատուկ այդ պարտքը վճարելու համար նշանակւած, հարկերով, որ կարող են տեղել մի քանի շարրի. Աքսովասով աղէտի դէմն առնելուն աջակցած կը լինի ամբողջ պետութիւնը, վտանգւած նահանգները աղատւած կը լինեն, և հարկ էլ չը լինի նոց իսկ հայահատիկների առ առուրը խանգարել, և զորանով միլիոնաւոր ուրիշ հողակործների շահերին զիազէլ, նոցա տնաեսական հաշիւները խառնելի. Մի աճնայիսի երկրի համար, որպիսին Խուսաստանն է, ուր զիւղացիները հաց են մշակում արտահանութեան համար, հայահատիկների գները միանդամից իջեցնելը — մի ամենուն ալրահեղ միջոց է: Կրեականցէք զրութիւնը այն միւս մի քանի տասնեակ միլիոն զիւղացիների, որոնք իրանց չուսերը կասկել էին հայի առեարի մի որոշ զրութեան հետ, և լանկարծ, մի անգամից այդ բոլոր զործին մի այլ ուղղութիւն է տրւում և զները իջնում: Որը աւելի լաւ է՝ զժբախտացած նահանգներից զուրս ուրիշ մի քանի տասնեակ նահանգներ իրարանցումի մէջ զցել և նոցա արդար շահերին վլասնել, թէ աճնայիս անել, որ զիւղացիների այդ ալրահնքը սովորական գնով առնեն, միան թէ զորանից առաջացած մի երկու տասնեակ միլիոն բուբլու պարսպը վճարելուն մասնակցել տալ ընդհանրութիւնը:

Նոյն կերպ կարելի է վարել, եթէ մեր երկրի հունձերին նման գժբաղդութիւն պատահի. ալսպիսի գէպքում, եթէ աղէտը շատ ընդհանուր է, պետութիւնը ինքը պէտք է հաց զնել տալ (որ շատ հեշտ է), բաժանէ տեղացիների մէջ և մսխած զրամը չետ ստանաչ ոչ միան օգնութիւն ստացած ժողովրդից, այլ ընդհանրութիւնից:

Հայկական թատրոնը շարունակում է ընդհանրապէս բաւարար մուտք տալ. բայց արդէն պատահում է նաև կիսով չափ գասարկ առողիսորիաւ Աւրիել-Ակոստան, որ երկուշաթի օրն էր տրւած՝ անբաւարար մուտք տւեց. Քանդակ Օջախը, որ տրւեց մի աճնայիսի օր, երբ Թիֆլիսի այլ և այլ տեղերում հետաքրքրաշարժ ներկալացումներ կային (ոսաց խմբի տ. Կազինալի բենիֆիուը, Աւատոմատ օվկերեատի ներկալացումը, նոր ցիրկի բացումը), նմանապէս անբաւարար մուտք տւեց: Մնացածները՝ Օրւաչ չարկի Պոտէ-խինի, Հրէուհի (հեղինակի?), Արշակ II Գալֆակեանի, Պարոն զը Պուրստիկակ Մոլիկիրի—բաւարար կամ լիքը մուտք տւին:

Նորանոր ներկալացումները և պիեսները լրացնում են մեր զիտութիւնները խմբի գերակատարների վերակ. ալիկին Ալրանով արդէն վիշւած է. բայց նա, քանի զնում, աճնքան աւելի ամրացնում է այս հա-

լեացքը, որ չանձին նորա մենք ունենք ոչ միայն մի ընդհանրապէս չնորհալի դերասանուհի, ալև և լուրջ ու տաղանդաւոր գերասանուհի. և եթէ նորա Թիֆլիս գալը՝ Թիֆլիսում մնալ դառնալ, և աշխ նոր քաղաքը, նոր հասարակութիւնը և Պուլի կեանքից ջոկ աշխարհը նորա համար նոր ուսումնասիրութեան և ինքնարձնադատութեան ճանապարհ բաց անէ—հաւանօրէն նա ապագալում նաև փալուն անուն կը ստեղծի հայ թատրոնի պատմութեան մէջ,

Տիկին Սիրանուշից դուրս, խմբի մէջ սկսում է իւր վերակ աւելի ու աւելի ուշք դարձնել պ. Աբէլեանը, որը աճնքան սխալ քալով սկսեց իւր զերիւտը կամելիազարդի մէջ: Աւելի ևս մեծ հաճուքով ես ուզում իմ արձանագրել ալստեղ նորա չաջողութիւնը: Անցեալ քրոնիկում արդէն առիթ ունեցաէ նկատել նորա խաղը Նեւեմինի «Երկրորդ երիտասարդութեան» մէջ, Եգոր Պարուսովի բեղոներական գերում: ալժմ դորա վերաց կ'աւելացնեմ նորա խաղը Օրւաէ չարիքի մէջ՝ Խլապոնին հօր զերում, Հրէունու մէջ՝ հրէալ ոչկերիչ Եղիազարի դժւարին զերում, Արշակ II ի նման անշնորք պիտիսի մէջ հաջոց նախարար Դրաստամատի գերում: Ազդ (բաց միալն ալդ) գերերում պ. Աբէլեանի խաղը չաջող էր, խկ երթմնի նա կարողանում էր հասարակութեան ուշաղութիւը իւր հետ տանել: Ազդ արդէն լաւ նշաններ են մի երիտասարդ զերասանի համար:

Զարմանալի կերպով փոխել է օր. Վարդուհին: Ազդ փոփոխութիւնը կատարւում է մեր աշխի առջե, ազ տարիներ գրեթէ միշտ զեր փչաց: Նողից՝ ներկալ խմբում նա զառել է իւր զերերը լաջողութեամբ և պատւով տանող զերասանուհի. նա աննման էր Քանդած օջախում՝ Օսէփի հօրաքուր պատւա Խախօսի զերում: Հետաքրքրական էր (թէն ոչ ճգրիտ տիպիքական) պառաւ Խլապոնինալի զերում Օրւան չարիքի մէջ. մանաւանդ պառաւների զերերում սրբանով որ ալդ զերերը բեղոնիօրական հն,— չաջողութիւն է դոնում: Եթէ ներկալ խումբը ում և է իւր անդամներից իսկական ծառապութիւն է մատուցել—ալդ՝ օր. Վարդուհուն է:

Պր. Թուրեան, լուրջ կոմիկ է, և, ինչպէս տեղեկացնում է պ. Վրուրի նոր լուս տեսած լրոշիւրը, երեսուն տարի է որ ծառապում է հայկական քեմին, մեծ մասսամբ Տաճկասանում: Պր. Թուրեան վասուն տարեկանը անցած զերասան է. նորա հումորը մասսամբ կորցրած է թարմութիւնը. տարիքի ծանրութիւնը զգացնել է տալիս ձանի և փշողութեան վերաց, բայց ծիծաղը սրտանց է, կոմիզը դուրեկան ու բնական: Ա. Փոսսալ պէտք է, որ լուրջ կոմիկ լինելով՝ լուրջ չկոլա անցած չէ, և նորա խաղը չի հիմնած լուրջ ուսումնասիրութեան վերակ. շատ հեշտութեամբ հակւում է դէպի զաւեշտականը ալնտեղ, ուր միայն լուրջ կոմիզը պէտք է երևան գաչ:

Այս անգամին թող ամսանը բաւական համարու: Անշուշ զեռառիմներ կ'ունենամ խմբի՝ միւս զերակատարների մասին խօսելու և փշաւածների մասին նոր տողեր աւելցնելու:

Յետ գրութեան, Ամսիս 28 ին տրւեց նորւեգացի Բեօրնսէնի «Սնանկութիւն» գրաման, որը և խոր ապաւորութիւն թողեց հանգիսականների վերաբ. Մէջ ու մէջ տրւած ազգալիսի պիեսներ հայկական բեմի նշանակութիւնը միայն բարձրացնել կարող են, մանաւանդ ավելքան բարեխիղճ գերակատարութեամբ, ինչպիսին խումբը ցուց տւեց ազգ երեկոյ։ Դա իսկապէս խմբական խաղ էր, որից աւելի լաջողը մենք չէինք ունեցած այս սեղունում։

ԼՈՒԽԻՆԻ

ՕՐԵ ՅՈՐ

(ԵՍԵՄ ԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԱԾՐԱՆԻՑ)

Հոկտեմբերի 10.

Դրեթէ ամենալն օր կարելի է լատեղական լրագիրներում հանդիպել ալապիսի տողերի՝

—5 Ֆրանսիացիներ ժամանեցին ալսօր մեզ մօտ և մտադիր են ձանթանալ մեր կովկասի հետ:

—2 Բէլգիացի լինքներներ՝ ուղարկւած բէլգիացի դրամատէրերի կողմից՝ հասան թիֆլիս և մտադիր են ուսումնասիրել այս ինչ գործը:

—3 Անգղիացի՝ ալս ինչի ներկալացուցիչներ՝ երէկ հասան տեղս և մտադիր են երկու ամիս մնալ կովկասում հետազոտութիւններ անելու համար:

Եւ սացա հետևանքը լինում է այն որ Ռուսիլու, Նօրէլ, Գալսկէ և այլն քաղաքներ հաստատում են մեզանում... Զը կաէ վատութիւն առանց լաւութեան, չը կաէ տիրութիւն՝ առանց ուրախութեան և միսիթարութեան։ Զէ որ մեր դրամատէրները ու մեր վաճառականները պէտք է վերջապէս հասկանան որ եթէ ուզում են մի կտոր սեփական հաց ունենալ, պէտք է հնադարեան թռուամորթութիւնը դէն գցեն և արդիւնագործութիւններ ստեղծեն...

Հոկտեմբերի 15.

Անխոնջ պրաֆէսոր Մ. Զերազ մասնակից է եղել Լոնդոնում տեղի ունեցած Congrès International du Folks—Lore (Միջազգային ժողով ազգակին բանաստեղծութեան) 1 հոկտեմբ. Ն. տ. Նիսաին և պատուախտնելով զանազան ատենախոսների, որոնք, մի հեքեաթի առիթով, ուր հերոսը խօսում է մի դրան հետ, հարցնում էին ժողովից՝ արդիօք Արևելքն է փոխ առել Արևմտաքից իւր հեքեաթները, թէ Արևմտաքը Արևելքից—Մ. Զերազ պատմեց ունկնդիրներին մի հայ հեքեաթ, որի հե-

բարը ոչ միան խօսում է մի դրան հետ, ալլ՝ այն Գտառը անգամ բարձր Գուար նրան լսում, հասկանում և ջախջախւելով հնապանցում է...

Հոկտեմբերի 25.

1812 թ. աղետալի տպառելավզմը իւր սոսկալի հետեանքներով լամսին է ամենքին: Ութսուն տարի չեասց, մեր օրերում, Փրանսիայիների նմաճ-օրինակ մի արշաւանք, թէս խաղաղ, կուլտուրական արշաւանք, տեղի է տևենում զէպի Մոսկվա՝ թողնելով իւր ետեից մի մեծ աղէտ—սովոր Խռա-սաստանի 22 ներքին նահանգներում:

Հոկտեմբերի 26.

Արաց հասարակութիւնը չէ լաճախում իւր թատրոնի ներկայացումները. Դեռ երկուշաբթի օրերը հասկանալի է. Ազդ օրը ներկայացում... Ներողակթիւն, նիստ է վիճում քաղաքավին զումարում և վրաց հասարակութիւնը, իբրև քաղաքավին շահներին նախանձախնդիր, գերազատում է լուրջ զործերով զբաղւել, քան թէ ներկալացումներով դւարձանալ, Բայց թնչ կատեք մնացեալ լի օրերի համար.—Նա ազդ օրերը նախապատրաստութիւններ է տեսնում զալց երկուշաբթի օրերի համար:

Համեմունք 28.

Պր. Նվիկուածէ ծախելով իւր լրագիրը՝ չէ հեռացել իսպառ լրագրութեան ասպարիզից, ալ շարունակում է իւր նախկին լրագրի մէջ „Հայոց պատմութիւնից“ բանասիրականները:

Ես դորա մէջ նկատում եմ օպոզիցիա առւած կուսակցութեան առաւ-
ելութիւնները դումակում: Դումայի կուսակցական գործերի աջղողութեան
համար այլ ևս հարկ չկատ ժողովներ կազմել, փողեր ծախսել և ծածուկ
միջոցների գիմել: Օրը ցերեկով գրւում է ծրագիրը, բաժանում են գե-
րերը, անելվածները, անւում են լանդիմանութիւններ գործած սխալների
համար և այլն պ. Նիկոլաձեի բերանով: Առաջարկում ենք արտունեան
Հայոց տեղ գրել՝ Հայոց տեղ գրել՝ Հայոց տեղ գրել՝ Հայոց տեղ գրել՝

Հոկտեմբերի 30.

Ասացէք, խնդրեմ, հարցնում էի ես իմ ռուս բարեկամ Ալուսելին,
ինչ է պատճառը, որ ռուս հասարակութիւնը չէ լաճախում ռուս ներկա-
յացումներին:

—Ներեցէք, ասաց, և безъ того холодъ и голодъ со снѣгомъ—да и жизнъ-то наша трагедія на комедіи—а тутъ еще ходить на драму, для сраму что-ли? Помилуйте.

Եւ ես ողորմեցի:

Հոկտեմբերի 31.

Թիֆլիսում ալժմ չի կարելի մի քայլափոխ անել առանց տեսնելու մի պըսելենեցъ-ի¹⁾ դէպի քեզ կառկառած ձեռքը, կամ լսելու նորա ովորմութիւն խնդրող աղիողորմ ձախը: Եթէ այս երեսիթի առաջը չառ-նւի և նա ըստ պատշաճին կարգի չը դնի—մեր Կովկասին էլ կացցելէ սովլ մօտիկ ապագալում, թէկուզ արգելէք, թէկուզապատ թողնէք հացա-հատիկների արտահանութիւնը:

Նոյեմբերի 2.

Վրացի հասարակութեան և լրագրութեան մէջ այս օրերս տիրում է աննկարապրելի ցնծութիւն: Զը կարծէք թէ պատճառն այն է, որ մի վրացի որ և է նշանաւոր գիւտ է արել, կամ թէ վրաց հասարակութիւնը մի մեծ քաղէ է արել ժողովրդի կրթութեան գործում, կամ թէ վրացի ները չանկարծ խնացող և աշխատասէր են դառել:—Ոչ, այլ պատճառը մի վրացի վաճառականի մահն է, որը կտակ է թողել բարեկործական նպա-տակով 900 ռ.:

Այս առաջին անգամն է, բացականչում են վրացիները, որ անդրպատ-մական ժամանակից ի վեր, մի վրացի այդ օրինակ մի բարի գործ է կատարում:

Հանգուցեալի անունը չաւերժացնելու համար ես կարծանազրեմ ակտոնեղ նորա անունը՝

Սուլոմոն Իւանիշ Միքէլաձէ

Ախալքալաքի գաւառի Կիլդիգի գիւղում ծնւած ու մեռած:

Աստած տաչ, որ նորա օրինակին հետեղներ շտա լինեն բոլոր ազգերի և զլխաւորապէս վրացիների մէջ:

Նոյեմբերի 4.

Եգուց պիտի որոշւի իմ ապագան, էգուցէ լոյս տեսնելու իմ Օրէցօրը, Եւ որովհետեւ ես վճռել եմ մի քանի օրով հեռանալ Թիֆլիսից, ես վերց հում եմ հետո պ. Գր. Արծրունու աշխարհանոչակ դառած Եվէլինան:

1) Գաղղթական:

Ես կաշխատեմ, խօսելով մեր լրագիրների ընդունած ձեռվ՝ «մի աչլ անդամ վերագառնալ» աչդ գրքին:

Նույնմբերի 7.

Ասում են որ մեր քաղաքացին Ուպրաւան մտադրութիւն ունի քա-
ղաքի հաշով շինել ձիաքարչ երկաթուղիներ և տէլքոնի ցանց:

Զգոշ եղէք, պարոններ, որ ձեր տէլքֆոնի հետ ևս ալսպիաի կուրիօզ-
ներ չը պատահն: Աքօնէնտներից մէկը կը ցանկանալ դիցուք իմանալ
թատրոնի կասսալից թէ՝ տոմսակ կամ Տ. Սիրանովի բէնէֆիսին կամ օպէ-
րավին որ և իցէ ներկապացման, և լանկարծ նորան կը կապեն քաղաքացին
դումաչի հետ, որով խեղճ աբոնէնտը, ստիպւած կը լինի լսել թէկուզ ձակ-
նաւոր Շահ-Աղիպին ալս խօսքերը արտասանելիս՝ quousque tandem
Ismail of abuteris patientiam nostram!

Նոյնմբերի 10.

Կան ճշմարտութիւններ, որոնք կարօտ չեն ապացուցների—դրանց
անւանում են «ակսիօմա»:

Թէ հակերը օտար լեզուները սովորում են գեղեցիկ և ճիշտ արտա-
սանութեամբ—աղդ ակսիօմաներից մէկն է, և երեկուալ Սաֆրազեան ամու-
սինների տուած թուրքերէն ներկապացումը մի նոր և փառաւոր ապացուց
էր վերուիշեալ մտքին:

Պէտք է խօստովանել որ Ս. Սաֆրազեան բեմի վերադ իւր ամբող-
ջութեամբ մի կատարեալ պարսիկ էր, աւելի պարսիկ, քան մի որ և է
պարսիկ: Երեխ աղդ էր պատճառը որ ներկապացմանը մի ջուխտ մի կենդ
պարսիկ կազին միան:

Նոյնմբերի 11.

Ակսօր կարգացի «Մշակ»-ի մէջ մի ոչ լիովին գիտնակա ան
«Ուսուցչի» գրածը «Մուրճ»-ի առիթով:

Սա էլ, գիտէք, մի ձեւ է գրելու «Մուրճ»-ի լողածները գեռ
լիովին գիտնական չեն—Հելմոլց ու Ֆիրխտոֆը աւելի լաւ կը դրէին.
սուաջնորդողները գեռ ամեն քան չեն պարզում—ջոն Ստիւլարտ Սիլլ
աւելի լաւ կը գրէր, բայց ափսոս մեռել է. մի տասնեակ սուանաւորների
մէջ Բայրոնը, Հէնէն, Լեմոնտով միացն մի քանիսը կը հաւանէին.
բայց ափսոս որ նոքա էլ մեռել են և աչդ վկացութիւնը չեն կարող իրանք
տալ: Հասարակաց խնդիրներ բնաւին չկան, որովհետեւ մի աչն մի
քանի հասարակական խնդիրների մասին է խօսում քրոնիկը. և ոչ բոլոր
ալն խնդիրների մասին, որոնք կան երկրագնդիս բոլոր ծակ ու ծակերում:

Քաղականը ոչինչ չի տալիս, և ես գերադասում եմ կարդալ Զոն Լեմուա-
նին ու Չարլս Դիլկին»:

Նոէմբերի 12.

Պարիզից լետոյ ամենառարախ քաղաքն է աշխարհիս վրայ Թիֆլիսը—
երեխ ալլ է պատճառը որ առաջին ոռուս օպերետկան գրւել է չը կար-
ծէք Պետերբուրգում, կամ աչ ուր, ալլ Թիֆլիսում։ Փաստաբան Օպոչո-
նինի Ավտոմագ օպերաը ներկայացւեց երեք առաջին անգամ մեղանում,
այսուեզ, իսկ Մոսկվայում նորան տալիս են շաբաթը երեք անգամ։

Նոէմբերի 13.

Ժամեք կենցաղսպի հասեալ ի նէտ մահւան կշռոն ի նըժար,
Կոչեն ըզքեղ, և թագուհիկ, «Եկ բոլորել ըզմեր պար,
«Հանգչել ընդ միր սուրբ հովանեաւ քեզ ի վաղուց աստ պատրաստ,
«Զընաշխարհիկ քան զապարանս արքունական փառաղարդ»։
Ես բանաստեղծ եմ հոգով բալց՝ բարերազդարար ոչ զրչով, և ձեր
կարգացած չորս ասզերը ինձ չեն պատկանում, ալլ առած հն մի՛ բանա-
ստեղծութիւնից¹⁾ երգեալ Յիսուսիքանոս 1891-ի 25 յուլիսի ի Գէորգէ
Սամանձեան, ի սպալի մահ ազնւազարմ պերճապատիւ Ն. Ն. ամիրացի դստեր-
օրիուղին Ն. Ն.։

Նոէմբերի 14.

Այս ամսւակ հարց թարգումի կուրեօններից մի քանիսը։
—«Մի կնոշ սանձահարումի» ժամանակ երկու դերասաններ՝ մէկը
թզուկ, միւսը հսկակ, բեմի վերակ իրար զերերը և հագուստները փոխելիս,
առում են իրար։

—Մեզ ոչ ոք չի ճանաչիլ. մենք իրար շատ նման ենք։
—«Արշակ Բ.»-ի ժամանակ երբ նա Անգուշ բերդի բանտից դուրս էր
եկել լուս աշխարհ և զւարճանում էր տեսնելով բնութեան շքեղութիւնը—
արհեստական ստիւակը (որ հարկ էր համարած լսել տալ հասարակու-
թեանը) զահլա տարաւ իւր անվերջ ճլւոցով։

—«Օրւակ չարիքի» մէջ թիւլիկ միւլիկ առւեց անպիսի մի օրիուղին
համար, որ շատ հեռու էր իւր մի ազդպիսի մէկը նկատւելու։

1) Հանգիս ամսութեայ Ն. 11. 1891.

Եռկմբերի 28.

խեղճ՝ Փղշտացի... Խքրես աղջպիսի մէկը որ «քիչ լետանիւաց է և սա-կաւապահանջ», Նա չը կարողացաւ «Մուրճ»-ի բոլոր համարները լցնել տալ իւր սիրած կլասիկական նազ մատենագիրների, Նախագրիստոնէական և նախաջրհեղեղեան պկրիօդների մասին անվերջ զրոյներով... և հեռացաւ «Մուրճ»-ից:

Սակախ հեռանալով մի խմբագրից, նա չը կարողացաւ առ ևս միւս խմբագրիների հետ էլ կարել իւր զարաքերութիւնները¹⁾ և կարեց՝ անցած գնացած զարերին արձագանք եղող «Աարձագանք»-ին:

«Խւր սիրած Նիւթով յափշտակւելով՝ մի անգամ (խեղճ միայն անգամ) իբրև մաքսանենդ ապրանք գաղտնագողի խօսեց Խորենացու մասին և այնքան ոգեսրեց (ով չէ հաւատում) որ Կամենում էր մինչև իսկ Խորառըը առաջ բերել²⁾. բայց Կրկին զգուշացաւ» և չարմար ու մօղալին համարեց ինքը զինքը նւիրել բախչում ըլլեռնամատում...!»

¹⁾ «Людмила» № 46.

2) «Արձագանք» № 46.

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ԱՐՄԵՆԻԱ» հունգարական պատկերազարդ ամսաթերթի խմբագրութիւնից, Ունգարիակի Կերլաչ հայաքաղաքից, ստացանք մի բաժանորդագրական հրաւեր. թերթի խմբագիրն է պ. Խաչիկ Աստւածառուրեան (իսկ ունգարերէն՝ Kristof Szongett)։ Հասցէն՝

Szamosujvartt (Audriche-Hongrie, Transilvania).

ԹԻՖԼԻՍԻ Պ. ՆԱՀԱՆԳԱՊԵՒԻ աեղ՝ փոխհանգապիտ պ. Ա. Ալբիմովից ստացանք հետևեալ գրութիւնը.

«Ներքին գործերի մինիստրի հրահանգով առ մէկն սեպտեմբերի ներկայ թւականի, 6395 համարով, ոռուսաց կալսերութեան մի քանի ներքին նահանգների սովհեալ գիւղացիների օգտին հաւաքւող նւիրատութիւնների կազմակերպութեան մասին, կարգադրւած է հետևեալը. նւիրատութիւնները կարօտողների օգտին կատարւում են նահանգական վարչութեան թուլատութեամբ և նորա հակողութեամբ՝ այդ նւիրատութիւնների իրանց տեղը հասցնելու վերաբերեալ։

Մինչդեռ տեղական թերթերից մէկի խմբագրութիւնը վենդհանուր գիտութիւն լայտարարեց, առանց նախօրէն թուլատութիւն խնդրելու, որ նա չօգուտ կարօտեալների դրամական նւիրատութիւններ կ'ընդունէ և կը հասցնէ նշանակութեան տեղը։

Ապագայում ծաղելիք թիւրիմացութիւնների դէմն առնելու համար, հարկ եմ համարում նորից հաստատել, որ ստատուեկրետար Գուրենովի վերոնիշեալ պահանջները ճիշդ կատարւեն։ ՊԲ. ԵՐԻԱՆԴ ՂԱԶԱՐԵԱՆԻՆ. Ստացանք Ձեր նամակից, որը տպել անհարմար գտանք։ Սկսւող թարգմանութիւնների մասին նախօրոք լայտարարելը մինք ոչ միայն դատապարտելի չենք համարում, այլ և այդ նոր սկսւած սովորութիւնը միայն իրախուսել կարող ենք։ Դորանով ոչ ոքին չի արգելուում նոյն գրւածքը թարգմանել, բայց շատ դէպքերում աղասոում է աւելորդ թարգմանութիւններից։

ԿԱԹՈՎԻԴԻՌՈՍՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ. „Հովոե Օօօզրնիւ թերթի տեղեւ-
կութիւնների համաձայն, Պարտկահակերը կաթողիկոսական
ընտրութիւնների համար ընտրել են իրանց պատգամառոր պ.
Մահտևոր Սիմէռն Թումանեանին, իբր կանդիդատ՝ պ. Ալեքս.
Մելիք-Աղարեանցին:

ՆԵՐԿԱՅԱ համարում տպւող լոգւածը ֆրանոիական երիտասարդութեան
մասին, „Ռյուսկայ Մայել“ ամսագրից, մեղ ուղարկել է պ.
Մկրտչ Ղազարեան:

«ՄՈՒԹՃ»-Ի 1892 թ. նիւթերի և աշխատակիցների ցանկը, ըստ բաժին-
ների, կը հրատարակեմ դալ 12-րդ համարում:

ՎՐԻՓԱԿԱՆՆԵՐ «Մուրճ» № 10-ում Գոգոլի Տարաս Բուլբարի թարգմանու-
թեան մասին Յ. ի գրախօսութեան մէջ մի քանի սիմալներ են
սպազմել. երես 1226 առաջին սիմեակ, տող 24 տպւած է՝ «հետ
նորա հետ», պէտք է լինի՝ նորա հետ, նոյն երես, տող 26
տպւած է՝ նա վիրաւոր էր կրում, պէտք է լինի՝ նա վիրա-
ւորանք էր կրում. երես 1227 առաջին սիմեակ առաջին
տող տպւած է՝ «Աստաղի», ուղիղն է Աստաղ, նոյնտեղ տող
5, տպւած է առլու, ուղիղն է՝ «օրինակ» («օրինակ, բացա-
կալում է» և այլն). նոյն երես երկրորդ սիմեակ տպւած է
ընկու, ուղիղն է ընկու:

Պր. Լ. Գ. ի լոգւածում «Փողովրդ. կրթութեան գործը
Ֆրանոիական», երեք տեղ տպեր բաց են թողւած. երես
1182—83 պէտք է կարդալ՝ և ընկերութիւնը քալքալւեց հէնց
այն պատճառով որ գործի դլուխ էին անցել ժողովրդի մէջ
կեանքի աչնքան հեռու գտնւող մարդիկ:

Երես 1186, տող 11—12 պէտք է կարդալ՝ «...թէ ալժմ
արդէն պատճառուած են ապագայ դաշնակցութեան
խմբերը, ուրոնք աշխատում են ժողովրդի մէջ
կրթութիւն տարածել, օրինակ Ելբեֆի «Արդիւնա-
բերող ընկերութիւնը»...

Երես 1196, տող 8-րեն ներքենց պէտք է կարդալ՝ «Առա-
ջին խմկ տարում բաղմաթիւ ակումբներ շինեցան (երկու
ակումբ Մարտէ չլում—մէկը 16.000, միւսը 2500
անդամներով. նոյնպէս 8 աննի, Գերբուիլերի և
աչլ տեղերի ակումբները)»:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԾԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

թ. կ.

1.	«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով	12 —
	նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար	7 —
2.	«ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թւականի, երկու կազմած հատորներով	12 —
	նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար	7 —
3.	ՊՈ-ՇԵԵԱՆՅ, ՊԵՐՃ. — ԶԵՅԵԲ» (վէպ)	1 —
4.	ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Գ.ԱԼԱՐՅԻ)՝ «ՄԱՆՈՒՂԻՆԵՐԻ մարտողութեան գործարանների մի քանի հիւանդութիւնները»	— 05
5.	ԱՏՐՊԵՏԵԱՆ, ՍԱՐԴԻՒ. — «ԽԵՒ-ԿԱՐԱՎԵՏ», վէպ հայ-կա-թոլիկների կեանքից	1 —
6.	Լ.Յ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	— 50
7.	ՄԵԼԻՔ-ՇՈՒԶՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՋԱՄՈՆ. — «ՀԱՅ ԳԻՒՎԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր)	— 40
8.	ՍԱՐԳՍԵԱՆՅ, Լ.ԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐՎԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»	— 60
9.	ՊՈ-ՇԵԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂ.ԴԵ», վէպ	1 20
10.	ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽԵԹ-ՍԱԲԱ», (հայ բոշան. կեանքից)	— 15
11.	ՄԱՐԻՍԵԱՆ, ՄԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵՐ» (մեծ վէպ), առ. մասը	— 50
12.	ԴԱՐԱԳԵԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒԻՆ. — «ԽԵՒ-Լ.ԵՈՒՑԻՔԻ», (առհ-մագրական պատկեր)	— 15
13.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ»	— 03
14.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՄԻԿԱՍԻ ԵԶԸ»	— 03
15.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ԵԶԻԳ ՍՊ.ՁԻԿԻ»	— 05
16.	ՆՈՅՆԸ. — «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	— 03
17.	ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	— 15
18.	ԲԱԼԱՊ.ԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ. — «ՄԻԿՐՈԲՆԵՐԸ»	— 10
19.	ՄԱՆՈՒԵԼ.ԵԱՆՅ, Լ.ԵՒՈՆ. — «ՀԱՅԱԲՆԵՐԻ ԱՐԵԱՒԱՆՔԸ» (պատկերներ ուռա-տաճկական պատերազմի ժամանակից). — 10 Դիմել՝ ՅԵ Ռեգանցիո-յարկած ամսագրութեան պատուի մարդկան համար:	— 10

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արախիս և Լիանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

Քիւ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարւած հին եղիպատական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արմելքի հին պետութիւնների քարտէզով):

281 երես, յառաջարան եւ նիւթերի ցանկ

առողջ է 800 օրէնուէ, գոյշուն և զնուել վերայ

Վիճն է ճանապարհածախոսվ միասին 1 րուբլի

Պէտք է զիմել կամ հեղինակին՝ Տիֆլիս, վե րէակցիո ժурнаլա „ՄՈՐՉԵ“, և կամ՝ ԲԵ պետրական գրադարաններին անումը է 20% զեջում:

Ա. ԲԱՐԵԿՈՒՐԱԿԱՆԻ ՏՊԱՐԱՆԻՑ

Պատիւ ունինք յայտնելու, որ մօտ ապագայում լնդաձակելու ենք մեր տպարանը և այդ նպատակով տեղափոխել ենք ուրիշ բնակարան։ Պատւէրները կը կատարւեն աւելի շուշ և նոյն մաքրութեամբ, ինչպէս մինչև այժմ։

Նախահաշիւները ուղարկւում են անդապազ:

Խնդրում ենք այն պարոններին, որոնք մեզ հետ թղթակցութիւն ունին, թո՛ղ բարեհանեն այսուհետեւ զիմել մեզ հետեւ և հասցեով. Մոսկվա. Մասնիցկայ, ճ. իալթանիկով Անանովա, տիպոգրաֆիա Մ. Բարխդարյան.

„Тифлисский Листокъ“

подписка на 1892 годъ

Газета „Тифлисский Листокъ“ будетъ выходить по прежнему ежедневно, исключая дней послѣпраздничныхъ.

Малый форматъ газеты лишалъ редакцію возможности не только періодически знакомить своихъ читателей съ выдающимися событиями русской и иностранной жизни, но она не могла даже помѣщать ежедневно весь материалъ, относящейся къ мѣстному отдельу.

Съ цѣлью дать больше материала для чтенія, газета съ начала декабря мѣсяца будетъ печататься на бумагѣ средняго листа, въ пять колоннъ.

Съ увеличеніемъ формата „Тифлисский Листокъ“ ежедневно будетъ имѣть всѣ отдѣлы ежедневныхъ газетъ.

Редакція по прежнему направитъ всѣ усиленія къ развитию отдѣла о мѣстныхъ злобахъ дня и о выдающихся событияхъ общественной жизни Кавказа.

Подписанная цѣна:

Съ доставкою въ Тифлисъ:

На годъ	5 р.
„ полгода	3 .
„ 3 мѣсяца	1 , 75 к.

Съ пересылкой для иного-
родныхъ:

На годъ	6 р
„ полгода	3 . 50 к.
„ 3 мѣсяца	2 .

Объявленія принимаются для Россіи и заграничныхъ исключительно въ центральной конторѣ объявленій быв. Метцль, въ Москвѣ.

Редакція и контора помѣщаются: въ Тифлисѣ, на Головинскомъ проспектѣ, въ домѣ Ротипова.

Редакторъ-издатель Х. Г. Хачатуровъ.

открыта подписка на 1892 г.

на ежемесячный иллюстрированный журнал

„ВѢСТНИКЪ ВИНОДѢЛЯ“

Задача журнала „Вѣстникъ Винодѣлія“ распространять среди винодѣльческаго населения Россіи специальная кнологическая свѣдѣнія и содѣйствовать тѣмъ развитию виноградарства, поднятію винодѣлія и правильной постановкѣ виноторговли. Для достиженія намѣченной цѣли редакція заручилась сотрудничествомъ выдающихся иностранныхъ и русскихъ ученыхъ, виноградарей и винодѣловъ.

Программа журнала: 1) виноградарство, 2) американскія лозы и гибриды, 3) болѣзни винограда и ихъ лечение, 4) филоксера и борьба съ нею, 5) винодѣліе и погребное хозяйство, 6) побочные продукты винодѣлія и утилизациѣ ихъ, 7) фальсификація вина, 8) обзоръ иностранной винодѣльческой литературы, 9) хроника (корреспонденціи, доклады, статистическая данныя и разныя другія свѣдѣнія, касающіяся виноградарства и винодѣлія въ Россіи и заграницею), 10) учебныя заведенія, опытныя станціи и курсы по виноградарству и винодѣлію, 11) плодовое и ягодное винодѣліе, 12) правительственные постановленія, касающіяся виноградарства, винодѣлія и виноторговли, 13) библіографія, 14) вопросы и отвѣты, и 15) объявленія.

Редакція проситъ лицъ, занимающихся культурою винограда и погребнымъ хозяйствомъ, сообщать ей результаты своихъ отытковъ и наблюдений, а также свѣдѣнія о положеніи и нукахъ иѣстнаго виноградарства и винодѣлія.

„Вѣстникъ Винодѣлія“ будетъ выходить ежемесячно, безъ предварительной цензуры, книжками въ размѣрѣ четырехъ печатныхъ листовъ, съ рисунками въ текстѣ.

Подписная цѣна журнала „Вѣстникъ Винодѣлія“

Безъ пересылки и доставки.	Съ пересылкою и доставкою.	Съ пересылкою за границу.
----------------------------	----------------------------	---------------------------

На годъ . . . 5 руб	0 руб. — коп.	7 руб.
На полгода . . 3 „	3 „ 50 "	4 "

Черезъ контору редакціи можно выписывать, по цѣнамъ книжныхъ магазиновъ, всякаго рода книги, какъ русскія, такъ и иностранныя. На пересылку слѣдуетъ прилагать 10%, со стоимости заказа.

Иногородные адресуются: въ редакцію журнала „Вѣстникъ Винодѣлія“, С.-Петербургъ, Екатеринскій каналъ, № 71.

Редактаръ-издатель Василий Таировъ.

«Թիֆլիզի Ընկերութեան Հայոց գրքերի հրատարակութեան» խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրութեան համար լնդունում են հետևեալ բովանդակութեան ինքնուրոյն և թարգմանական գրւածքներ.

1. Գեղարւեստական:

2. Գիտնական. զուտ գիտնական գրւածքներից կը տպագրւ են միայն անպիսիները, որոնք վերաբերում են Հայոց կեանքի հետազոտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից միայն ժողովրդականացրած գրքեր:

3. Վասագրքեր, նամանաւանդ լնդհանուր գրականութեան, լնդհանուր պատմութեան, Հայոց գրականութեան, բնական պատմութեան և Փիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական գըտրոցների համար:

4. Մանկական լնդերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ու սումնասիրութեան վերաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Ծանօթութիւն. մանրամասն ծրագիր վերցիշեալ նիւթերի ժողովելու համար կը տպագրւի յետոյն: Ընկերութեանս խմբ. մասնաժողովը իրան է վերապահում՝ ներկայացրած նիւթերից լնդութիւն և քաղւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ դնում:

Տպագրւած գրքերի համար վարձատրութիւն տրւում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրւածքների համար՝ 20—25 ռ., իսկ թարգմանական գրւածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ գէպքերում վարձատրութիւնը կարող է և առելի լինել խմբ. մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Տիֆլիսъ, Правлению Тифлисского Общества издания армянскихъ книгъ.

Թիվիլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը յայտնում է սրանով, որ ընկերութեան 1891թ. անդամները կարող են ստանալ Կենտրոնական գրավաճառանոցից Ընկերութեան հետեւալ հրատարակութիւնները:

1. Տղառոյ. - «Աստուած զիտէ արգարն ու մեզաւորը»;
 2. Վալդնէր - «Հաւատարիմ Սաւիարին»;
 3. Պէտալոցի. - «Ճնշարդ և Գերարուդ»;
 4. «Նալ և Դամալիանուի»;
 5. Խօզընհայն. - «Նաւի փոքրաւորը»;
 6. Սպիրի. - «Ռւսենց Յովսէփ» թարգմ. ի. 2. զինն է 15 կ.:
 7. Պարոնեան՝ «Մեծապատիւ Մուրացկանները», զինն է 40 կ.:
- Ընկերութեան անդամներն այդ գրքերը կարող են ստանալ Կենտրոնական գրավաճառանոցից, ներկացացնելով իրանց անորորագրերը:

Թիֆլիսի ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. ՎԱՐՉՈՒ-
ԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ այսուհետեւ ընկերութեանս հետ
զործ ունեցողները կարող են զիմել ընկերութեանս գրասենեակը
(Քարոնսկալիս փողոց առևն Սահակեանի) որ բաց է ամեն օր առ.
12—2 ժամը:

1892թ. յունարից լոյս կը տեսնէ Մոսկւայում պ. Մ. Բարխուդա-
րեանի տպարանից

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

Բաժանորդագինն է երկու հասորին միասին 2 րուբլի, իսկ իւրաքան-
չեւը հասորի զինն է 1 ր. 50 կոսդէկ:

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆՑ.

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԵ

Մաքոնիայում (Գերմանիա)

ԴՐԵԿՏՈՐ՝ ՎԵՑՑԵԼ

ՄԱՐԿԵՆԱԿԱՆ ՀԵՂԵԿԱՆ ԴՊՐՈՑ. - ԱՐՀԵԱՏԱՆԱՅՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

23-ԵՐԱՐԴ ՏԱՐԾ

Այս գպրոցը, որը գտնվում է Միտվադէ քաղաքում, Գերմանիակ և, (թագավորութիւն Արքոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն Մէթենական շինուազն և գորա ամենամօս առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեկաբուժութիւնիկ և ջրաղացների շինութիւն:

Միտաւմական ուսումնական այդ հիմնարկութիւնը պատրաստում է, հետեւալ մասնագիտութիւնների համար.

1. Խնդեներներ և կօնսարուկատորներ՝ մեքենաներ շինելու, ելեկաբուժութիւնիկի և ջրաղացներ շինելու համար:

2. Ապագակ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց սպառադրեալների չափ պէտք է հասկացաղութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, որ հարկաւում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փափանիւթերի գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախալի, շաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասինների, քիմիական գործարաններ, գաղի, լուցկի գործարաններ և այլն և այլն:

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար լիչւած գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ լույր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւակ ապրիլի և հոկտեմբերի կէսին:

Տեխնիկական առաջին դպրոցում, նույն աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է $2\frac{1}{2}$ կամ 3 տարի, երկրորդ դըպրոցում $1\frac{1}{2}$ տարի:

ՏԱՐԻՔԸ բնգունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Աղջ 18⁸⁹/₉₀ թւականին լույր աշակերտողների թիւն է 886, որոնցից Պուստասասնից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է զիմել՝ «ՄՈՒՐՈ» Ա.Մ.Ս.Ա.Դ.Բ. ԽՄԲԱ.Գ.ԲԱՏՈՒՆԸ, որ ի միջի ազոց կարելի է խմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվադէի կետնքի և դըպրոցի վարչութեան պահանջմունքների մասին:



ՄՈՒՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Է

Տարեկան գիւղ է 10 դ.

Բաժանորդագրութեան համար զիմուլ՝

ԽՄԲԱԳՐԱՑՈՒՅԹ. { Тифлисъ. Въ редакцію журнала „МУРДЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTOH“.

Կամ մեր զործակալութիւններին՝

Թիֆլիս. — Եկամուտնական զրավաճառանոց:

» ալ. Յովհաննէս Թումանց, Ախոնի փողոց № 27:

ԲԱԹՈՒ. — ալ. Աւետիք Գայութեանց (Մարգար. լինկ. բնօւրդարան):

» ալ. Սահման Առևլիսնեանց („Надежда“ լինկ., Набережная,
домъ Шагерданова).

ԲԱԹՈՒ. — ալ. Մարգիս Մակարեանց (զրաս. եղբ. Յովիանների):

ԵՐԵՒԱՆ. — ալ. Սիրական Տէր-Մարտիրոսիանցի զրաւնեակ:

ԱԳԹՈՒ. — ալ. Սահման Սրամաննեանց:

ՄՈՍԿՎԱ. — ալ. Վարդան Թումաննեանց (Чистые Пруды д. Тупицына,
զրաս. եղբ. Ա. Թումաննեանց):

» ալ. Սահման Վարդակարեանց, (Ե. Харитоньевский, № 6):

ՕՊԵՍՍ. — ալ. Միքայէլ Մուրագեանց (զրաս. եղբ. Յովիանների):

ԹԱԼԻԹԻԶ. — ալ. Աստուր ը-ըէկ Միքայէլեանց:

ԶՄԻՒՐՆԵԱ. — ալ. Յ. Տէր-Միրաքեանց (Մելքոն. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — ալ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսիանցին:

ԽՄԲԱԳՐԱՑՈՒՅԹ. զամանում է Թիֆլիս, Վելամինեան վողոց, առև. № 8: